Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ

2012 թ. III եռամսյակ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Ջոն Պաուլին

Բովանդակություն

Դաս 1	30.06-06.07	Ավետարանի մուտքը Թեսաղոնիկե	4
Դաս 2	07.07-13.07	Պահպանելով փոխհարաբերությունները	14
Դաս 3	14.07-20.07	Թեսաղոնիկեն Պողոսի օրերում	24
Դաս 4	21.07-27.07	Ուրախ և երախտապարտ	34
Դաս 5	28.07-03.08	Առաքյալի օրինակը	43
Դաս 6	04.08-10.08	Ընդմիշտ ընկերներ	53
Դաս 7	11.08-17.08	Սրբության մեջ ապրելով	62
Դաս 8	18.08-24.08	Քրիստոսում մեռածները	72
Դաս 9	25.08-31.08	Եզրափակիչ իրադարձություններ	82
Դաս 10	01.09-07.09	Եկեղեցական կյանք	92
Դաս 11	08.09-14.09	Խոստումներ հալածվողների համար	101
Դաս 12	15.09-21.09	Հակաքրիստոսը	111
Դաս 13	22.09-28.09	Պահպանելով հավատարմությունը Եկեղեցուն	120

ԵՐԵՎԱՆ
2012

ԵՐԲ ՏԵՐԸ ԵՐԿՆՔԻՑ ԻՋՆԻ

1969 թվականին գրականության ասպարեզում Նոբելյան մրցանակն ստացավ «Սպասելով Գոդոյին» պատմվածքի հեղինակ՝ իռլանդացի գրող Սեմուել Բեկկետը: Այնտեղ պատմվում է երկու անօգնական, անտուն տղամարդկանց՝ Էստրագոնի և Վլադիմիրի մասին, ովքեր ճամփեզրին սպասում էին ոմն Գոդոյին, ով պետք է գար և փրկեր նրանց կյանքի անիմաստությունից և անհեթեթությունից:

- Նրա անունը Գոդո՞ է - հարցնում է Էստրագոնը:

- Այո, - պատասխանում է Վլադիմիրը:

Այն ժամանակ, երբ Վլադիմիրը և Էստրագոնը կանգնած են, անիրական հույսեր կապելով Գոդոյի գալուստի հետ, նրանց կողքով հերթով անցնում են մարդկային տառապանքները և սխալները: Սակայն անտունները հյուծված էին ոչ այնքան կյանքի դառնությունից, որքան դրա անօգուտ լինելուց:

Խորհրդավոր Գոդոն այդպես էլ չի գալիս, ինչը նշանակում է, որ նրանք դատապարտված են: Իհարկե, այս պատմվածքում փրկություն չէր էլ ակնկալվում: Բեկկետի նպատակն էր ցույց տալ կյանքի անհեթեթությունը և անհույս լինելը:

Ինչպիսի՜ հակադրություն կյանքի հանդեպ աստվածաշնչյան տեսանկյան հետ: Մասնավորապես, ինչպիսի՜ հակադրություն այն դիրքորոշման հետ, որը Պողոս առաքյալը ներկայացնում է թեսաղոնիկեցիներին ուղղված երկու ուղերձներում, և որոնք մենք ընթացիկ եռամսյակի դասերում դիտարկելու ենք:

Բեկկետի հերոսների նման, թեսաղոնիկեցիները վերապրել էին սթրեսներ, լարվածություն, պայքար և հալածանք: Ինչպես նրանց, այնպես էլ մեր կյանքում եղել են դժվարություններ: Նրանք հեշտությամբ կարող էին նիհիլիզմի[1*] և հոռետեսության մեջ ընկնել, զգալ կյանքի ունայնությունը, որը Բեկկետը ցույց է տվել իր դրամայում: Սակայն, դրա փոխարեն, թեսաղոնիկեցիները հաստատուն հույս ձեռք բերեցին՝ հիմնված նրա վրա, ինչ նրանց համար կատարել էր Քրիստոսը, հույս, որը մատնանշում էր խոստումներից մեծագույնը՝ Քրիստոսի երկրորդ գալուստը: Թեև Պողոսը հանդիմանում էր թեսաղոնիկեցիներին, թեև նրանց եկեղեցում կային կարգապահության և աստվածաբանական խնդիրներ, սակայն, լինելով ոգեշնչված, նա գրեց նրանց համար հրաշալի, ոգևորիչ խոսքեր.

---

[*] Նիհիլիզմ - լիովին կասկածամիտ վերաբերմունք, ընդունված արժեքների, բարոյական ընդհանուր կանոնների բացառում:

«Որովհետև ինքը Տերը հրամանով հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից, և Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կառնեն, և հետո մենք, որ կենդանի ենք մնացած, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք Տիրոջը դիմավորելու: Եվ այնպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք: Ուրեմն իրար մխիթարեցեք այս խոսքերով» (Ա Թեսաղոնիկեցիս 4.15-17):

Չկա առավել վեհ և հուսադրող բան, այնպես չէ՞: Այս եռամսյակում ուսումնասիրելով թեսաղոնիկեցիներին ուղղված Պողոսի ուղերձները՝ մենք կնայենք վաղ քրիստոնեական եկեղեցու կյանքին, մեծ քաղաքի եկեղեցուն, և կտեսնենք որոշակի խնդիրներ և դժվարություններ, որոնց հետ այն բախվել է: Մենք կտեսնենք անհանգստություններ՝ առաջացած այն հանգամանքից, որ Քրիստոսը դեռ չի եկել: Թեև թեսաղոնիկեցիների կյանքը և ծառայությունն էապես տարբերվում էին մերից, Պողոսի ուղերձներում արտացոլված սկզբունքները պատասխանում են խնդիրներին և ապրումներին, որոնք ծանոթ են նաև մեզ, որ սպասում ենք ոչ թե ինչ-որ խորհրդավոր Գողդոյի, այլ Տեր Հիսուսին, ում առաջին գալուստի ժամանակ խաչի վրա կրած մահը Նրա փառավոր երկրորդ գալստյան երաշխիքն է:

Ջոն Պաուլին, Կալիֆորնիայի Լոմա Լինդա համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դեկան:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Գործք առաքելոց 16.9-40, 17.1-4, 12, Երեմիա 23.1-6, Եսայիա 9.1-7, 53, Հռոմեացիս 1.16:

Հիշելու համարը.

«Նրա համար էլ մենք անպակաս գոհանում ենք Աստծուց, որ դուք Աստծո քարոզության խոսքը մեզանից առած ընդունեցիք, ոչ թե իբր մարդկանց խոսք, այլ ինչպես որ ճշմարիտ է՝ Աստծո խոսք, որ և ներգործում է ձեզ՝ հավատացյալներումդ» (Ա Թեսաղոնիկեցիս 2.13):

Հիմնական միտքը.

Աստծո խոստումների հանդեպ մեր վստահությունը պետք է հիմնված լինի Նրա Սուրբ Գրքին վստահելու վրա:

Փողոցում երեցը նոր մկրտված մի կնոջ հետ էր զրուցում: Ի զարմանս նրա՝ կինն ասաց.

- Ես նորից պետք է մկրտվեմ:

Երբ երեցը հարցրեց, թե ինչու, նա պատասխանեց.

- Ես իմ անցյալի մասին ամեն բան չեմ պատմել հովվին:

Այսպես սկսվեց Քրիստոսի ներման մասին երկար զրույցը: Կինն ամբողջ սրտով ընդունեց այդ ներումը: Երբ երեցն ավարտեց նրա հետ իր աղոթքը, հորդառատ անձրև սկսվեց: Կնոջ դեմքն ուրախությունից փայլեց..

- Ես նորից եմ մկրտություն ընդունում:

Գթասիրտ Տերը հաճախ է կենդանի վկայություններ ուղարկում, ինչպիսին էր այդ անսպասելի անձրևը՝ հավատացյալներին հավաստիացնելու, որ նրանք Իր հետ խաղաղության մեջ են: Սակայն Աստծո հանդեպ մեր վստահությունն ավելի հաստատուն կդառնա, եթե հիմնվի Նրա Խոսքի հստակ վկայության վրա: Այս դասի մեջ մենք կտեսնենք, որ մարգարեության իրագործումը Թեսաղոնիկեի նորադարձներին հաստատուն դարձրեց:

Ավետարանչության գինը

Կարդացե՛ք Գործք առաքելոց 16.9-40-ը: Ինչո՞ւ փիլիպպեցիներն այդքան բացասաբար արձագանքեցին Ավետարանին: Մենք ինչպիսի՞ կարևոր սկզբունք կարող ենք գտնել նրանց արձագանքում, և ինչո՞ւ այն պետք է մեզ համար լուրջ նախազգուշացում դառնա: Նման բացասական արձագանքն ինչպե՞ս կարող է արտահայտվել նույնիսկ նրանց կյանքում, ովքեր բացահայտ կերպով քրիստոնեություն են դավանում: _

Ավետարանը Բարի լուր է Քրիստոսում կատարած Աստծո զորավոր գործերի մասին, որոնք տանում են ապաշխարության, ընդունման և վերափոխման (Հռոմեացիս 1.16,17): Մեղքի պատճառով ողջ աշխարհը դատապարտված էր, սակայն Հիսուսի մահվան և հարության շնորհիվ աշխարհին հնարավորություն տրվեց հավիտենական կյանք ձեռք բերել, որով Աստված ի սկզբանե ցանկանում էր մարդկությանն օժտել: Աստծո մեծ գործը կատարվեց հանուն մեզ, երբ մենք դեռ մեղավորներ էինք (Հռոմեացիս 5.8): Փրկագնման այդ աշխատանքը Հիսուսը կատարեց առանց մեր մասնակցության, և մենք ոչ մի բան չենք կարող ավելացնել դրան: Ոչ մի բան: Սակայն Ավետարանը մեր կյանքում իրական է դառնում միայն այն ժամանակ, երբ մենք Հիսուսին ընդունում ենք որպես անձնական Փրկիչ և ապրում ենք Նրա Խոսքի համաձայն: Եթե Ավետարանը անվճար տրվող բարի լուր է, ինչո՞ւ են ոմանք դիմադրում նրան կամ պայքարում նրա դեմ: Պատասխանը պարզ է. Ավետարանի ընդունումը մեզ դրդում է այլևս չվստահել մեր ուժերին կամ էլ ազդեցության այնպիսի աշխարհիկ գործոնների, ինչպիսիք են գումարը, իշխանությունը և արտաքին գրավչությունը: Գումարը, արտաքինը և իշխանությունը կարող են ծառայել բարուն, եթե Աստծո կամքին և Նրա ճանապարհներին են ենթարկվում: Սակայն եթե մարդիկ կառչում են այդ անկարևոր իրերին, ի դեմս Ավետարանի և դրա քարոզողների նրանք իրենց բարօրության հանդեպ սպառնալիք են տեսնում:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.1, 2-ը: Պողոսը և Շիղան Թեսաղոնիկե եկան ցավով, Փիլիպպեում բանտարկության և ծեծի արդյունքում նրանց մարմինների վրա կային վերքեր և կապտուկներ (Գործք առա-

քելոց 16.22-24): Սակայն աստվածային զորության նշանները (Գործք առաքելոց 16.26, 30, 36) քաջալերեցին նրանց: Նրանք համարձակ կերպով Թեսաղոնիկեի ժողովարանը մտան, և չնայելով ցավին՝ խոսեցին Մեսիայի մասին, ով փոխեց իրենց կյանքը և ուղարկեց Բարի լուրը քարոզել այնտեղ, որտեղ այն մինչ այդ չէր հնչել:

Ի՞նչը կարող է մեզ Տիրոջից հեռացնել, եթե մենք զգույշ չլինենք: Ինչո՞ւ է այդքան կարևոր, որպեսզի մեր մտքերի կենտրոնում Գողգոթայի խաչը լինի, երբ աշխարհիկ գայթակղությունները պաշարում են մեզ:

Երկուշաբթի *հուլիսի* **2**

Պողոսի քարոզչական ռազմավարությունը

Գործք առաքելոց 17.1-3-ում ի՞նչ է ասվում այն մասին, թե Թեսաղոնիկե քաղաքում որտե՞ղ, ե՞րբ և ինչպե՞ս իրականացվեց Պողոսի քարոզչական ռազմավարությունը: _____

_____

Թեև թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձը Պողոսի վաղ նամակների թվին է պատկանում, սակայն Թեսաղոնիկե ժամանելու պահին առաքյալի մոտ ավետարանչական ռազմավարությունն արդեն բավականին լավ էր զարգացած:

Պողոսի ավետարանչական ռազմավարության առաջին քայլը շաբաթ օրը ժողովարան այցելելն էր: Դա շատ բնական է, քանի որ ժողովարանում շաբաթ օրը կարելի էր շատ մարդկանց հանդիպել: Սակայն այստեղ դեր չխաղաց միայն ավետարանչական ռազմավարությունը: Պողոսը ժամանակ կգտներ ինչպես աղոթքի, այնպես էլ շաբաթ օրվա երկրպագության համար, նույնիսկ եթե չլինեին ո՛չ հրեաներ, ո՛չ էլ ժողովարաններ (տե՛ս Գործք առաքելոց 16.13):

Հրեաներն այդ ժամանակ հաճախ էին ժողովարաններում հյուրեր ընդունում՝ համայնքին խոսքով ծառայելու, հատկապես եթե նրանք Երուսաղեմից էին, ինչպես Պողոսը և Շիղան: Համայնքը ծարավի էր նորություններ լսել այլ քաղաքներում բնակվող հրեաների կյանքի մասին: Նրանք նաև հետաքրքրություն էին ցուցաբերում ցանկացած նոր գաղափարի հանդեպ, որոնք հյուրերը կարող էին նրանց առաջարկել որպես Սուրբ Գրքի իրենց ուսումնասիրության արդյունք: Այդ պատճառով Պողոսի ռազմավարությունը լիովին համընկավ ժողովարանում ծառայության կարգի հետ:

Այնուհետև, համաձայն իր ռազմավարության՝ Պողոսն իր քարոզը հիմնում է ունկնդիրներին լավ ծանոթ Հին Կտակարանի ճշմարտությունների վրա: Նա սկսեց Մեսիայի մասին թեմայով, որի նկատմամբ այն ժամանակվա հրեաները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում (Քրիստոս - հրեական «Մաշիախ» բառի հունական համարժեքը (Մեսիա) - տե՛ս Գործք առաքելոց 17.3):

Օգտագործելով Հին Կտակարանի տեքստերը՝ Պողոսը ցույց տվեց, որ Մեսիան սկզբում պետք է տառապեր և միայն դրանից հետո ձեռք բերեր փառքը, որի մասին հրեաները գիտեին: Այլ կերպ ասած, նա ցույց տվեց, որ Քրիստոսի առաքելության փառքը և համբավն ընդհանուր պատկերի միայն մի մասն է: Առաջին գալուստի ժամանակ Մեսիան պետք է տառապող Ծառա լիներ, այլ ոչ թե թագավորական Նվաճող:

Եվ, վերջապես, տեսանելի կերպով ունկնդիրներին ներկայացնելով մեսիական ընդհանուր պատկերը՝ Պողոսը պատմեց Հիսուսի մասին պատմությունը: Նա բացատրեց, թե ինչպես էր Հիսուսի կյանքը համապատասխանում հինկտակարանյան մագարեություններին, որոնց մասին հենց նոր պատմել էր: Իհարկե, Պողոսը պատմեց նաև անցյալում իր անձնական կասկածների, Հիսուսին չընդունելու, ինչպես նաև համբարձված Քրիստոսի հետ անձնական հանդիպման համոզիչ ուժի մասին: Ըստ Ղուկասի Ավետարանի (Ղուկաս 24.25-27, 44-46)՝ Թեսաղոնիկեում Պողոսի ավետարանչական ռազմավարությունն արտացոլում էր մոտեցումը, որը հարությունից հետո Հիսուսն օգտագործում էր իր Իր աշակերտներին խրատելիս:

Ուշադրություն դարձրե՛ք. Պողոսը ձգտում էր մարդկանց հասնել այնտեղ, որտեղ նրանք գտնվում էին, օգտագործելով նրանց լավ ծանոթ ճշմարտությունները: Ինչո՞ւ է այդ ռազմավարությունն այդքան արդյունավետ: Մտածե՛ք այն մարդկանց մասին, ում դուք կցանկանայիք փրկության բերել: Դուք ինչպե՞ս կարող եք ձեր ավետարանչությունն սկսել այնտեղ, որտեղ նրանք գտնվում են, այլ ոչ թե այնտեղ, որտեղ դուք եք գտնվում:

Երեքշաբթի ***հուլիսի 3***

Երկու հայացք Մեսիայի վրա

Հին ժամանակներից Հին Կտակարանն ընթերցողները նշմարում էին տարբեր ակնկալիքներ Մեսիային մատնանշող մարգարեությունների մեջ: Հրեաների մեծամասնությունը և առաջին քրիստոնյաները երկու

հիմնական գիծ էին առանձնացնում մեսիական մարգարեությունների մեջ: Մի կողմից, կան տեքստեր, որոնք մատնանշում են թագավորական Մեսիային, հաղթող Թագավորին, ով ժողովրդին արդարություն կբերի և Իսրայելի տիրապետությունը կտարածի մինչև աշխարհի ծայրը:

Մյուս կողմից, կան համարներ, որոնք Մեսիային նկարագրում են որպես անարգված և մերժված տառապող Ծառա: Շատ հավատացյալներ նույն սխալն էին թույլ տալիս, նրանք չէին հասկանում, որ բոլոր այդ տեքստերը վերաբերում են միևնույն Անձին, Նրա ծառայության տարբեր տեսանկյուններին տարբեր ժամանակահատվածներում:

Կարդացե՛ք Երեմիա 23.1-6, Եսայիա 9.1-7, 53.1-6, Զաքարիա 9.9-ը: Թվարկե՛ք ապագա Ազատագրողի բնութագրերը, որոնց այս տեքստերում հանդիպում եք: Ինչպիսի՞ «հակասական» կերպարներ դուք տեսաք: _____

_____

Այս տեքստերը շփոթեցնում էին մարդկանց, ովքեր խորհում էին Մեսիայի գալուստի մասին: Ավելին, թագավորող Մեսիային մատնանշող տեքստերում, որպես կանոն, նույնիսկ տառապանքի կամ ստորացման ակնարկ չկար, իսկ տառապող Ծառային նկարագրող տեքստերում Մեսիան գրեթե իշխանություն կամ աշխարհիկ հեղինակություն չուներ: Հիսուսի ժամանակներում ապրող հրեաները գտան այդ խնդրի լուծման իրենց տարբերակը: Նրանք համարեցին, որ տառապող Ծառան խորհրդանշում է Իսրայել ժողովրդին և նրա տառապանքը բաբելոնյան գերության և հռոմեացի զավթիչների ժամանակում: Այսպիսով, տվյալ տեքստերին մեսիական նշանակություն չտալով՝ շատ հրեաներ սպասում էին միայն թագավորական և հաղթող Մեսիային: Այդ Թագավորը Դավթի պես պետք է զավթիչներին տապալեր և Իսրայելին վերադարձներ իր տեղը ժողովուրդների մեջ: Ինչո՞ւ տառապող Ծառայի մասին տեքստերը չպետք է դիտարկել Մեսիայից կտրված: Որովհետև Հին Կտակարանում կան նշանակալից հատվածներ, որոնք իրենց մեջ միավորում են Նրա երկու բնութագրերը: Այդ հատվածները նույն Անձին են նկարագրում, թեև առաջին հայացքից այդքան էլ պարզ չէ՝ այդ բնութագրերը միասի՞ն են դրսևորվում, թե՞ փոխարինում են միմյանց:

Ինչպես երևում է Գործք առաքելոց 17.2, 3-ում, Պողոսը Թեսաղոնիկեի հրեաներին Հին Կտակարանի այդ մեսիական տեքստերը բերեց՝ նշելով նրանց ճշմարիտ իմաստը:

Հին ժամանակներում հրեաները չէին հասկանում, թե ինչպիսին պետք է լիներ Մեսիայի առաջին գալուստը: Այսօր շատ կեղծ գաղափարներ են հնչում Նրա երկրորդ գալուստի վերաբերյալ:

Դա մեզ ի՞նչ է ասում ջանքերի մասին, որ պետք է գործադրենք աստվածաշնչյան ճշմարտությունները ճիշտ ըմբռնելու համար: Ինչո՞ւ սխալ դավանանքը կարող է շատ խնդիրներ առաջացնել:

Չորեքշաբթի ***հուլիսի 4***

Փառքին նախորդում է տառապանքը

Հիսուսն ի սկզբանե գիտեր, որ Ինքը որպես Մեսիա պետք է տառապի և Իր փառքի մեջ մտնի (տե՛ս Ղուկաս 24.26, 46): Պողոսը Հին Կտակարանն ուսումնասիրել էր և նույնպես այդ մասին գիտեր: Ղուկաս 24.26,46-ում ասվում է, որ Քրիստոսը պետք է այս չարչարանքները քաշեր. դրանք նույն խոսքերն են, ինչ և Գործք առաքելոց 17.3-ում, որտեղ Պողոսն ընդգծում է, որ Մեսիան պետք է չարչարվեր: Հիսուսը և Պողոսը գիտեին, որ տառապանքը նախորդում է փառքին և որ այդ մասին մարգարեությունների մեջ ասվել է մինչ բուն իրադարձությունները: Այդ դեպքում հարց է առաջանում՝ Հին Կտակարանի ո՞ր տեքստերի հիման վրա Պողոսը եկավ նման եզրակացության:

Հավանաբար, նա ուշադրություն դարձրեց այն բանին, որ Հին Կտակարանի ամենաականավոր անձինք շատ երկար էին տառապում, մինչև որ նրանց կյանքում սկսվում էր փառքի ժամանակաշրջանը: Հովսեփը տասներեք տարի անցկացրեց բանտում, և միայն դրանից հետո գրավեց Եգիպտոսի վարչապետի պաշտոնը: Մովսեսն անապատում քառասուն տարի ոչխարներ արածեցրեց, մինչև Ելքի զորեղ հրամանատարը դարձավ: Դավիթը շատ տարիներ անցկացրեց փախուստի մեջ, որոշ ժամանակ թաքնվում էր ուրիշ երկրներում, մինչ գահ կբարձրանար: Դանիելը, մինչև Բաբելոնի վարչապետի պաշտոնն զբաղեցնելը, պատերազմի գերին էր և անգամ մահվան էր դատապարտված: Աստծո ծառաների մասին այս հինկտակարանյան պատմությունները Մեսիայի նախանշաններն էին, ով նույնպես պետք է տառապեր և անարգանք կրեր, մինչև թագավորական վեհությանը կհասներ:

Այդ տեքստերի գագաթնակետն են հանդիսանում Նոր Կտակարանում հաճախ մեջբերվող հինկտակարանյան Եսայիա 53-ի համարները: Ըստ Եսայիայի, տառապող Ծառան արհամարհված է, մերժված, ցավերին տեղյակ (հ. 2-4): Զոհաբերվող գառան պես Նա մեր մեղքերի փոխարեն մեռավ (հ. 5-7), քանի որ Տիրոջը դա էր հաճո (հ. 8-10): Սակայն «Իր անձի աշխատությունը» կատարելով (հ. 11), Նա շատերին կարդարացնի և մեծ ժառանգություն կստանա (հ.12):Նոր Կտակարանի հեղինակների

համար Եսայիա մարգարեի 53-րդ գլուխը բանալի դարձավ Մեսիայի դերը հասկանալու համար: Շատ հնարավոր է, որ Թեսաղոնիկեում Պողոսի քարոզն այդ գլխի հիման վրա էր: Ըստ Եսայիա 53-ի՝ Մեսիան Իր առաջին գալուստի ժամանակ չէր կարող զորեղ Թագավոր լինել: Ավելին, Նա Իր իսկ ժողովրդի ներկայացուցիչներից շատերի կողմից մերժվելու էր: Սակայն այդ մերժումը պետք է դառնար Մեսիայի փառքի սկիզբը, Ում սպասում էին հրեաները: Այդ ամենը հաշվի առնելով՝ Պողոսը կարողացավ ցույց տալ, որ Հիսուսը, ում նա ճանաչեց, իսկապես այն Մեսիան էր, ում գալուստը կանխագուշակել էր Հին Կտակարանը:

Աղոթքով կարդացե՛ք Եսայիա 53-ը՝ հիշելով, որ Տերը՝ մեր Արարիչը, այդ ամենի միջով անցավ, որպեսզի անձամբ դուք կարողանաք հավիտենական կյանք ունենալ: Այդ ճշմարտությունն ինչպե՞ս է ևս մեկ անգամ համոզում նրանում, որ մեր կյանքում Քրիստոսին պետք է դնել առաջին տեղում:

Հինգշաբթի ***հուլիսի 5***

Եկեղեցու ծնունդը

Ըստ Գործք առաքելոց 17.1-4,12-ի՝ ինչպիսի՞ մարդիկ էին կազմում Թեսաղոնիկեի եկեղեցու կորիզը:

Պողոսի ավետարանչական ռազմավարության մասն էր ավետարանումը «սկզբում՝ հրեային, հետո՝ հույնին» (Հռոմեացիս 1.16): Պողոսի ծառայության ժամանակ հրեաները բազմիցս ստացան Ավետարանն առաջինը լսելու և ընդունելու առավելությունը: Համաձայն Աստվածաշնչի՝ Պողոսի ժամանակներում շատ հրեաներ Հիսուսին իսկապես ընդունեցին որպես Մեսիա: Ավելի ուշ, երբ եկեղեցին սկսեց նահանջել ճշմարտությունից և օրենքը մերժեց, հատկապես՝ շաբաթը, հրեաների համար ավելի ու ավելի դժվար էր Հիսուսին որպես իրենց Մեսիա ընդունել, քանի որ, վերջիվերջո, Մեսիան ինչպե՞ս կարող է վերացնել օրենքը, հատկապես՝ շաբաթը:

Ինչպես երևում է վերը նշված համարներից, որոշ թեսաղոնիկեցի հրեաներ համոզվեցին Պողոսի խոսքերում, ով Հիսուսի պատմությունը կապում էր մեսիական տեքստերի հետ: Այդպիսիներից մեկն էր Արիստարքոսը, ով հետագայում դարձավ Պողոսի գործակիցը և նույնիսկ նրա հետ միասին հայտնվեց բանտում (Կողոսացիս 4.10,11, Գործք առաքելոց 20.4): Թեսաղոնիկեի այլ բնակիչ Յասոնը, հավանաբար, բավականին հարուստ մարդ էր: Նա համայնքն իր տանը հյուրընկա-

լեց, երբ հավատացյալներն այլևս չէին կարող ժողովարանում հավաքվել, ինպես նաև արեց հնարավոր ամեն ինչ, որպեսզի կանխի Պողոսի ձերբակալությունը (Գործք առաքելոց 17.4-9):

Երբ խոսքը Աստծուն պատվող հույների մասին է (Գործք առաքելոց 17.4), սովորաբար նկատի են առնվում հեթանոսները, ովքեր հիացած էին հուդայականությամբ, այցելում էին ժողովարան, սակայն հուդայականությանը չէին դարձել: Պողոսի օրոք նման մարդիկ շատ էին: Պողոսի համար նրանք դարձան բնական կամուրջ, որի օգնությամբ նա ձգտում էր հասնել այն հեթանոսներին, ովքեր ծանոթ չէին հրեական կրոնին և Հին կտակարանին:

Թեսաղոնիկեում նոր ծնունդ առնող եկեղեցու հրեաների թվի շատության մասին տեղեկությունը, ինչպես նաև նրա եկեղեցու անդամների հարաբերական բարեկեցության մասին մենք գտնում ենք Գործք առաքելոց 17-ում (տե՛ս, օրինակ, հ. 12), որտեղ ասված է, որ «պատվավոր» հույները նույնպես հավատացին: Սակայն ակնհայտ է, որ թեսաղոնիկեցիներին գրված առաջին ուղերձի ժամանակ եկեղեցին հիմնականում կազմված էր հեթանոսներից (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 1.9), ովքեր ծագում էին բանվոր դասակարգից (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 4.11):

Այստեղ մենք տեսնում ենք Ավետարանի բազմակողմանի բնությունը. այն սահմանված է բոլոր մարդկանց, բոլոր դասակարգերի, բոլոր ռասաների մարդկանց համար, այժմ արդեն նշանակություն չունի՝ հարուստ ես, թե աղքատ, հրեա, թե հույն. Քրիստոսը մեռավ ողջ աշխարհի համար: Այդ պատճառով մենք՝ Յոթերորդ Օրվա ադվենտիստներս, տանում ենք լուրը ողջ աշխարհին (Հայտնություն 14.6)՝ չդնելով ոչ մի բացառություն էթնիկ, ազգային, կաստային պատկանելիության կամ տընտեսական վիճակի վրա: Որքան կարևոր է, որ մենք մշտապես հիշենք այդ հանձնարարության մասին, չդառնանք ինքնամփոփ, կենտրոնացած ինքներս մեզ վրա և ավելի հետաքրքրված՝ պահպանելու այն ամենը, ինչը մենք ունենք, քան նրա, որ մեր հարմարավետության սահմաններն անցնենք, որոնք, հնարավոր է, մենք ենթագիտակցորեն սահմանել ենք մեզ համար:

Ուրբաթ ***հուլիսի 6***

Հետագա ուսումնասիրության համար

«Պողոսի օրերից մինչև ներկա ժամանակները Աստված Իր Սուրբ Հոգով կանչում է և՛ հրեաներին, և՛ հեթանոսներին: «Աստծո

մոտ աչառություն չկա»,- պնդում էր Պողոսը: Առաքյալը համարում էր, որ ինքը «պարտական է և՛ հույներին, և՛ բարբարոսներին» հավասարապես, ինչպես և հրեաներին, սակայն նա երբեք չէր մոռանում այն անհերքելի առավելությունների մասին, որոնք հրեաներն ուրիշների հանդեպ ունեին, «հենց նա, որ Աստծո պատգամները նրանց հավատացվեցին»: «Ավետարանը, - գրում էր նա, - Աստծո զորությունն է փրկելու համար ամեն հավատացողին, առաջ հրեային, և հետո՝ հույնին» (է.Ուայթ, Գործք առաքելոց, 380):

«Թեսաղոնիկեցիներին ավետարանելով՝ Պողոսը վկայակոչում էր Մեսիայի մասին հինկտակարանյան մարգարեությունները... Մովսեսի և մարգարեների ոգեշնչված վկայությունների օգնությամբ նա, անկասկած, ապացուցում էր, որ Նազովրեցի Հիսուսը Մեսիան է, և որ Ադամի օրերից Քրիստոսի ձայնը խոսել է նահապետների և մարգարեների միջոցով» (նույն տեղը, 221, 222: Ուշադրություն դարձրեք հինկտակարանյան համարների մեծ ցանկին 222-229 էջերում): «Երբ Ավետարանի քարոզչությունը մոտենա ավարտին, անհրաժեշտ կլինի ուշադրություն դարձնել մարդկանց, ում առաջ չէին նկատում, և Աստված հույս ունի, որ Իր լրաբերներն առանձնահատուկ ուշադրություն կդրսևորեն աշխարհի բոլոր մասերում բնակվող հրեա ժողովրդի հանդեպ... Երբ նրանք տեսնեն նորկտակարանյան Քրիստոսին հինկտակարանյան գրերի էջերում, երբ հասկանան, թե որքան պարզ է Նոր կտակարանը բացատրում Հին կտակարանը, նրանց քնած հոգին կարթնանա, և նրանք Քրիստոսին կճանաչեն որպես աշխարհի Փրկիչ: Շատերը հավատով Քրիստոսին կընդունեն որպես անձնական Փրկիչ» (նույն տեղը, 381):

Հարցեր քննարկման համար

1. Այն ժամանակվա հրեաների նկատմամբ Պողոսի մոտեցումը հիմնվում էր Հին կտակարանի մեսիական մարգարեությունների վրա: Այսօրվա հրեաների հետ աշխատանքում նման մոտեցումը որքանո՞վ կարող է արդյունավետ լինել, հատկապես աշխարհիկ հրեաների, ովքեր հավանաբար անգամ ծանոթ չեն Հին կտակարանի մարգարեություններին: Ինչպիսի՞ ժամանակակից մեթոդներ է պետք դիտարկել աշխարհիկ հրեաների, ինչպես և չվերածնված այլ մարդկանց խմբերի հետ աշխատանքում:
2. Ինչպե՞ս կարելի է աստվածաշնչյան մարգարեություններն ավելի հասկանալի և մոտ դարձնել ձեր ընկերներին, հարևաններին: Ինչպիսի՞

մոտեցում դուք կարող եք կիրառել այն մարդկանց հանդեպ, ովքեր չեն ընդունում Աստվածաշնչի հեղինակությունը: Օրինակ, Դանիելի 2-րդ մարգարեական գլուխն ինչպե՞ս կարող է անհավատ մարդուն օգնել, որպեսզի նա սկսի վստահել Աստվածաշնչին՝ որպես Աստծո Խոսքի:

Վերջաբան

Մեր ձեռնարկի առաջին դասում դիտարկվեցին մի շարք կարևոր հարցեր: Մնացածից առավել, մենք պետք է գիտակցենք Աստծո Խոսքի կարևորությունը մեր կյանքում, մեր առաքելության և վկայության մեջ: Մենք պետք է ամրանանք Աստվածաշնչի և այն ճշմարտությունների մեջ, որոնք նա սովորեցնում է: Դա անհրաժեշտ է ոչ միայն մեր հոգևոր զարգացման, այլև մեր վկայության առավելագույն արդյունավետության համար:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Գործք առաքելոց 17.5-34, Ա Կորնթացիս 1.18-2.2, Ա Թեսաղոնիկեցիս 2.17-3.10:

Հիշելու համարը.

«Որովհետև ո՞վ է մեր հույսը կամ ուրախությունը կամ պարծանքի պսակը, եթե ոչ դուք Տերում մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջին նրա գալու ժամանակ: Քանի որ դուք եք մեր փառքը և ուրախությունը» (Ա Թեսաղոնիկեցիս 2.19,20):

Հիմնական միտքը.

Ճշմարիտ ավետարանչությունը տանում է փոխհարաբերություններին, որոնք կարող են անցնել ժամանակի փորձությունը և տևել ողջ հավիտենություն:

Երեք շաբաթ շարունակ Պողոսն ավետարանչական հանդիպումներ անցկացրեց Թեսաղոնիկեում: Դա գրավիչ քարոզների շարք էր, սակայն դրանք հանդիպեցին տեղական կրոնական իշխանությունների և թշնամաբար տրամադրված այլ մարդկանց հակազդեցությանը: Վերջիվերջո, քաղաքային խորհրդի որոշմամբ Պողոսին քաղաքից վտարեցին: Այդ որոշումը խոչընդոտում էր նաև նրա վերադարձին:

Տվյալ դասը դիտարկում է Թեսաղոնիկեում Պողոսի ավետարանչական ծառայության արդյունքը: Վերապրած փորձառությունից հետո Պողոսը կարող էր կենտրոնանալ իր ճանապարհին հանդիպած հակազդեցությունների և այլ դժվարությունների վրա: Սակայն, դրա փոխարեն, նա իր ողջ ուշադրությունն ուղղեց Թեսաղոնիկեում նոր քրիստոնեական համայնքի անդամների հետ փոխհարաբերությունների վրա: Պողոսը շատ էր տխրել, որ ստիպված եղավ այդքան հապճեպորեն Թեսաղոնիկեից հեռանալ: Նա գիտեր, որ շատ քիչ ժամանակ ուներ նորադարձներին կոփելու, հիասթափություններից և բացասական ազդեցությունից անխոցելի դարձնելու համար: Հնարավորություն չունենալով անձամբ նրանց հետ շփվելու՝ նա Սուրբ Հոգուց ոգեշնչվեց Թեսաղոնիկեի հավատացյալներին նամակ գրել: Այդ նամակները մտան Նոր

կտակարանի կանոնի մեջ և հայտնի են որպես թեսաղոնիկեցիներին ուղղված Առաջին և Երկրորդ ուղերձներ:

Միաշաբթի ***հուլիսի 8***

Դիմակայումը Թեսաղոնիկեում

Կարդացե՛ք Գործք առաքելոց 17.5-9-ը: Ո՞րն էր Պողոսի նկատմամբ հրեաների հակազդեցության գլխավոր դրդապատճառը: Ի՞նչ էին ասում ընդդիմախոսները՝ ձգտելով իշխանության ուշադրությունը հրավիրել այդ գործի վրա: Ինչպե՞ս արձագանքեցին քաղաքի իշխանությունները: _____

_____

_____

_____

Երբ որևէ մեկը նոր ուսմունք է քարոզում, և մարդիկ դրա հանդեպ հետաքրքրություն են դրսևորում, որպես կանոն, դա կրոնական այլ խմբերի ղեկավարների և ուսուցիչների մոտ նախանձ է առաջացնում: Այն ուշադրությունը, որն առաջ այդ ղեկավարներին էր նվիրվում, այժմ ուղղվում է ուրիշների վրա: Փորձելով չեզոքացնել նոր ուսուցչի ազդեցությունը՝ նրանք կարող են իրենց այդքան էլ խելամիտ կերպով չպահել:

Ըստ հռոմեացի պատմաբան Պուբլիոս Կոռնելիոս Տակիտոսի՝ Գործք առաքելոց 17-րդ գլխում նկարագրված իրադարձություններից ոչ շատ առաջ, հռոմեացի հրեաների և պատմաբանի կողմից Քրեստուս («Chrestus») անվանված մարդու միջև ընդհարում տեղի ունեցավ: Հավանաբար, այդ անունն արտացոլում է հռոմեացիների կողմից հրեական Մեսիայի (հունարեն - «Քրիստոս») հայեցակարգի անըմբռնողությունը: Ակնհայտ է, որ ինչ-որ մեկի կողմից Ավետարանի քարոզը պառակտել է հռոմեացի հրեաների համայնքը:

Մեսիայի մասին խոսակցությունները հռոմեական իշխանությունների համար հնչում էին որպես նոր տիրակալի պատրաստում՝ հռոմեական գահին բարձրացնելու համար (Գործք առաքելոց 17.7): Հնարավոր է, դա էր պատճառը, որ կայսրը բոլոր հրեաներին վտարեց մայրաքաղաքից (Գործք առաքելոց 18.2): Վտարվածներից ոմանք հիմնավորվեցին Թեսաղոնիկեում կամ այդ քաղաքով անցնելիս պատմեցին Հռոմում կատարված իրադարձությունների մասին: Քանի որ Ավետարանը լիովին փոխեց հռոմեացի հրեաների աշխարհը, Թեսաղոնիկեի

կրոնական առաջնորդները որոշեցին նման բան իրենց քաղաքում թույլ չտալ:

Թեսաղոնիկեն ղեկավարվում էր քաղաքի խորհրդի կողմից, որը, հավանաբար, կազմված էր համատեղ որոշումներ կայացնող հինգ կամ վեց «քաղաքագլուխներից»: Նման կազմակերպությունը թույլ էր տալիս որոշակի անկախություն ունենալ Հռոմից, ինչից նրանք չէին ցանկանում զրկվել: Այդ պատճառով, հաշվի առնելով բոլոր հանգամանքները՝ տվյալ դեպքում քաղաքի իշխանությունների գործելակերպը բավականին ուժեղ տպավորություն է թողնում: Հռոմում ոչ վաղ կատարված իրադարձությունների նմանությունը կարող էր հանգեցնել քրիստոնյաների ֆիզիկական պատժին: Սակայն քաղաքային իշխանությունները յուրօրինակ կերպով արձագանքեցին (հմտ. Գործք առաքելոց 16.22-40): Նրանք քրիստոնյաներից զգալի գումար վերցրին՝ որպես որոշակի երաշխիք, որ նրանք հետագա անկարգությունների պատճառ չեն դառնա, և բոլորին արձակեցին:

Խանդը և նախանձը կարող են մարդուն ոչնչացնել: Մենք ի՞նչ կարող ենք սովորել Հիսուսի կյանքից և խրատներից, որպեսզի հաղթանակ տանենք այդ մահաբեր զգացումների հանդեպ:

Երկուշաբթի ***հուլիսի 9***

Իրադարձությունները Բերիայում

Հետապնդում կարող է սկսվել մի քանի պատճառներով: Այն հաճախ հրահրվում է չար զրպարտանքով նրանց նկատմամբ, ովքեր ոչ մի վատ բան չեն արել: Սակայն երբեմն այն կարող է հավատացյալների սխալ գործողությունների հետևանք լինել (Ա Պետրոս 3.13-16, 4.12-16): Շատ հնարավոր է, որ Թեսաղոնիկեում անկարգությունները հրահրվել են ոչ միայն Պողոսի ընդդիմախոսների նախանձախնդրության, այլ նաև նորադարձների սխալ գործողությունների արդյունքում: Թեսաղոնիկեցիներին ուղղված երկու նամակները վկայում են, որ Պողոսն անհանգստացած էր եկեղեցու որոշ անդամների վարքագծով: Պողոսը հորդորում էր թեսաղոնիկեցի քրիստոնյաներին խաղաղ ապրել և «պարկեշտությունով» վարվել հեթանոս հարևանների մեջ (Ա Թեսաղոնիկեցիս 4.11,12): Նա զգուշացնում էր իրենց մեջ գտնվող անկարգներին (Ա Թեսաղոնիկեցիս 5.14), պատվիրում էր համայնքում խուսափել նրանցից, ովքեր իրենց սխալ էին պահում (Բ Թեսաղոնիկեցիս 3.6,7):

Առաքյալը նաև նկատում է, որ եկեղեցու որոշ անդամներ անպարկեշտ են վարվում, ոչինչ չեն անում և խառնաշփոթ ստեղծում (Բ Թեսաղոնիկեցիս 3.11): Այսպիսով, համայնքի որոշ անդամներ ոչ միայն խնդրահարույց էին եկեղեցու համար, այլև հասարակությանն էին անհանգստություն պատճառում: Թեսաղոնիկեում եկեղեցին հետապնդող, չարացած մարդիկ քիչ չէին, սակայն որոշ նորադարձ քրիստոնյաների վարքը նախատինքի էր արժանի:

Թեսաղոնիկեի և Բերիայի իրավիճակները ինչո՞վ էին տարբերվում միմյանցից: Տե՛ս Գործք առաքելոց 17.10-15: Ինչի՞ մասին է վկայում այդ տարբերությունը: _____

_____

Բերիայի բնակիչները ցանկանում էին ավելի շատ իմանալ Աստծո մասին և ավելի լավ հասկանալ Սուրբ Գիրքը: Խանդավառված լսելով՝ նրանք առաքյալների խոսքերը ստուգում էին՝ ինքնուրույն ուսումնասիրելով Հին կտակարանը:

Դա մեզ համար օրինակ է: Մենք կարող ենք բաց լինել նոր գաղափարների համար, սակայն, միևնույն ժամանակ, հիմնվելով աստվածաշնչյան ուսմունքի վրա, պետք է ստուգենք դրանք: Մենք շատ բան պետք է սովորենք, և շատ բաներից հետ վարժվենք: Միևնույն ժամանակ, պետք է ձգտել մոլորություններից խուսափել, քանի որ դրանք մեզ հեռացնում են ճշմարտությունից:

Թեպետև Պողոսի թեսաղոնիկեցի ընդդիմախոսները շուտով հայտնվեցին Բերիայում, այնտեղ բնակվող հրեաները չթաքնվեցին նոր լուրից, ընդհակառակը, «նրանցից շատերը հավատացին» (հ. 12): Թեև Պողոսն ստիպված էր Աթենքը լքել, Շիղան և Տիմոթեոսը մնացին Բերիայում, որպեսզի նորադարձներին աջակցեն և հաստատեն:

Օրինակներ բերեք, երբ քրիստոնեական եկեղեցին տարբեր դարաշրջաններում բացահայտ կերպով սխալ էր գործում: Ինչպիսի՞ դասեր մենք կարող ենք քաղել այդ սխալներից: Ձեր պատասխաններով կիսվեք շաբաթ օրվա դասին:

Երեքշաբթի ***հուլիսի 10***

Իրադարձությունները Աթենքում

Ըստ Գործք առաքելոց 17.14-16-ի՝ Շիղան և Տիմոթեոսը Բերիայում մնացին, այն դեպքում, երբ Պողոսն Աթենք ուղևորվեց: Պողոսն իրեն ուղեկցող մարդկանց պատվիրեց Շիղային և Տիմոթեոսին փո-

խանցել, որպեսզի նրանք Աթենք՝ իր մոտ գան, սակայն ոչ մի տեղ չի հիշատակվում, որ նրանք կատարեցին այդ խնդրանքը: Մյուս կողմից, Ա Թեսաղոնիկեցիս 3.1,2-ում մենք կարդում ենք, որ Պողոսն Աթենքից Տիմոթեոսին Թեսաղոնիկե ուղարկեց: Ըստ դրա, կարելի է ենթադրել, որ Տիմոթեոսը կարճ ժամանակով Աթենք եկավ՝ Պողոսի մոտ:

Թեսաղոնիկեի հրեաների հետ (Գործք առաքելոց 17.2,3) Պողոսն սկսեց զրույցը Հին կտակարանում գրված Մեսիայի մասին: Ինչի՞ց է սկսում նա իր զրույցը Աթենքում հեթանոս փիլիսոփաների հետ: Գործք առաքելոց 17.16-34: Մենք ի՞նչ կարող ենք սովորել՝ ուսումնասիրելով այդ երկու տարբեր մոտեցումները: _____

_____

_____

Պողոսը հենց այնպես Աթենք չի գալիս, անմիջապես գնում է Արիսպագոսի (հայտնի է նաև որպես Մարսի բլուր) և փորձում այնտեղ հավաքված փիլիսոփաների մեջ հետաքրքրություն արթնացնել: Նա սկսում է քաղաքում կատարած զբոսանքի ժամանակ դիտումներից: Առաքյալը հետաքրքրություն է արթնացնում աթենացի հրեաների և տեղական ժողովարանի որոշ հույների մեջ: Բացի այդ, նրանց ավետարանելով իր համար սովորական ձևով (տե՛ս Գործք առաքելոց 17.2,3)՝ նա հնարավորություն է ստանում քաղաքում գերակշռող մշակույթի մասին պատկերացում կազմել: Ցանկացած ավետարանչական գործունեության մեջ առաջին քայլն է՝ լսել և իմանալ մարդկանց, հավատի և հայացքների մասին, ում դուք ցանկանում եք ավետարանել:

Պողոսը նաև Աթենքի շուկայի հրապարակում էր ժամանակ անցկացնում (այն գտնվում էր ներքևում և Մարսի բլուրից երևում էր)՝ խոսելով ցանկացած մարդու հետ, ով կկամենար զրուցել: Զրույցի ընթացքում առաքյալը որոշ փիլիսոփաների՝ էպիկուրյանների և ստոիկների հետաքրքրությունն արթնացրեց, ովքեր նրան հրավիրեցին ճառախոսել նման բանավեճերի համար նախատեսված ավանդական վայրում:

Նա դիմեց աթենացի մտավորականներին՝ պատմելով նրանց քաղաքի և կրոնի վերաբերյալ իր դիտարկումների մասին: Պողոսը որպես սկզբնական աստվածաբանական դրույթ ընտրեց արարման թեման, որը բոլորին էր հետաքրքիր: Ի տարբերություն ժողովարանում օգտագործվող մոտեցմանը՝ այժմ նա իր լուրը չէր փաստարկում Սուրբ Գրքից հատվածներով, այլ դիմում էր իր ունկնդիրներին ծանոթ ստեղծագործությունների միջոցով (տե՛ս Գործք առաքելոց 17.27,28, այստեղ նա մեջբերում է հույն գրողներին): Սակայն երբ հռետորը նրանց մտավոր հարմարավետության սահմաններից դուրս եկավ, փիլիսոփաները

կտրուկ կերպով ընդհատեցին բանավեճը: Սակայն մի քանի հոգի շարունակեցին Պողոսի հետ զրույցը և հավատացին:

Արդյոք մենք հասկանո՞ւմ ենք մեզ շրջապատող մարդկանց աշխարհայացքը և կրոնական տեսակետները: Ավետարանելու ճանապարհներ փնտրելիս ինչո՞ւ է կարևոր գոնե մի փոքր իմանալ ունկնդիրների աշխարհայացքի մասին:

Չորեքշաբթի *հուլիսի 11*

Կորնթոս ժամանելը

Գործք առաքելոց 18.1-18 հատվածում մենք գտնում ենք ոչ եկեղեցական պատմության հետ երկու հետաքրքիր փոխհատում: Առաջինը կապված է Կլավդիոսի կառավարման ժամանակ Հռոմից հրեաների վտարման հետ (Գործք առաքելոց 18.2): Ոչ աստվածաշնչյան աղբյուրներն այդ իրադարձությունը թվագրում են ՔՀ 49 թվով: Մյուս իրադարձությունը կապված է փոխանորդ բդեշխ Գաղիոնի հետ (Գործք առաքելոց 18.12): Քանի որ Կորնթոսում բդեշխները մեկ տարով էին նշանակվում, պահպանված գրառումները և այլ տվյալներ ճշգրիտ կերպով սահմանում են ժամանակը, երբ Գաղիոնը տվյալ պաշտոնն էր զբաղեցնում՝ ՔՀ 50-51 թթ.: Երբեմն քննադատները կասկածի տակ են դնում «Գործք Առաքելոց» գրքի պատմական լինելը, սակայն շատ անուղղակի վկայակոչումներ, մասնավորապես՝ այստեղ նշվածները, հաստատում են դրա արժանահավատությունը:

Ակնհայտ է, որ առաքյալներին Թեսաղոնիկեից վտարելուց հետո Տիմոթեոսը Պողոսի և Շիղայի հետ Բերիա գնաց (Գործք առաքելոց 17.10,14,15): Այնուհետև նա կարճ ժամանակով Աթենքում Պողոսին միացավ, իսկ այնտեղից նորից Թեսաղոնիկե ուղարկվեց (Ա Թեսաղոնիկեցիս 3.1,2): Այնտեղ Տիմոթեոսը Շիղային հանդիպեց (Գործք առաքելոց 18.5) և ուղևորվեց Կորնթոս Պողոսի հետ հանդիպման: Ամենայն հավանականությամբ, Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձը գրվել է Կորնթոսից, Տիմոթեոսի ժամանումից քիչ անց: Պողոսը գիտեր իրադրությունն Աքայիայում, որտեղ գտնվում էր Կորնթոսը (Ա Թեսաղոնիկեցիս 1.7,8), և Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձում նա պատասխանում է Տիմոթեոսից ստացած տեղեկությանը (Ա Թեսաղոնիկեցիս 3.5,6):

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 1.18-2.2-ը: Այս հատվածում ո՞րն է Պողոսի հիմնական միտքը: Այս համարները մեզ ի՞նչ են

ասում Աթենքում և Կորնթոսում Պողոսի ավետարանչական ռազմավարության մասին: _____

_____

_____

Հավանաբար, Պողոսը բավարարված չէր աթենացի փիլիսոփաների հետ իր հանդիպման արդյունքից, քանի որ Կորնթոսում որոշում է ընտրել հունական գիտակցությանն ավելի ուղիղ մոտեցում: Այսպես վարվելով՝ նա չի մերժում «մարդկանց հետ պետք է իրենց լեզվով խոսել»-ու գաղափարը, քանի որ հստակ կերպով օգտագործում է տվյալ մոտեցումը նույն ուղերձում (Ա Կորնթացիս 9.19-23): Աթենքի և Կորնթոսի օրինակների հիման վրա առաքյալը ցույց է տալիս, որ մարդկանց հետ «իրենց լեզվով» շփման գործընթացը ճշգրիտ գիտություն չէ, այն պահանջում է մշտական ուսումնասիրություն և կարգավորում: Պողոսը տարբեր քաղաքներում նույն մոտեցումը չէր ցուցաբերում: Նա շատ նրբանկատ էր ժամանակների, մշակույթի և հանգամանքների փոփոխությունների հանդեպ:

Եվս մեկ անգամ ընթերցեք այսօրվա աստվածաշնչյան հատվածները: Դրանց հիմնական լուրը ինչպե՞ս է համաձայնեցվում մեր կյանքի հետ, որտեղ այս աշխարհի «իմաստությունը» հաճախ ընդհարվում է խաչի «հիմարության» հետ:

Հինգշաբթի ***հուլիսի 12***

Պողոսը բացում է իր սիրտը

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.17-3.10-ը: Տվյալ հատվածը մեզ ի՞նչ է հաղորդում Պողոսի հուզական կապվածության և այդ հավատացյալների նկատմամբ նրա վերաբերմունքի մասին: Մենք ինչպե՞ս պետք է վերաբերվենք մարդկանց, ում ծառայում ենք:

_____

_____

Պողոսի խորը մտքերը և խիստ խոսելաոճը (տե՛ս, օրինակ, Գաղատացիս 1.6,7, 3.1-4, 4.9-11) երբեմն տպավորություն են ստեղծում, ասես նա արհամարհում է զգացմունքները և անձնական փոխհարաբերությունները: Սակայն, Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձի բերված հատվածի հիասքանչ լեզուն հակառակն է վկայում: Պողոսն այն հարաբերությունները գնահատող ավետարանիչն էր, որոնք համահունչ էին մեծ հանձնարարության կատարման հետ, և հիմնականում շեշտը

դնում էր ավետարանչական ծառայության վրա (Մատթեոս 28.19,20):

Վերը բերված հատվածում Պողոսն իր զգացմունքների մասին է խոսում: Նա շատ է կարոտում Թեսաղոնիկեցիների հավատացյալներին և անգամ թախծում նրանց համար: Երբ Հիսուսը գա, Պողոսը մտադիր է թեսաղոնիկեցի հավատացյալներին ներկայացնել Նրան որպես իր ծառայության օրինակ: Առաքյալի համար քիչ է ժամանակի ավարտին պարզապես փրկված լինելը, նա ապացույցներ է ցանկանում, որ իր կյանքն Աստծո արքայության համար պտուղ էր բերել:

Այլևս չդիմանալով թեսաղոնիկեցիների հետ բաժանմանը՝ Պողոսը նրանց մոտ է ուղարկում իրենց ընդհանուր ընկերոջը, որպեսզի տեղեկություն ստանա նրանց կյանքից: Առաքյալը վախենում էր, որ սատանային ինչ-որ կերպ կհաջողվի նրանց սկզբնական համոզմունքները սասանել: Սակայն Պողոսը չափազանց ուրախացավ և մխիթարվեց, երբ Տիմոթեոսը հաղորդեց, որ նրանք ամուր են հավատի մեջ:

Ա Թեսաղոնիկեցիս 3.6-ը հանգեցնում է առաքյալի առավել խորը զգացումների մասին մտքին: Պողոսն ուրախանում է Տիմոթեոսի բերած լուրերով, որ նրանք լավ կարծիքի ունեն Պողոսի մասին և փափագում են նրա հետ հանդիպել, ինչպես որ նա է այդ փափագում: Պողոսն անսպասելի կերպով լքեց Թեսաղոնիկեն, և ըստ ամենայնի դատելով, նրան մի փոքր անհանգստացնում էր այն, թե ինչպես են վերաբերվում իրեն և իր բացակայությանը: Թեսաղոնիկեցիների հավատարմությունը հույժ նշանակալից էր Պողոսի համար: Վերջիվերջո, նա ընդամենը մարդ էր, և հավատակիցների աջակցությունն ուրախացնում էր նրան:

Տիմոթեոսի բերած լուրերը Պողոսին առանձնահատուկ ուրախություն պարգևեցին, ինչն արտացոլվեց Աստծուն ուղղված նրա աղոթքներում: Սակայն այդ ուրախությունը չմարեց նրա հսկայական ցանկությունը՝ անձամբ հանդիպել թեսաղոնիկեցիների հետ և քրիստոնեական կյանքում նրանց հաստատելու խրատներն ավարտին հասցնել: Սակայն չունենալով այդպիսի հնարավորություն՝ Պողոսն սկզբում Տիմոթեոսին է առաքելությամբ ուղարկում, իսկ այնուհետև թեսաղոնիկեցիներին նամակ է հղում: Այսօր այդ նամակները Նոր կտակարանի մասն են:

Ուրբաթ ***հուլիսի 13***

Հեպագա ուսումնասիրության համար

«Եթե մենք այսօր մեզ Աստծո առաջ խոնարհեցնեինք, լինեինք բարի, քաղաքավարի, քնքուշ և ավելի կարեկից միմյանց հանդեպ, ապա

այնտեղ, որտեղ այսօր ապաշխարում և ճշմարտությունն է ընդունում մի մարդ, հարյուրավորները դարձի կգային: Թեպետև մենք մեր մասին խոսում ենք որպես վերածնվածների, մենք մեր հետ սեփական «ես«-ն ենք կրում՝ նրան համարելով չափազանց արժեքավոր, որպեսզի նրանից հրաժարվենք: Մեր առավելությունն է՝ Քրիստոսի ոտքերի մոտ դնել մեր բեռը, դրա փոխարեն ընդունել Քրիստոսի բնավորությունը և Նրան նմանվել: Փրկիչը սպասում է դրան» (Է.Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հ. 9, 189,190):

«Հիսուսն Իր ծառայության ժամանակ աշակերտներին մշտապես ներշնչում էր, որ նրանք պետք է Իր հետ միասնական լինեն աշխարհին մեղքի ստրկությունից ազատելու գործում... Նա ամբողջ ուժով պատրաստում էր աշակերտներին ինքնուրույն աշխատանքի համար, որը կտարածվեր իրենց շարքերի համալրմանը զուգընթաց և վերջիվերջո կընդգրկեր աշխարհի ամենահեռավոր ծայրերը: Նրա կողմից Իր հետևորդներին տված վերջին դասն այն էր, որ նրանց է տրված փրկության ուրախալի լուրը, որը նրանք պետք է հռչակեին ողջ աշխարհին» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 32):

Հարցեր քննարկման համար

1. Քննարկեք երկուշաբթի օրվա դասի վերջին հարցի ձեր պատասխանը: Մենք ինչպե՞ս պետք է խուսափենք նման սխալներից: Արդյոք մենք մինչ այժմ գործո՞ւմ ենք նման սխալներ:
2. Է.Ուայթը «Վկայություններ եկեղեցու համար» գրքում (հ. 9, 189) (տե՛ս վերևում) սեփական «ես«-ը բեռ է անվանում, որը խանգարում է արդյունավետ ծառայությանը և խոչընդոտում շատ մարդկանց վերստին ծնվելուն: Ի՞նչ կերպով է սեփական «ես«-ը ձեր կյանքում իրեն դրսևորում: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել սեփական «ես»-ի համար մեռնել: Ո՞րն է այդ նպատակին հասնելու միակ ճշմարիտ ճանապարհը:
3. Մեծ հանձնարարության մեջ հիմնական շեշտը դրվում էր նոր աշակերտներ ձեռք բերելու վրա (Մատթեոս 28.19,20): Կիսվե՛ք նոր աշակերտներ ձեռք բերելու ձեր փորձառությամբ: Ձեր եկեղեցու գործունեությունը որքանո՞վ է ուղղված դեպի ավետարանչական ծառայությունը: Ինչպե՞ս կարելի է բարելավել իրավիճակը:
4. Ինչպե՞ս որևէ մեկին կարելի է խաչի «հիմարությունը» բացատրել: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Պողոսն այդպիսի արտահայտություն օգտագործել: Դա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որքան սահմանափակ կարող է լինել իրականության մարդկային ըմբռնումը, եթե բոլոր

ճշմարտություններից ամենակարևորը շատերին «հիմարություն» է թվում:

Վերջաբան

Պողոսը երեք շաբաթվա ընթացքում չափազանց կապվեց Թեսաղոնիկեի նորադարձների հետ: Հնարավորություն չունենալով նրանց մոտ վերադառնալ՝ նա Տիմոթեոսին ուղարկեց: Սուրբ Հոգու ազդեցության տակ առաքյալն իր ողջ հոգին ներդրեց այդ երկու ուղերձների մեջ: Ավետարանչությունը չպետք է միայն հանգի քրիստոնեական ուսմունքի ընդունմանը: Քրիստոնեական հավատն իր մեջ ներառում է կյանքի բոլոր կողմերը՝ ֆիզիկականը, մտավորը և հուզականը:

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՆ ՊՈՂՈՍԻ ՕՐԵՐՈՒՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 11.48-50, Ա Հովհաննես 2.15-17, Ա Կորնթացիս 9.19-27, Հովհաննես 3.3-8, Ա Կորնթացիս 16.19:

Հիշելու համարը.

«Որովհետև ամենից ազատ լինելով՝ իմ անձը ամենքին ծառա արի, որ շատերին շահեմ» (Ա Կորթնացիս 9.19):

Հիմնական միտքը.

Հին Թեսաղոնիկեի պատմական իրավիճակի համառոտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Պողոսի մուտեցումն այդ քաղաքի մարդկանց եզակի էր և հանգամանորեն ծրագրված:

Դասի գլխավոր նպատակն է մի կարճ ակնարկ անցկացնել Թեսաղոնիկեի պատմական, գրական և հնագիտական տեղեկությունների մասին:

Այս նյութը երկու պատճառով է կարևոր: Առաջին, այն մեզ օգնում է հասկանալ, թե Պողոսի առաջին ունկնդիրներն ինչպես էին նրան ըմբռնում, ինչն իր հերթին կլուսաբանի առաքյալի գրածների իմաստը և կբացատրի եկեղեցու և հասարակության վրա ունեցած նրա ազդեցությունը:

Երկրորդ, մենք որքան էլ լավ իմանանք թեսաղոնիկեցիների պատկերացումները և համոզմունքները, այնքան ավելի լավ կարող ենք հասկանալ, թե ինչի դեմ էր Պողոսը հանդես գալիս: Ավետարանը տանելով մարդկանց՝ առաքյալը պետք է նաև սխալ հայացքներն ուղղեր: Այսպիսով, թեև դասը բացառապես հիմնված չէ Աստվածաշնչի վրա, այն նաև ներառում է շատ պատմական փաստեր, այդուհանդերձ, հիմք է ձևավորում, որին հենվելով՝ մենք կարող ենք կարդալ Թեսաղոնիկեցիներին ուղղված ուղերձը:

Միաշաբթի ***հուլիսի 15***

Հռոմեացիները ժամանում են Թեսաղոնիկե

Կարդացե՛ք Հովհաննես 11.48-50-ը: Ինչպե՞ս ՔՀ առաջին դարում

Պաղեստինի և Երուսաղեմի հռոմեական պաշարումն ազդեց քաղաքական և կրոնական որոշումների վրա, Հիսուսին ծառայելու վերաբերյալ: Մտածե՛ք այդ որոշումների տրամաբանական լինելու մասին: Ո՞րն է նման մոտեցման վտանգը:

Հունական քաղաք-պետությունների միջև տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի ժամանակ, մոտավորապես ՔՀ 168 թ. թեսաղոնիկեցիները հռոմեացիներին հրավիրեցին մտնել իրենց քաղաք և այն պաշտպանել շրջապատող թշնամիներից: Հռոմեացիները Թեսաղոնիկեին պարգևատրեցին քաղաքացիական պատերազմում նման «ճիշտ դիրքորոշման» համար՝ թույլ տալով նրան նշանակալից չափի ինքնակառավարում: Թեսաղոնիկեն դարձավ կայսրության ներսում ինքնուրույն կերպով իր ներքին գործերը լուծող և իր ճակատագիրը տնօրինող ազատ քաղաք: Արդյունքում հարուստ և առավել ազդեցիկ դասակարգը քաղաքում կարող էր ապրել, ինչպես նախկինում: Սակայն հասարակ մարդկանց, հատկապես բանվոր դասակարգի համար, կյանքն այդքան հեշտ ու հաճելի չէր: Այդ պատճառով Պողոսի ժամանակներում նրանք Հռոմի և կայսեր կողմնակիցներն էին:

Թեսաղոնիկեում գոյություն ունեին հռոմեական կառավարման երեք գլխավոր բացասական տեսանկյուններ: Առաջին, հռոմեական պաշարումը հանգեցրեց տնտեսական անհավասարակշռության: Սովորական շուկաները ոչնչացվեցին պատերազմի և իրար փոխարինող կառավարությունների պատճառով: Այդպիսի տատանումներն աղքատ խավերին ավելի ուժեղ էին հարվածում, քան հարուստներին: Ժամանակի ընթացքում այդ բացասական տեսանկյունը դարձավ ավելի պակաս նշանակալից:

Երկրորդ, թեև Թեսաղոնիկեն մնում էր հարաբերական անկախ ինքնավարությամբ քաղաք, նախկինի պես տիրում էր քաղաքական անկարողության զգացումը: Տեղական որոշ ղեկավարների փոխարինեցին օտարերկրացիները, ովքեր մեծապես հավատարիմ էին Հռոմին, ոչ թե Թեսաղոնիկեին: Որքան էլ որ պաշարումը ողորմած լիներ, այն չէր կարող երկար ժամանակ ժողովրդականություն վայելել:

Երրորդ, առկա էր անխուսափելի գաղութային շահագործում, որը մշտապես ուղեկցում է պաշարմանը: Հռոմեացիները պահանջում էին որոշակի հարկավճար: Հավաքված բերքից, օգտակար հանածոներից և տեղական այլ մթերքներից վերցվում էր որոշակի տոկոս և Հռոմ ուղարկվում՝ կայսրության աճող պահանջները բավարարելու համար:

Այսպիսով, թեև Թեսաղոնիկեն Երուսաղեմից առավել հարուստ քաղաք էր, հռոմեական կառավարումն ու պաշարումն անխուսափելիորեն

մեծ ճնշում էին գործադրում տեղական բնակչության վրա: Այդ ճնշումն առավել ծանր էր աղքատ մարդկանց համար: Մի քանի տասնամյակ անց թեսաղոնիկեցիների դժգոհությունն էապես աճեց և նրանք փափագում էին իրավիճակը փոխել:

Ինչպե՞ս է ձեր տեղանքի քաղաքական իրավիճակը ազդում եկեղեցու ծառայության վրա: Ձեր համայնքն ի՞նչ կարող է անել, և ի՞նչ պետք է անի, որպեսզի հասարակության մեջ իր դրությունը և հեղինակությունը բարելավի:

Երկուշաբթի ***հուլիսի 16***

Հեթանոսական պատասխան Հռոմին

Որպես պատասխան անզորության, որը թեսաղոնիկեցիներից շատերն զգում էին, առաջ եկավ մի շարժում, որը գիտնականներն անվանում են Կաբիռուսի պաշտամունք: Պաշտամունքի հիմնադիրը Կաբիռուս անունով մարդ էր, ով հանդես էր գալիս ի պաշտպանություն քաղաքացիական իրավունքների և, վերջիվերջո, սպանվեց իր երկու եղբայրների կողմից: Նրան թաղեցին թագավորական մեծարանքով և սկսեցին վերաբերվել որպես հերոս-նահատակի:

Ցածր խավերը հավատում էին, որ Կաբիռուսը կենդանության օրոք գերբնական ուժով էր օժտված: Նրանք նաև համարում էին, որ ժամանակ առ ժամանակ Կաբիռուսը կյանքի է վերադառնում, որպեսզի մարդկանց օգնի, և որ նա կվերադառնա, աղքատների համար արդարություն կբերի և քաղաքը կվերականգնի՝ նրան վերադարձնելով լիակատար անկախություն և նախկին վեհությունը: Համարվում էր, որ Կաբիռուսի պաշտամունքը հույս էր տալիս հարստահարվածներին:

Ամեն ինչ առավել հետաքրքիր է դառնում, երբ մենք տեղեկանում ենք, որ Կաբիռուսի երկրպագությունն իր մեջ ներառում էր արյունալի զոհաբերություններ, որոնք իբրև թե մեծարում էին նրա մարտիրոսությունը: Մարդիկ հավատում էին, որ Կաբիռուսին զոհաբերություններ բերելու միջոցով կարելի է ազատվել հանցանքից և վերացնել դասակարգային տարբերությունները: Կաբիռուսի պաշտամունքում հասարակության բոլոր դասերն իրենց հանդեպ հավասար վերաբերմունք էին պահանջում:

Սակայն դա էլ դեռ ամենը չէ: Երբ Օգոստոսի ժամանակ կայսեր պաշտամունք ի հայտ եկավ, հռոմեացիները հայտարարեցին, որ Կաբիռուսը մարմնավորվել է Կեսարի մեջ: Այլ խոսքերով, զավթիչներն

իրենց ձեռքը վերցրին նաև հարստահարվածների հույսը: Արդյունքում, Թեսաղոնիկեի հոգևոր կյանքն այլևս թեթևություն չէր տալիս խեղճ ժողովրդին: Հասարակ մարդիկ մնացին առանց իրենց համար նշանակալից կրոնի: Կայսեր պաշտամունքը ենթադրում էր, որ եթե քաղաքում հայտնվում էր իսկական Կաբիռուսի նման որևէ մեկը, ապա նա անմիջապես կառավարող շրջանակներում սպառնալիք էր դառնում:

Հռոմեացիների քաղաքականությունը մարդկանց սրտերում հոգևոր վակուում էր ձևավորել, որը միայն Ավետարանը կարող էր լցնել: Քրիստոսը հույսերի և սպասումների ճշմարիտ իրականացումն էր, որը թեսաղոնիկեցիները կապում էին Կաբիռուսի հետ: Ավետարանն այժմ ապահովում էր ներքին խաղաղություն և կենսակարգի վերջնական փոփոխություն երկրորդ գալուստի ժամանակ:

Կարդացե՛ք Ա Հովհաննես 2.15-17-ը (տե՛ս նաև Ժողովող 2.1-11): Ինչպիսի՞ կարևոր ճշմարտություններ են համարներում շարադրված: Արդյոք դուք զգացե՞լ եք այս խոսքերի իրական լինելը, այսինքն՝ ամեն աշխարհայինի վաղանցիկությունը և դրանով անբավարարվածությունը:

Երեքշաբթի ***հուլիսի 17***

Ավետարանը որպես հպման կետ

Հաշվի առնելով երեկվա տեղեկությունը՝ դժվար չէ հասկանալ, թե ինչու շատ ոչ հրեա թեսաղոնիկեցիներ ընդունեցին Պողոսի կողմից քարոզվող Ավետարանը: Արդյոք Պողոսը գիտե՞ր Կաբիռուսի պաշտամունքի մասին մինչ քաղաք ժամանելը, թե՞ ոչ, սակայն ժողովարանում նրա մեսիական քարոզը համապատասխանում էր տեղի հեթանոսների հոգևոր ակնկալիքներին: Երբ Ավետարանը Թեսաղոնիկե մտավ, հասարակ աշխատավորները տրամադրված էին այն ընդունել, այդ պատճառով արձագանքեցին շատերը: Նրանք նաև պատրաստ գտնվեցին Ավետարանի ծայրահեղական մեկնաբանությանը: Կաբիռուսի պաշտամունքը մարդկանց մեջ սնուցում էր իշխանության դեմ ապստամբության ոգի, և այդ ոգին կարող էր անկարգությունների աղբյուր դառնալ, որի մասին ասում է Պողոսը այդ եկեղեցուն ուղղված իր երկու ուղերձներում (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 4.11,12, 5.14, Բ Թեսաղոնիկեցիս 3.6,7,11):

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 9.19-27-ը: Պողոսն այս հատվածում ինչպիսի՞ հիմնական ավետարանչական ռազմավարություն է

ներկայացնում: Դրա իրագործման ժամանակ ինչպիսի՞ դժվարություններ կարող են հանդիպել: Ինչպե՞ս կարելի է ճիշտ հաշվեկշիռ պահպանել հատվածում ներկայացված այս երկու սկզբունքներին հետևելիս:

Ավետարանը մեծ ազդեցություն է թողնում, երբ շոշափում է մարդկանց կարիքները, հույսերը և երազանքները: Սուրբ Հոգին ավետարանի համար կամուրջներ է կառուցում, սակայն չի կարելի նսեմացնել ջանասեր աղոթքների և լավ փոխհարաբերությունների նշանակությունը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ մարդիկ հատկապես բաց են ավանդական լուրի համար փոփոխությունների ժամանակ: Դա կարող է լինել տնտեսական խառնաշփոթությունների, քաղաքական տարաձայնությունների, պատերազմների, հարսանիքների, ամուսնալուծությունների, բնակավայրի փոփոխության, առողջական խնդիրների կամ մտերիմ մարդկանց մահվան ժամանակ: Թեսաղոնիկեցիները վերապրեցին և՛ փոփոխություններ, և՛ դժվարություններ, որոնք օգնեցին, որ ավետարանն այդ քաղաքում խորը արմատներ գցի:

Սակայն խառնաշփոթությունների ժամանակ մկրտվողները հակված են նաև անկայունություն ցուցաբերել, համենայն դեպս, սկզբնական ժամանակում: Նահանջը հաճախ տեղի է ունենում դարձի գալուց մի քանի ամիս անց: Թեսաղոնիկե գրված նամակները վկայում են եկեղեցու անկայունության մասին, և այդ վիճակը պահպանվեց մի քանի ամիս շարունակ Պողոսի առաջին այցելությունից հետո:

Մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք եկեղեցու անդամներին, ովքեր դեռևս չեն հաստատվել Քրիստոսում իրենց նոր կյանքի մեջ: Ծանոթացե՛ք նորադարձներից կամ եկեղեցի այցելողներից որևէ մեկի հետ և հնարավորինս օգնեք նրան հաստատվել Տիրոջ մեջ: Դուք կզարմանաք՝ տեսնելով, թե այդ ծառայությունը ինչպես է ամրացնում հենց ձեզ:

Չորեքշաբթի ***հուլիսի 18***

Պողոսը՝ «փողոցային քարոզիչ»

Առաջին դարում հունա-հռոմեական աշխարհում շատ էին հանրաճանաչ փիլիսոփաները, ովքեր ելույթ էին ունենում տարբեր ժողովներում, փողոցներում և հրապարակներում, մեծ ազդեցություն էին ունենում ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ մարդկանց խմբերի վրա: Համարյա թե նույն բանն այսօր անում են տարբեր հասարակական

գործիչներ և փողոցային քարոզիչներ:

Այդ փիլիսոփաները հավատում էին, որ մարդիկ ներքին ունակություն ունեն իրենց կյանքը փոխելու: Նրանք դիմում էին հասարակական ելույթներին և մասնավոր զրույցներին, որպեսզի փոփոխություններ կատարեն իրենց աշակերտների մեջ: Փիլիսոփաները ձգտում էին իրենց ունկնդիրների մեջ կասկածներ առաջացնել ծանոթ գաղափարների և կանոնների նկատմամբ և նրանց մտքերը բացել նոր հայացքների և փոփոխությունների ընդունման համար: Այդպիսի փիլիսոփաների վերջնական նպատակն էր վստահության աճն իրենց ուժերի հանդեպ և բարոյական զարգացումը:

Փիլիսոփան իրավունք էր ստանում ուրիշների հետ խոսել միայն այն դեպքում, երբ անձամբ բարոյական ազատություն էր ձեռք բերում սեփական ներքին աշխարհում: «Բժի՛շկ, ինքդ քե՛զ բժշկիր» - դա հին աշխարհում բավականին հայտնի հայեցակարգ էր:

Փիլիսոփաները գիտեին նաև անհրաժեշտությունը՝ իրենց լուրն այնպես ներկայացնել, որպեսզի այն արձագանք գտներ տարբեր մարդկանց մոտ: Եվ, միևնույն ժամանակ, հասկանում էին իրենց բնավորության և քարոզվող լուրի ամբողջականությունը պահպանելու կարևորությունը:

Այսպիսով, գոյություն ունեն մի շարք զուգահեռներ այն ժամանակ ժողովրդականություն վայելող ուսուցիչների և Պողոսի աշխատանքի միջև, ով նույնպես ճանապարհորդում էր և հասարակական վայրերում ելույթ ունենում (Գործք առաքելոց 17.17, 19.9,10):

Սակայն, գոյություն ուներ երկու կարևոր տարբերություն Պողոսի և ուրիշ փիլիսոփաների մեթոդների միջև: Առաջին, Պողոսը ոչ միայն աշխատում էր հասարակական վայրերում, այլև ձգտում էր տեղական համայնքներ կազմակերպել: Դա աշխարհից որոշակի առանձնացում էր պահանջում և սեփական անձի խորը նվիրաբերում այդ համայնքին: Երկրորդ, Պողոսը սովորեցնում էր, որ վերստին ծնունդն իմաստուն ճառի արդյունքում ի հայտ եկած ներքին որոշում չէ, հակառակը, դա Աստծո գերբնական աշխատանքի արդյունքն է, որը մարդու մեջ է արտահայտվում (տե՛ս Գաղատացիս 4.19, Հովհաննես 3.3-8, Փիլիպպեցիս 1.6): Պողոսի ուսմունքը փիլիսոփայությունից անհամեմատ մեծ էր, դա երկնային ճշմարտության հռչակումն էր և Աստծո հզոր գործերի հայտնությունը մարդկության փրկության գործում:

Որոշ հայտնի փիլիսոփաների անազնվությունը նրանում էր, որ իրենց ուսմունքով քողարկվելով, նրանք պարզապես գումար էին աշխատում: Դրանք յուրովի շահարկողներ էին և ոչ ավելին: Նրանցից ոմանք

սեռական հարաբերություններ էին ունենում իրենց ունկնդիրների հետ: Թեև փիլիսոփաների մեջ կային և ազնիվ ուսուցիչներ, ամեն դեպքում, հին աշխարհում ճանապարհորդող հռետորներին բավականին արհամարհանքով էին վերաբերվում:

Պողոսը չէր ցանկանում, որպեսզի իրեն նույն կերպ վերաբերվեն, այդ պատճառով նա ավելի հաճախ հրաժարվում էր իր ունկնդիրների միջոցներից: Դրա փոխարեն նա իր ձեռքերով էր աշխատում՝ սատարելով և՛ իրեն, և՛ իր գործընկերներին: Նման վարքը, նրա տառապանքների հետ մեկտեղ ցույց էր տալիս, որ նա իսկապես հավատում էր նրան, ինչը քարոզում էր, և սեփական շահերից ելնելով չէ, որ կատարում էր ծառայությունը: Շատ բանում հենց առաքյալի կյանքն էր նրա առավել համոզիչ քարոզը:

Հինգշաբթի ***հուլիսի 19***

Տնային եկեղեցիներ

Կարդացե՛ք Հռոմեացիս 16.4, Ա Կորնթացիս 16.19, Կողոսացիս 4.15, Փիլիմոն 1,2-ը: Ի՞նչ ընդհանուր բան կա այս համարներում:

_____

_____

_____

Հռոմեական աշխարհում գոյություն ունեին երկու հիմնական տեսակի կացարաններ. առաջինը, «դոմուս»՝ ներքին բակի շուրջը կառուցված մեծ տուն՝ նախատեսված մի ընտանիքի համար: Դա հարուստների տիպիկ կացարան էր: Այդպիսի տանը կարող էին հավաքվել 30-ից 100 մարդ: Կացարանի մյուս տեսակն անվանվում էր «ինսուլա»: Այդպիսի նախագծերի ներքևի հարկում տեղակայված էին դեպի փողոց նայող խանութներ և արտադրական շինություններ, իսկ վերին հարկերում «բնակարաններն» էին: Դա աշխատավոր դասի քաղաքային հիմնական կացարանն էր: Նման բնակատեղին սովորաբար տեղավորում էր միայն մի փոքր համայնք:

Դոմուսները և շատ ինսուլաներ միանգամից մի քանի սերունդների, ընտանեկան բիզնեսի աշխատողների, հյուրերի և անգամ ծառաների բնակատեղին էին: Եթե ընտանիքի գլուխը վերածնվում էր, դա տան մնացած բնակիչների վրա մեծ ազդեցություն էր թողնում:

Քաղաքի տնային եկեղեցու կատարյալ դիրքը քաղաքի կենտրոնին մոտ լինելն էր: Տան հետ կապված խանութները և արտադրական շինու-

թյունները նպաստում էին արհեստավորների, առևտրականների, գնորդների և աշխատանք փնտրող մարդկանց հետ կապը պահպանելուն: Նման մթնոլորտում կարող էր անցնել Պողոսի ավետարանչական ծառայության մեծ մասը:

Աշխարհի որոշ մասերում մարդիկ մինչև հիմա էլ Աստծուն տնային եկեղեցիներում են երկրպագում, հաճախ այն պատճառով, որ դա այն ամենն է, ինչ նրանք ունեն, կամ էլ նրանց թույլ չի տրվում դրանից ավելին: Նման դեպքերում տնային եկեղեցին միակ տարբերակն է:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 18.1-3-ը: Այս համարներն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ, թե ինչպիսի պայմաններում էր Պողոսն աշխատում: _____

_____

_____

Լինելով հռոմի քաղաքացի և միևնույն ժամանակ հրեական ընտրախավի անդամ՝ Պողոսը բարձր դասակարգից էր սերում: Ամեն դեպքում, նա սեփական ձեռքերով էր վաստակում, և դա ստորացուցիչ չէր համարում իր համար: Այդ աշխատանքի շնորհիվ նա նույնացվում էր հասարակ մարդկանց հետ և կարող էր նրանց ավետարանել (տե՛ս Ա Կորնթացիս 9.19-23):

Որքանո՞վ է ձեր եկեղեցին հասարակության հետ հաջողությամբ փոխներգործում: Արդյոք դուք և ձեր եկեղեցին մասնակցո՞ւմ եք հասարակական կյանքին, թե՞ պաշտպանվելով «աշխարհի ազդեցությունից»՝ դուք լիովին փակվել եք և այս աշխարհի վտանգներից այնքան եք մեկուսացել, որ ոչ մի ազդեցություն չունեք դրա վրա:

Ուրբաթ ***հուլիսի 20***

Հետագա ուսումնասիրության համար

«Նախախնամությունը ժողովուրդների և մարդկանց ընթացքը կրքերով և բոլոր գործողություններով այնքան կառավարեց, մինչև որ աշխարհը պատրաստ եղավ Փրկչի գալուստին...

Հեթանոսական կրոնն այդ ժամանակ իր ազդեցությունը կորցրել էր մարդկանց վրա, ովքեր արդեն հոգնել էին շքեղ տեսարաններից և առասպելներից: Նրանք այնպիսի կրոնի կարիք ունեին, որը հոգուն բավարարում կբերեր...

Աստվածային Ուսուցչի գալուստի մասին մարգարեանում էին ոչ միայն հրեաները, այլև ուրիշ ազգերի ներկայացուցիչներ: Այդ մարդիկ ճշմարտություն էին փնտրում, և նրանց ի վերուստ հայտնություն էր ուղարկվում: Մեկը մյուսի հետևից, խավար երկնքում հայտնված աստղերի պես, ի հայտ էին գալիս այդպիսի ուսուցիչներ: Նրանց մարգարեությունները հազարավոր հեթանոսների սրտերում հույս էին ծնում» (Է.Ուայթ, Դարերի Փափագը, 32,33):

«Երբ Պողոսն առաջին անգամ Կորնթոս այցելեց, այնտեղ գտնվեցին օտարերկրացիներին անմաքուր դրդապատճառների մեջ կասկածող մարդիկ: Ծովի առափնյայի հույները մոլի առևտրականներ էին: Նրանք երկար ժամանակ խարդախությամբ էին զբաղվում, այդ պատճառով սկսեցին բարեպաշտությունն էլ համարել հարստանալու միջոց՝ կարծելով, թե ցանկացած միջոց էլ լավ է գումար վաստակելու համար: Պողոսը ծանոթ էր նրանց բարքերին և չէր ցանկանում բամբասանքների առիթ տալ, թե իբր ինքն ավետարանը քարոզում է նրանց հարստացնելու համար... Առաքյալը ձգտում էր իր գործողությունները թյուր կերպով մեկնաբանելու ցանկացած առիթ վերացնել, որպեսզի վնաս չպատճառի այն լուրին, որը նա տանում էր» (Է. Ուայթ, Ավետարանի ծառայողներ, 234, 235):

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ եք կարծում, էլեն Ուայթն ի՞նչ նկատի ուներ, երբ գրում էր, որ հեթանոս ուսուցիչներին «ի վերուստ հայտնություն» է ուղարկվել (տե՛ս վերևում): Աստված ինչպե՞ս է ազդում գաղափարների աշխարհի վրա քրիստոնեական համատեքստից դուրս: Արդյոք մարդ կարո՞ղ է փրկվել, եթե երբեք Հիսուսի մասին չի լսել: Եթե այո, ապա ո՞ր հիմքի վրա:
2. Այսօր եկեղեցին ո՞ր դեպքերում կարող է արդյունավետությամբ օգտագործել մասնավոր տունը կամ բնակարանը: Արդյոք եկեղեցական կառուցները մի՞շտ են լավագույն տարբերակը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
3. Ձեր եկեղեցին ինչպե՞ս կարող է սովորել իր ավետումը հարմարեցնել տեղական հասարակությանը: Ինչո՞ւ մենք մշտապես պետք է հիշենք, որ ավետարանելու մեթոդները մի տեղ կարող են հաջողություն ունենալ, իսկ մեկ այլ տեղում անարդյունավետ լինել:

Վերջաբան.

Պողոսի ավետարանչական ծառայության աստվածաշնչյան պատմությունը շարադրվում է հին Հռոմի համատեքստում: Նայելով ամենօրյա խնդիրների հետ պայքարող Պողոսին՝ մենք առավել արդյունավետությամբ կարող ենք կիրառել Սուրբ Գրքում Աստծո կողմից գրված սկզբունքները և դասերը: Թեսաղոնիկեցիներին ուղղված ուղերձներում մենք տեսնում ենք, թե ինչպես է Պողոսը մեծ քաղաքում բնակվող առաջին քրիստոնյաներին օգնում հաղթահարել դժվար ժամանակները:

ՈՒՐԱԽ ԵՎ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 1.1-10, Ա Կորնթացիս 13, Ա Տիմոթեոս 1.15, Գաղատացիս 5.19-23, Դանիել 12.2:

Հիշելու համարը.

«Գոհանում ենք Աստծուց ամեն ժամանակ ձեր ամենի համար՝ ձեզ հիշելով մեր աղոթքներում. և անդադար հիշում ենք ձեր հավատքի գործերը և սիրո աշխատանքը, և մեր Տեր Հիսուս Քրիստոսի հույսի համբերությունը Աստծո և մեր Հոր առաջին» (Ա Թեսաղոնիկեցիս 1.2,3):

Հիմնական միտքը.

Թեսաղոնիկեցիներին ուղղված իր առաջին նամակում Պողոսը նրանց հաստատեին շատ բարի խոսքեր է հղում: Մենք պետք է ուշադրություն դարձնենք, թե ինչի համար է առաքյալը նրանց գովաբանում:

Պողոսն իր առաջին ուղերձի սկզբում ընդգծում է աղոթքի հատուկ նշանակությունը՝ հիշեցնելով, որ ջերմեռանդ կերպով աղոթում է թեսաղոնիկեցիների համար, ինչն ինքնին վկայում է այդ եկեղեցու հանդեպ խորը սիրո և հոգատարության մասին:

Այդ հատվածում Պողոսն իր ուրախությունն է արտահայտում այն առիթով, որ թեսաղոնիկեցիները հավատարիմ են մնում ճշմարտությանը: Նրանց կյանքը վկայում էր Սուրբ Հոգու վերափոխող ուժի մասին՝ անկախ բազմաթիվ դժվարություններից, որոնց հետ նրանք բախվում էին: Ավարտելով առաջին գլուխը՝ Պողոսն ընդգծում է, որ իր և իր ուսմունքի հանդեպ թեսաղոնիկեցիների սրտաբացությունը հասցրեց նրանց այն բանին, որ նրանք իսկական «ադվենտիստներ» դարձան: Նրանք ամեն օր Հիսուսին երկնքից սպասող հավատացյալներ էին դարձել՝ սպասելով, որ Նա իրենց «գալիք բարկությունից» կազատի:

Տվյալ դասի ընթացքում մենք ուշադրությամբ կդիտարկենք, թե ինչպես էին նորադարձները Բարի լուրի ընդունման արդյունքում հաղթահարում ի հայտ եկած դժվարությունները:

Երախտագիտության աղոթքը (Ա Թեսաղոնիկեցիս 1. 1-3)

Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձի խոսքերում մենք տեսնում ենք Պողոսի անշահախնդրությունը: Թեև ակնհայտ է, որ այդ նամակի հեղինակը նա էր (Ա Թեսաղոնիկեցիս 2.18, 3.5, 5.27), առաքյալը նաև հիշատակում է իր համագործակիցներ Սիղուանոսին և Տիմոթեոսին:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.1-3-ը: Ինչի՞ համար են Պողոսը, Սիղուանոսը և Տիմոթեոսն Աստծուն շնորհակալություն հայտնում: Այստեղ թվարկված առաքինություններն ինչպիսի՞ գործնական նշանակություն ունեն: Օրինակ, մեր կյանքում ինչպե՞ս են դրսևորվում «հավատքի գործերը»: _____

_____

_____

Առաջին ուղերձի ողջույնի խոսքերը հիշեցնում են տիպիկ հին հունական նամակ, սակայն այն ևս իր առանձնահատկությունն ունի: «Շնորհ» բառին, որով սկսվում էին հունական նամակները, Պողոսն ավելացրել է հրեական «խաղաղություն» սովորական ողջույնի խոսքը: Շնորհ և խաղաղություն՝ երկու խոսք, որոնք հաջող կերպով արտացոլում են Հիսուսի հետ կենալու փորձառությունը:

Ո՞վ է Սիղուանոսը: Դա հունական «Շիղա» անվան լատինական համարժեքն է: Պաղեստինի սահմաններից այն կողմ ապրող հրեաները սովորաբար օգտագործում էին հրեական անուններին համապատասխանող հունական կամ լատինական անունները: Շիղան, ինչպես և Մարկոսը, քրիստոնյա էր Երուսաղեմից, ով ավետարանչական ճանապարհորդություններում դարձավ Պողոսի առաջին ուղեկիցներից մեկը: Շնորհիվ նրա, որ Պողոսին ուղեկցում էին Երուսաղեմի եկեղեցու վստահություն վայելող ղեկավարներ, նա իր ավետարանչական ճանապարհորդությունների ժամանակ անում էր հնարավոր ամեն ինչ՝ նեցուկ լինելու եկեղեցու միաբանությանը:

Ա Թեսաղոնիկեցիս 1.1-3-ի ո՞ր խոսքերը հանրաճանաչ դարձան շնորհիվ նրա, թե ինչպես են դրանք օգտագործվում Ա Կորնթացիս 13-ում: Դրանցից ո՞րն է հատկապես շեշտվում Կորնթացիներին ուղղված առաջին ուղերձում, և ինչո՞ւ:

Պողոսն իր աղոթքներում կենտրոնանում է իրականության, այլ ոչ թե վաղանցիկ հոգևորության վրա: Հավատը լուրջ աշխատանք է: Ճշմա-

րիտ սերը դրդում է շատ աշխատել, իսկ հույսը համբերություն է պահանջում: Առաքյալը շեշտը դնում է գործողությունների, այլ ոչ թե վերացական գաղափարների վրա: «Հավատ, սեր և հույս» խոսքերի հերթականությունը Նոր կտակարանում ձևափոխվում է, սակայն ամենակարևորը միշտ վերջում է հիշատակվում (օրինակ, տե՛ս Ա Կորնթացիս 13.13, որտեղ սերը հիշատակվում է վերջում):

3-րդ համարում բառերի դասավորությունը վկայում է, որ թեսաղոնիկեցիներին դիմելով, Պողոսն առաջին հերթին մտածում էր աշխարհի պատմության վերջին իրադարձությունների մասին:

Պողոսը Աստծուն շնորհակալություն է հայտնում թեսաղոնիկեցիների ավետարանի լուրին արձագանքելու համար: Հնարավոր է, որ նա նաև հույս ուներ, որ իր դրական գնահատականը կդրդի նրանց ավելի բաց լինել խնդիրների առաջ, որոնք Պողոսը մտադրված էր ներկայացնել:

Երկուշաբթի ***հուլիսի 23***

Աստծո կողմից ընտրվածները (Ա Թեսաղոնիկեցիս 1.4)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.4-ը: Ի՞նչ է նշանակում «Աստված ընտրել է մեզ»: Արդյո՞ք դա նշանակում է, որ մենք այլևս ընտրություն չունենք: Մյուս կողմից, արդյո՞ք դա նշանակում է, որ Աստծո կողմից չընտրված մարդը չի կարող փրկություն ստանալ, անգամ եթե ցանկանա: _____

_____

_____

4-րդ համարում շարունակվում է Պողոսի կողմից 2-րդ համարում սկսված երկար նախադասությունը «մշտապես գոհություն ենք հայտնում Աստծուն» խոսքերով:

Թեսաղոնիկեցիների ընտրությունը Աստծուն երախտագիտություն հայտնելու ցուցակի նրա կետերից մեկն էր:

Որոշ քրիստոնյաներ ընտրության հարցում ծայրահեղ հայացքների կողմնակից են: Նրանք ցանկանում են մարդու ուշադրությունը շեղել նրա կենսակերպից կամ վարքից: Նրանք պնդում են, որ մեր փրկությունը ոչ թե մեր, այլ Աստծո ընտրությունից է կախված: Նման ուսմունքը կարող է այն գաղափարին հանգեցնել, որ Աստծո շնորհը բոլորի համար չէ սահմանված, և մեկ անգամ փրկված մարդն արդեն չի կարող Աստծուց հեռանալ:

Հետևյալ համարներն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ, որ մարդու փրկությունը միայն իր սեփական ընտրությունից է կախված: Հեսու 24.15, Ա Տիմոթեոս 2.4, Հայտնություն 3.20: _____

_____

Հավատն անհնարին է առանց Աստծո քաշող ուժի: Համենայն դեպս, Աստված մարդկանց թույլ է տալիս ինքնուրույն կայացնել վերջնական որոշումն Իր և այն բանի վերաբերյալ, ինչ Նա կատարել է մեզ համար: Իսկ Նա կատարել է այն, որ Քրիստոսում «ընտրել» է մեզ: Մենք բոլորս «ընտրված» ենք՝ ժառանգելու փրկությունը: Այն, որ ինչ-որ մեկն իր համար փրկությունն անհրաժեշտություն չհամարելով չի փրկվի, դա կարտացոլի այդ մարդու, այլ ոչ թե Աստծո ընտրությունը:, Աստված ցանկանում է, «որ ամեն մարդիկ փրկվեն, և ճշմարտության գիտությանը գան». այդ է վկայում Ա Տիմոթեոս 2.4 համարը:

Դուք Աստծո կողմից ընտրված եք, և Նա ցանկանում է, որպեսզի ժառանգեք փրկությունը և չկորչեք: Ինչպիսի՞ քաջալերանք դուք կարող եք ստանալ այդ զարմանալի ճշմարտությունից:

Երեքշաբթի *հուլիսի 24*

Վստահություն Քրիստոսում (Ա Թեսաղոնիկեցիս 1.5)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.5-ը: Մենք ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ ապրում ենք Աստծո հետ ներդաշնակության մեջ: Թեսաղոնիկեցիների կյանքի ո՞ր երեք գործոններն էին, որ ապացուցեին Աստծո հետ նրանց ամուր փոխհարաբերությունները: _____

_____

_____

5-րդ համարը սկսվում է «որովհետև» խոսքով: Այս համարում Պողոսը մանրամասնորեն շարադրում է, թե ինչու է նա այդքան վստահ, որ թեսաղոնիկեցիներն Աստծո կողմից ընտրված են (Ա Թեսաղոնիկեցիս 1.4): Նա նաև բացատրում է աղոթքներում իր երախտագիտության պատճառները (Ա Թեսաղոնիկեցիս 1.2): Պողոսն ուրախանում է իրական վկայություններիով, որ թեսաղոնիկեցիներն արձագանքել են Աստծո կոչին, և Նա գովաբանում է նրանց:

Պողոսն սկսում է համարը՝ արտահայտելով իր ուրախությունը տեսանելի վկայությունների առիթով նրա օգտին, որ թեսաղոնիկեցիներն

Աստծուն հավատարիմ են: Ավետարանի նրանց ընդունումը բացառապես մտավոր համաձայնություն չէր ուսմունքին կամ վարդապետությանը: Նրանց ամենօրյա կյանքում դրսևորվում է Աստծո ներկայությունը և զորությունը: Եկեղեցու առօրյա կյանքում կատարվում էր այն, ինչը կարելի է բացատրել միայն աստվածային միջամտությամբ: Աղոթքներին պատասխաններ էին տրվում, կյանքում՝ փոփոխություններ կատարվում: Նրանց հավատի իրական լինելը դրսևորվում էր նրանց գործերում:

Ինչպե՞ս իմանալ, որ Սուրբ Հոգին մարդու և եկեղեցու կյանքում իսկապես ներկա է: Գաղատացիս 5.22, 23, Ա Կորնթացիս 12.1-11:

Հոգու պտուղը մարդու կյանքի վրա Աստծո ակտիվ գործունեության հզոր վկայությունն է: Սերն, ուրախությունն ու խաղաղությունը կարելի է որոշ ժամանակ կեղծել, սակայն աստիճանաբար միջեկեղեցական փոխհարաբերություններն օգնում են ճշմարտությունը կեղծիքից անջատել: Երբ Սուրբ Հոգին ներկա է, այդ ժամանակ այն, ինչը մեղավոր մարդկանց համար անբնական է, հավատացյալների համար բնական է դառնում: Քրիստոնյաներն սկսում են ողորմածություն և բարություն դրսևորել, ինչն առաջ բնորոշ չէր նրանց: Պողոսը շատ ապացույցներ էր տեսնում, որ Հոգու գերբնական ազդեցության շնորհիվ թեսաղոնիկեցիների կյանքը փոխվել է:

Պողոսի համար վերջնական վկայությունը, որ Աստված թեսաղոնիկեցիներին ընտրել է, նրանց խորը համոզվածությունն էր ավետարանի ճշմարտացիության հանդեպ, ինչպես նաև նրանց կյանքում Աստծո ներկայության իրողությունը:

Որքանո՞վ եք դուք համոզված ձեր փրկության մեջ: Ինչի՞ վրա պետք է հիմնվի այդպիսի վստահությունը:

Չորեքշաբթի ***հուլիսի 25***

Վարվել Պողոսի նման (Ա Թեսաղոնիկեցիս 1.6,7)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.6,7-ը: Ո՞րն է տվյալ հատվածում Պողոսի լուրը: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այս խոսքերը ճշմարտության այն համատեքստում, որ Քրիստոսը մեր լավագույն օրինակն է: _____

_____

_____

Թարգմանությունների մեծ մասը դա ցույց չի տալիս, սակայն վեցերորդ համարում Պողոսը շարունակում է երկրորդ համարում սկսված նախադասությունը և զարգացնում այն մինչև տասներորդ համարը: Այս երկար նախադասության հիմնական խնդիրն է շնորհակալական աղոթքի պատճառների թվարկումն է, որոնք հնչում են նրա աղոթքներում: 6 և 7 համարներն ավելացնում են ևս երկու պատճառ այդ շնորհակալական ցուցակին, որն սկսվում է «որովհետև» բառով հինգերորդ համարում: Պողոսն Աստծուն շնորհակալություն է հայտնում (հ. 2), որովհետև (հ. 5) թեսաղոնիկեցիներն ընդօրինակում էին «մեզ և Տիրոջը», ինչի հետևանքով նրանք դարձան ընդօրինակման օրինակ (հ. 6,7):

Մենք հաճախ ենք մարդկանց նախազգուշացնում, որ Քրիստոսից բացի որևէ մեկին ընդօրինակելը վտանգավոր է: Դա ճիշտ է, որովհետև նույնիսկ ամենալավ մարդիկ կատարյալ չեն և երբեմն խաբում են մեզ: Սակայն իրականությունն այն է, որ մեզ պետք են տիպարներ ընդօրինակման համար: Պահեր են լինում, երբ մարդիկ միմյանց կարիքն են ունենում, որպեսզի ղեկավարում, խորհուրդ և օգնություն ստանան դժվար իրավիճակներում ու դժվարությունները հաղթահարելիս: Ո՞վ օրինություն չի վերապրել ստացված լավ խորհրդից և բարի օրինակից:

Բացի այդ, դա մեզ դուր է գալիս, թե ոչ, սակայն երբ մենք առաջնորդներ ենք դառնում, մարդիկ սկսում են մեզ ընդօրինակել: Նման դեպքում որքան կարևոր է, որպեսզի քրիստոնյաներն ապրեն համաձայն նրա, ինչ որ քարոզում են, և իրենց կյանքում դրսևորեն այն, ինչի մասին խոսում են:

Միևնույն ժամանակ, այս տեքստերում Պողոսն օգտագործում է նախազգուշացման որոշակի տարրեր: Առաջին, նմանակումը (հ. 6) հետևում է ստանալուն (հ. 5): Ուղերձում հիմնական շեշտը դրվում է Աստծո Խոսքի ընդունման և Սուրբ Հոգու միջոցով այն կյանքում անմիջականորեն իրագործելու վրա: Աստծո Խոսքին միշտ կարելի է վստահել: Երկրորդ, Պողոսը հավատացյալների հայացքն ուղղում է Տիրոջը՝ որպես լավագույն օրինակի (հ. 6): Այն, ինչ Հիսուսը կատարել է և կատարում է, շատ ավելի լավ օրինակ է, քան այն, ինչ Պողոսն է անում: Պողոսն իր և իր բնավորության մասին ոչ մի պատրանք չէր տածում (Ա Տիմոթեոս 1.15):

Սակայն, նախազգուշացման այդպիսի տարրեր օգտագործելով՝ Պողոսը հավանություն է տալիս իրեն՝ որպես սիրելի ուսուցչի և խրատողի նմանվելու ցանկությանը, և ուզում է նաև, որպեսզի նրանք նույնպես օրինակ դառնան ընդօրինակման համար: Տվյալ դեպքում ընդօրինակել էր պետք տառապանքի մեջ ուրախ լինելուն: Տառապանքը մարդուն դարձնում է կա՛մ խիստ, կա՛մ բնավորությունը փափկացնում է: Չնայած

տառապանքներին՝ թեսաղոնիկեցիները շնորհիվ ավետարանի և Սուրբ Հոգու զորության գերբնական ուրախություն ձեռք բերեցին, նման նրան, ինչը մինչ այդ Պողոսը և Շիղան էին վերապրել (Գործք առաքելոց 16.22):

Արդյոք ձեր եկեղեցում դուք ընդօրինակման առարկա՞ եք: Ձեր կյանքում ի՞նչը կարող է մնացածների համար օրինակ ծառայել: Իսկ ի՞նչը պետք չէ, որ մարդիկ ձեզանից սովորեն:

Հինգշաբթի ***հուլիսի 26***

Հավատի հետագա վկայությունը (Ա Թեսաղոնիկեցիս 1.8-10)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.8-10-ը: Այս հատվածն ինչպե՞ս է վկայում թեսաղոնիկեցիների հավատի մասին:

Պողոսը շարունակում է երկրորդ համարում սկսած նախադասությունը՝ բացատրելով, թե ինչպես է իմացել, որ թեսաղոնիկեցիները Մակեդոնիայի (որտեղ գտնվում էր Թեսաղոնիկեն) և Աքայիայի (որտեղ գտնվում էր Կորնթոսը) մյուս հավատացյալների համար օրինակ են դարձել:

Նախ, թեսաղոնիկեցիները հաջող ավետարանչական գործի իրականացման օրինակ էին: Աստծո Խոսքը նրանցից «հնչեց» ինչպես նրանց տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Պողոսը նաև համարում էր, որ նրանք ավետարանի հանդեպ իրենց սրտաբացության շնորհիվ օրինակելի հավատ ունեն: Թեսաղոնիկեցիները ցանկանում էին սովորել: Նրանք պատրաստ էին իրենց կյանքում արմատական փոփոխությունների, ինչպիսիք են կուռքերից և երկրպագությունների այլ հանրահայտ ձևերից հրաժարվելը:

Շնորհիվ լավ ճանապարհների և մշտական ճանապարհորդությունների՝ հին հռոմեական աշխարհում լավ զարգացած էր հաղորդակցությունը: Այդ պատճառով այն պնդումը, որ նրանց հավատն ամենուրեք հայտնի էր, կարող է մատնանշել, որ այնպիսի վայրերում բնակվող մարդիկ, ինչպիսիք են Հռոմը և Անտիոքը, արդեն հիշատակել էին այդ մասին Պողոսի հետ իրենց շփման ժամանակ: Իհարկե, մարդիկ ձգտում են շրջապատի մարդկանց ամենամեծ սպասումներն արդարացնել: Գովասանքն ակնկալում է որոշակի սպասելիքների ակնարկ: Այդքան կրակոտ կերպով թեսաղոնիկեցիների հավատը գովաբանելով՝ Պողոսը նրանց դրդում էր ավելի ու ավելի աճել դրանում:

Թեսաղոնիկեցիների դարձի գալու մեջ ինչ-որ ապշեցուցիչ բան կար:

Լինելով կռապաշտ-հեթանոսներ՝ նրանք պետք է երկու մեծ խոչընդոտ հաղթահարեին: Առաջին, նրանք պետք է ընդունեին անհավանական լուրն ինչ-որ Մարդու մասին, ով մեռած էր և հարություն առավ. ավելին, այդ անհավանական լուրը հրեական էր: Հնարավոր է շատ հեթանոսներ ծիծաղում էին, երբ Քրիստոսի մասին լսում էին, սակայն դրանք վերածնված թեսաղոնիկեցիները չէին: Ընդհակառակը, նրանք լիովին փոխեցին իրենց կյանքն ավետարանի լուրին համապատասխան:

«Թեսաղոնիկեի հավատացյալները ճշմարիտ ավետարանիչներ էին: Նրանց սրտերը վառվում էին նախանձախնդրությամբ իրենց Փրկչի հանդեպ, ով ազատել էր իրենց «գալիք բարկությունից»: Քրիստոսի շնորհի միջոցով նրանց կյանքում զարմանալի փոփոխություններ կատարվեցին, և Տիրոջ Խոսքը, որը նրանք քարոզում էին, զորությամբ էր ուղեկցվում, որի արդյունքում քարոզվող ճշմարտությունը սրտեր էր շահում, և հավատացյալների թիվն աճում էր» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 256):

Մեկ անգամ ևս կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.10-ը: Ինչի՞ մասին է խոսում Պողոսը: Ի՞նչ է նշանակում «գալիք բարկությունը»: Այդ ամենի հետ ի՞նչ կապ ունի Հիսուսի հարությունը: Ինչո՞ւ է բերված խոստումն այդքան կարևոր մեր հավատի համար: Տե՛ս Ա Կորնթացիս 15.12-17, Հովհաննես 11.24, 25, Դանիել 12.2:

Ուրբաթ *հուլիսի 27*

Հետագա ուսումնասիրության համար

«Երբ Պողոսը գտնվում էր Կորնթոսում, Մակեդոնիայից ժամանեցին Շիղան և Տիմոթեոսը, ինչն առաքյալին շատ ուրախացրեց: Նրանք բերեցին նրան «հավատի և սիրո մասին բարի լուրը», ովքեր ճշմարտությունն ընդունեցին ավետարանի լրաբերների՝ Թեսաղոնիկե կատարած առաջին այցելության ժամանակ: Պողոսը քնքշորեն, ողջ սրտով սիրում էր այդ հավատացյալներին, ովքեր փորձության և շրջապատի մարդկանց թշնամական վերաբերմունքի մեջ, Աստծուն հավատարիմ մնացին: Նա փափագում էր նրանց հանդիպել, սակայն նման հնարավորություն չունենալով սահմանափակվում էր նամակներով:

Առաքյալը Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձում իր շնորհակալությունն է հայտնում Աստծուն նրանց հավատի ավելացման ուրախալի լուրի վերաբերյալ...

«Գոհանում ենք Աստծուց ամեն ժամանակ ձեր ամենի համար՝ ձեզ հիշելով մեր աղոթքներում, և անդադար հիշում ենք ձեր հավատքի գործը և սերի աշխատանքը, և մեր Տեր Հիսուս Քրիստոսի հույսի համբերությունը Աստծո և մեր Հոր առաջին»: Թեսաղոնիկեի հավատացյալներից շատերը «դարձան կուռքերից դեպի Աստված, որ ծառայեն կենդանի և ճշմարիտ Աստծուն» ... Առաքյալը գրում էր, որ Տիրոջը հավատարիմ լինելու շնորհիվ նրանք «օրինակ եղան ամեն հավատացյալներին Մակեդոնիայի և Աքայիայի մեջ» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 255,256):

Հարցեր քննարկման համար

1. Խորհե՛ք մարդկանց ընդօրինակելու հարցի շուրջ: Որո՞նք են ընդօրինակման առավելությունները ու թերությունները:
2. Պողոսն իր ուղերձում մեծ տեղ է հատկացնում Աստծուն թեսաղոնիկեցիների համար շնորհակալություն հայտնելուն: Ինչպիսի՞ դեր կարող է և պետք է խաղա երախտագիտությունը մեր անձնական և համատեղ երկրպագության մեջ:
3. Եթե ձեզ շրջապատող մարդիկ փորձեին ձեր եկեղեցում տեսանելի հավատի դրսևորումներ տեսնել, նրանք ի՞նչ կտեսնեին: Ի՞նչ կարելի է և պետք է փոխել:
4. Ինչո՞ւ մարդկանց հավանությունն այդպիսի նշանակություն ունի: Միևնույն ժամանակ, մենք ինչո՞ւ պետք է այդ հարցին զգուշորեն մոտենանք:
5. Եվս մեկ անգամ խորհեք երկրորդ գալուստի դրույթի կարևորության մասին: Մենք ինչպիսի՞ պատճառներ ունենք վստահելու այդքան արմատական մի բանի, որը բոլորովին նման չէ այն ամենին, ինչը երբևէ տեղի է ունեցել աշխարհում:

Վերջաբան

Պողոսն ուրախանում էր՝ Աստծուն շնորհակալություն հայտնելով թեսաղոնիկեցի հավատացյալների կյանքում Իր բազմաթիվ գործերի վկայության համար: Նրանց հետ կիսվելով իր աղոթքների բովանդակությամբ՝ Պողոսը հուսով էր նրանց դրդել հավատի և ավետարանչական ծառայության մեջ հետագա աճի:

ԱՌԱՔՅԱԼԻ ՕՐԻՆԱԿԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 2.1-12, Գործք առաքելոց 16, Երկրորդ Օրինաց 10.16, Սաղմոս 51.1-8, Բ Կորնթացիս 8.1-5, Ղուկաս 11.11-13:

Հիշելու համարը.

«Այլ ինչպես մենք Աստծուց ընտրվեցինք, որ ավետարանը մեզ հավատացվի, այնպես էլ խոսում ենք ոչ թե իբր մարդկանց հաճո լինողներ, այլ Աստծուն, որ մեր սրտերը քննում է» (Բ Թեսաղոնիկեցիս 2.4):

Հիմնական միտքը.

Պողոսը մեզ օգնում է ավետարանի լույսի ներքո վերլուծել մեր սրտերը և կյանքը՝ բացելով, թե ինչպիսին պետք է լինի ծառայության ճշմարիտ դրդապատճառը:

Տվյալ դասում մենք կդիտարկենք կարևորագույն անցումը փաստերից հետագա թեմաներին, որը Պողոսն անում է թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձում: Նա ուշադրությունն ուղղում է եկեղեցուց (Ա Թեսաղոնիկեցիս 1.2-10) առաքյալներին և Թեսաղոնիկեում նրանց փորձառությանը (2.1-12): Հաջորդ գլխում Պողոսն Աստծուն շնորհակալություն է հայտնում, որ Թեսաղոնիկեի հավատացյալներն իրենից օրինակ են վերցրել, և իրենք էլ են դարձել հավատարմության օրինակ: Այժմ, Ա Թեսաղոնիկեցիս 2.1-12-ում, Պողոսն ուշադրությունը կենտրոնացնում է առաքյալների կյանքի վրա, որը նրանց հնարավորություն է տալիս նմանակելու օրինակ լինել:

Թեև շատ տարբեր դրդապատճառներ կան վարդապետության, քարոզչության և ծառայության համար, Պողոսն ամենակարևորն է մատնանշում. ճշմարիտ ծառայությունը Աստծուն հաճելի է: Պողոսը եկեղեցու թվակազմի աճի մասին այնքան չէր անհանգստանում, որքան Աստծո շնորհի, ճշմարիտ հոգևոր սկզբունքների մեջ աճի համար:

Դասն ուսումնասիրելով՝ մենք ուշադիր կնայենք Պողոսի կյանքին: Նա բաց է անում իր հոգին՝ աջակցելով մեր հույսերին, երազանքներին և դրդապատճառներին, դրդելով մեզ ուրախություն բերել Աստծուն և բարերար ազդեցություն թողնել շրջապատի վրա:

Խիզախություն տառապանքների մեջ (Ա Թեսաղոնիկեցիս 2.1,2)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.12-ը՝ Գործք առաքելոց 16-ի լույսի ներքո: Ինչպիսի՞ զուգահեռ է անցկացնում Պողոսը Փիլիպպեի և Թեսաղոնիկեի ծառայության միջև: _____

Ա Թեսաղոնիկեցիս 2.1-ում Պողոսը նորից է շոշափում առաջին գլխի թեմաները: «Դուք ինքներդ գիտեք» խոսքերն այդ համարից համահունչ են Ա Թեսաղոնիկեցիս 1.5-ի խոսքերին: Իսկ Պողոսի հիշատակումը եկեղեցի «մտնելուն» զուգորդվում է Ա Թեսաղոնիկեցիս 1.9-ի հետ: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Պողոսը շարունակում է թեմաները, որոնք արծարծել է իր առաջին ուղերձում : Առաջին գլխի վերջում խոսվում էր այն մասին, որ բոլորին հայտնի էր դարձել թեսաղոնիկեցիների և Աստծո հանդեպ նրանց հավատի մասին: Երկրորդ գլխում նա քննարկում է այն, ինչ հայտնի է ընթերցողներին առաքյալների և հավատի հանդեպ նրանց հավատարմության մասին:

Պողոսը հիշում է, թե Փիլիպպեում որքան դաժան վարվեցին իր և Շիղայի հետ նրա համար, որ նրանք ավետարանն էին քարոզում: Փիլիպպեից դեպի Թեսաղոնիկե երկար ճանապարհի ամեն մի քայլը նրանց հիշեցնում էր վերապրածի մասին: Անկասկած, նրանց մարմինների վրա մնացել էին այդ ցավի հետքերը նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք Թեսաղոնիկե եկան: Այդ պատճառով թվում էր, թե առաքյալներին այն ժամանակ ավելի հեշտ կլիներ նոր քաղաքում ավետարանական ծառայության համար ընտրել ոչ այդքան ուղիղ մոտեցում: Վերջիվերջո, ո՞վ նրանց պիտի դատապարտեր այն բանից հետո, ինչի միջով նրանք անցել էին:

Սակայն թեսաղոնիկեցիները բաց էին ճշմարտությունն ընդունելու համար: Շրջապատող իրականությունն ասես պատվիրում էր առաքյալներին. «Այլևս երբեք ավետարանը մի՛ քարոզեք»: Սակայն ցավի և տառապանքների մեջ Պողոսն ու Շիղան լսում էին Աստծո ձայնը. «Եղե՛ք քաջ, ուժեղ»: Այդ պատճառով նրանք «համարձակվեցին մեր Աստծով խոսել» (Ա Թեսաղոնիկեցիս 2.2)՝ չնայած հերթական հալածանքների հավանական պոռթկմանը: Նրանց մարդկային վիճակի և Աստծուց ստացած հոգևոր ուժի միջև բացահայտ տարբերություն կար:

Արդյունքում, այդ արտաքին պարագաները Տերն Իր փառքի համար

օգտագործեց: Քարոզիչների տեսանելի վերքերը թեսաղոնիկեցիներին երկու կարևոր բաների մասին էին վկայում: Առաջին, առաքյալներն անձամբ համոզված են իրենց կողմից քարոզվող Ավետարանի ճշմարտության մեջ: Նրանք դա անձնական շահի համար չէին անում (Ա Թեսաղոնիկեցիս 2.3-6): Երկրորդ, ունկնդիրների համար պարզ էր, որ ամենակարող Աստված Պողոսի և Շիղայի հետ էր: Նրանց կողմից քարոզվող Ավետարանը հերյուրանք չէր: Այն ուղեկցվում էր Տիրոջ կենդանի ներկայությամբ, ինչը բացահայտվում էր հենց առաքյալների կյանքում (տե՛ս h. 13):

Արդյոք Աստված փոխե՞լ է ձեր կյանքը: Եթե այո, այդ փոփոխության ինչպիսի՞ ապացույցներ դուք կարող եք ներկայացնել: Արդյոք շրջապատողները դա տեսնո՞ւմ են: Արդյոք կարելի՞ է քրիստոնյայի փոխվելն անվանել տեսանելի:

Երկուշաբթի ***հուլիսի 30***

Առաքյալների բնավորությունը (Ա Թեսաղոնիկեցիս 2.3)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.3-ը: Պողոսն այստեղ ի՞նչ է ասում դրդապատճառների մասին: _____

_____

Հին աշխարհում մարդկանց քաջ հայտնի էր գաղափարները կամ սովորությունները փոխելու երեք հիմնական փաստարկ: Մարդիկ դատում են փաստարկի զորության մասին ըստ խոսողի բնավորության (հունարեն՝ էտոս), ըստ փաստարկի որակի կամ տրամաբանության (լոգոս), ըստ ունկնդիրներին ուղղված կոչի ուժի, ըստ նրանց հույզերի (պաֆոս): Ա Թեսաղոնիկեցիս 2.3-6-ում Պողոսը կենտրոնանում է առաքյալների բնավորության վրա՝ որպես քարոզի հիմնական տարրի, ինչը թեսաղոնիկեցիների կյանքում տանում էր արմատական փոփոխությունների:

Պողոսն այս համարներում իրեն հակադրում է հանրահայտ փիլիսոփաներին, ովքեր հաճախակի քարոզում էին՝ ելնելով սեփական շահից: Երրորդ համարում Պողոսը երեք բառ է օգտագործում՝ քարոզի կամ ծառայության մեջ հնարավոր սխալ դրդապատճառները նկարագրելու համար:

Առաջին բառն է՝ «մոլորություն» (մտավոր սխալ): Քարոզողը կարող է ոգևորությամբ հռչակել սխալ գաղափար: Նա կարող է լիովին անկեղծ

լինել, սակայն գտնվել ինքնախաբեության վիճակում: Նա կարող է մտածել, թե շրջապատին բարություն է անում, սակայն իրականում դրդված լինի սուտ գաղափարներով:

Երկրորդ խոսքը, «անմաքուր» (այսինքն, փչացած, բարոյազուրկ): Մարդկանց հրապուրում են հանրաճանաչ անձիք իրենց իշխանությամբ, գաղափարներով, ելույթներով: Որոշ հասարակական գործիչներ կարող են դրդված լինել ինտիմ զուգընկերների շրջանակն ընդլայնելու ցանկությամբ, ովքեր հաջողության և փառքի հետ միասին են հայտնվում:

Երրորդ բառն է՝ «կեղծավորություն» (նաև նշանակում է խայծ, ծուղակ, որոգայթ): Այդ դեպքում խոսողը գիտի, որ կեղծ գաղափարներ է ներկայացնում, սակայն գիտակցաբար փորձում է մարդկանց մոլորության տանել, որպեսզի դրանից անձնական որևէ օգուտ քաղի:

Պողոսն ու Շիղան վերոհիշյալ ոչ մի դրդապատճառով չէին առաջնորդվում: Եթե այդպես լիներ, ապա Փիլիպպեում նրանց փորձառությունը առիթ կհանդիսանար ավետարանումը դադարեցնելու համար: Թեսաղոնիկեում դրսևորված համարձակությունը նրանց մեջ գործող Աստծո զորության արդյունքն էր: Թեսաղոնիկեում հնչած Ավետարանի զորությունը (Ա Թեսաղոնիկեցիս 1.5) մասնակիորեն պայմանավորված էր առաքյալների բնավորությամբ և ճառագեց նրանց քարոզում: Միայն տրամաբանական փաստարկները և հուզական կոչերը բավական չէին լինի: Առաքյալների բնավորությունը և կյանքը ներդաշնակ էին նրանց քարոզին: Այդպիսի վավերականությունը մեծ ուժ ունի ժամանակակից աշխարհում, նույն բանն է եղել նաև այն ժամանակներում:

Մտածե՛ք ձեր բոլոր դրդապատճառների մասին, ինչը որ անում եք: Արդյոք դուք մաքո՞ւր եք: Արդյոք դուք ազա՞տ եք մոլորություններից, կեղծավորությունից և անմաքրությունից: Եթե ոչ, ապա ինչպե՞ս կարող եք դա ուղղել: Տե՛ս նաև Երկրորդ Օրինաց 10.16, Փիլիպպեցիս 4.13, Սաղմոս 51.1-8:

Երեքշաբթի ***հուլիսի 31***

Գոհացնելով Աստծուն (Ա Թեսաղոնիկեցիս 2.4-6)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.4-6-ը: Համեմատե՛ք Պողոսին ծառայության դրդած շարժառիթները աշխարհային այլընտրանքների հետ, որոնց մասին նա հիշատակում է: Ինչո՞ւ միշտ չէ,

որ հեշտ է տարբերությունը տեսնել, այլ խոսքերով, ինչպե՞ս մարդիկ կարող են իրենք իրենց խաբել սեփական դրդապատճառների մաքրության վերաբերյալ: Ինչո՞ւ է դա այդքան հեշտ ստացվում:

_____

_____

_____

«Ընտրվեցինք» թարգմանված բառը (Ա Թեսաղոնիկեցիս 2.4) փոխանցում է ստուգման կամ փորձության գաղափարը (տե՛ս Մ.Պ. Կուլակովի խմբագրությունը): Առաքյալներն Աստծուն թույլ տվեցին իրենց կյանքի և մտադրությունների մաքրությունը ստուգել: Այդ փորձության նպատակը ձգտումն էր համոզվել, որ նրանց կողմից քարոզվող ավետարանն իրենց կյանքի և քարոզի միջև եղած տարբերությամբ չի աղավաղվի:

Այն օրերի հանրածանոթ փիլիսոփաները գրում էին ինքնաքննման կարևորության մասին: Եթե դուք որևէ բան եք ցանկանում փոխել աշխարհում, սովորեցնում էին նրանք, դուք մշտապես պետք է քննեք ձեր դրդապատճառները և մտադրությունները: Պողոսն ավելի առաջ է գնում: Ինքնաքննումից բացի, նրան նաև Աստված է քննում: Աստված հետևում է, որպեսզի Պողոսի քարոզը համաձայնեցված լինի նրա ներքին կյանքի հետ: Վերջին հաշվով, միայն Նա է արժանի, որպեսզի Իրեն հաճո լինեն:

Արդյունավետ գործելու համար մարդկանց անհրաժեշտ է սեփական արժանապատվության զգացում: Հաճախ մենք փնտրում ենք այդ արժանապատվությունը հարստություն կուտակելու, նվաճումների կամ դրական կարծիքների մեջ, որոնք մեր մասին ունեն շրջապատի մարդիկ: Սակայն այդ ինքնահարգման աղբյուրները չափազանց դյուրաբեկ են և անցողիկ:

Ճշմարիտ և կայուն ինքնահարգանք կարելի է ձեռք բերել միայն ավետարանի միջոցով: Ճանաչելով այն ճշմարտությունը, որ Քրիստոսը մեզ համար մեռավ, մենք սկսում ենք սեփական արժանապատվության այնպիսի զգացում վերապրել, որն այս աշխարհում ոչ մի բան չի կարող սասանել:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.5,6-ը: Տվյալ հատվածը ի՞նչ է ավելացնում երրորդ համարում թվարկված երեք դրդապատճառներին: _____

_____

_____

Շողոքորթությունը կապված է մարդկանց բավարարելու ձգտման հետ, և դա ավետարանման հիմքի խոցուկ հիմնավորում է: Պողոսի

ծառայությունը կախված չէ այն բանից, թե ուրիշներն ինչ են իր մասին մտածում: Նա բացառում է ծառայությունը կատարելու նաև մի այլ աշխարհիկ դրդապատճառ՝ փողը: Որևէ ծառայության արդյունքում օրհնություն ստացած մարդիկ սովորաբար հաճույքով են միջոցներ զոհաբերում այդ ծառայությանը: Աստծո մշակների համար դա կարող է փորձություն դառնալ, նրանք կարող են բաց թողնել գլխավոր դրդապատճառը, այն, ինչն իսկապես նշանակություն ունի՝ Աստծուն հաճո լինելու ձգտումը:

Ի՞նչ եք կարծում, ձեր կյանքում ի՞նչն է Աստծուն ուրախացնում և ինչո՞ւ: Իսկ ի՞նչն է Նրան վշտացնում և ինչո՞ւ:

Հորեքշաբթի ***օգոստոսի 1***

Հոգալ ողջ հոգով
(Ա Թեսաղոնիկեցիս 2.7,8)

Ա Թեսաղոնիկեցիս 2.4-ում մենք տեսնում ենք, որ Պողոսի ծառայության գլխավոր ցանկությունն Աստծուն հաճո լինելն էր: Ա Թեսաղոնիկեցիս 2.6-8-ում Պողոսն ի՞նչ լրացուցիչ պատճառաբանության մասին է խոսում: _____

_____

_____

_____

Ժամանակակից աշխարհում փողը, սեքսը և իշխանությունը հաճախ դառնում են գլխավոր դրդապատճառները, որոնց հետ պայմանավորված է մարդու վարքը: Ա Թեսաղոնիկեցիս 2.3-6-ում Պողոսը տարբեր խոսքեր է օգտագործում՝ ցույց տալու, որ իր ծառայության մեջ նման դրդապատճառներ տեղ չեն գտել: Ագահությանը, անբարոյականությանը, ստին և շողոքորթությանը քրիստոնեական կյանքում և ծառայության մեջ տեղ չկա: Առաքյալներն առաջնորդվում էին ամեն ինչում Աստծուն հաճո լինելու ցանկությամբ:

Իններորդ համարում Պողոսը նկատում է, որ առաքյալները թեսաղոնիկեցիների համար բեռ չէին, կամ բառացիորեն չէին ծանրացնում նրանց: Որպես առաքյալներ և վարդապետներ՝ նրանք կարող էին պահանջել իրենց կարգավիճակի ճանաչումը: Նրանք կարող էին ակնկալել նյութական աջակցություն և առանձնահատուկ հարգալից վերաբերմունք: Սակայն Պողոսը Թեսաղոնիկեում մի կողմ նետեց այն ամենը,

ինչը կարող էր հարցականի տակ դնել իր դրդապատճառները կամ գայթակղության քար դառնալ նորադարձների ճանապարհին:

Այն ժամանակ, երբ առաքյալի հիմնական դրդապատճառն Աստծուն հաճո լինելն էր, 7 և 8 համարներում նա խոսում է ևս մեկ դրդապատճառի՝ թեսաղոնիկեցիների հանդեպ իր սիրո մասին: Ութերորդ համարը լցված է հուզական ջերմությամբ: Ավետարանի քարոզչությունը Պողոսի համար ավելին էր, քան պարզապես պարտականություն, նա իր սիրտը և իրեն մարդկանց էր տալիս:

Ինչպե՞ս Մակեդոնիայի եկեղեցիները, որոնցից մեկը Թեսաղոնիկեի եկեղեցին էր, արձագանքեցին առաքյալների մեղմ վերաբերմունքին: Բ Կորթնացիս 8.1-5: Դա մեզ ի՞նչ է սովորեցնում նրանց բնավորության կարևորության մասին, ովքեր վկայում են շրջապատի մարդկանց:

Երկուշաբթի օրվա դասի մեջ մենք հիշատակեցինք երեք հիմնական փաստարկներ, որոնք թույլ էին տալիս համոզել հին աշխարհի մարդկանց՝ խոսողի բնավորությունը (էտոս), ներկայացվող փաստարկի տրամաբանությունը (լոգոս) և հույզերին կամ ինքնասիրությանը դիմելը (պաֆոս): 4-6 համարներում Պողոսը ցույց է տալիս առաքյալների բնավորությանը՝ որպես նրանց հետևելու պատճառ: 7 և 8 համարներում մենք տեսնում ենք հուզերին դիմելը, պաֆոս, առաքյալների և թեսաղոնիկեցիների միջև առաջացած հուզական կապերը: Ավետարանն առանձնահատուկ ուժ ունի, երբ սրտին է դիպչում:

Մտածե՛ք այն մարդու բնավորության մասին, ով ձեզ վրա լավ հոգևոր ազդեցություն է ունեցել: Նրա մեջ ի՞նչ կար, որը հատուկ կերպով կպել է ձեր սրտին: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել նման որակներ դրսևորել:

Հինգշաբթի ***օգոստոսի 2***

Չլինել բեռ (Ա Թեսաղոնիկեցիս 2.9-12)

Բացի ավետարանը քարոզելուց, Պողոսը Թեսաղոնիկեում էլ ինչո՞վ էր զբաղվում և ինչո՞ւ: Ա Թեսաղոնիկեցիս 2.9,10: _____

Պողոսի խոսքերն այն մասին, որ նա «գիշեր ու ցերեկ» աշխատում էր, բառացիորեն հասկանալու դեպքում ոմանց դրանք կարող են չափազանցություն թվալ: Սակայն այստեղ ավելի շուտ փոխանցվում է

որակական գաղափարը, քան ծախսված ժամանակի փաստացի քանակը: Փաստորեն, Պողոսն ասում է, որ ինքն աշխատում էր շատ ավելին անել, քան պարտքի զգացումն էր պահանջում, ջանում էր չծանրաբեռնել նրանց. առաքյալը չէր ցանկանում, որպեսզի որևէ բան խանգարեր իր վկայությանը:

Ավելին, առաքյալն իրեն այնպես էր պահում, որպեսզի ոչ ոքի չվիրավորի՝ ո՛չ Աստծուն, ո՛չ մարդկանց (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 2.10, Ղուկաս 2.52): Պողոսը և մնացած առաքյալները ձգտում էին հավատացյալների առաջ «անբասիր» կերպով վարվել, որպեսզի ավետարանը դառնա նրանց ուշադրության կենտրոնը:

Պողոսը ինչպիսի՞ համանմանության դիմեց Ա Թեսաղոնիկեցիս 2.11,12-ում՝ նկարագրելու թեսաղոնիկեցիների հանդեպ իր վերաբերմունքը: Տե՛ս նաև Ղուկաս 11.11-13-ը: Ի՞նչ է սովորեցնում այդ համանմանությունը: _____

_____

_____

_____

Լավ հայրը ոչ միայն պարզապես սիրում է, այլև սահմաններ է դնում և աջակցում: Նա հարմարեցնում է դաստիարակությունը և կարգապահությունը յուրաքանչյուր երեխայի բնավորությանն և հուզական վիճակին: Երեխայի անհատականությունից կախված և իրավիճակից ելնելով՝ հայրը կարող է աջակցել, հանդիմանել կամ պատժել նրան:

Պողոսի ավետարանչական մոտեցման մեջ կա որոշակի լարվածություն: Մի կողմից, նա միշտ ձգտում էր իր մոտեցումը հարմարեցնել մարդկանց բնավորությանը և դրությանը, մյուս կողմից, նա շատ նրբանկատ էր վավերականությունը պահպանելու հանդեպ, որպեսզի արտաքին վարքը և ներքին վիճակը ներդաշնակ լինեն: Մարդն ինչպե՞ս կարող է լինել անխարդախ և անկեղծ և միևնույն ժամանակ, ամեն ինչ լինել բոլոր մարդկանց համար:

Պատասխանը սերն է, որը Պողոսը տածում էր նորադարձների հանդեպ: Նա ամեն հնարավորն անում էր, որպեսզի նրանց համար անկեղծության օրինակ դառնա. միևնույն ժամանակ, նա գիտակցում էր, որ ոչ բոլորն էին պատրաստ լուրն ընդունել (տե՛ս նաև Հովհաննես 16.12): Այսպիսով, առաքյալն վաստակում էր իր ձեռքերով և հարմարեցնում իր խրատները, որպեսզի խուսափեր ավելորդ պատնեշներից մարդկանց ճանապարհին, ովքեր պետք է ավետարանն ընդունեին: Դա իսկապես անձնազոհության մեծ դաս է:

Հետագա ուսումնասիրության համար

«Որքան էլ վեհ լինի արտաքին դավանանքը, եթե մարդու սիրտը լցված չէ սիրով Աստծո և մոտիկի հանդեպ, նա Քրիստոսի ճշմարիտ աշակերտը չէ... Նույնիսկ եթե նա շատ առատաձեռն մարդ լինի և իր ունեցվածքն աղքատներին տա, եթե դրդապատճառը անշահախնդիր սերը չէ, այլ ուրիշ մի բան, նա Աստծո բարեհաճությունը չի գտնի: Իր նախանձախնդրությամբ նա նույնիսկ կարող է նահատակվել, սակայն եթե նրա սրտում սեր չլինի, Աստված նրան խաբված մոլեռանդ կամ սնապարծ կեղծավոր կհամարի» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 318,319):

«Պողոսը հնարավորությունը բաց չէր թողնում հավատացյալներին շարադրելու Սուրբ Գրքի հստակ ուսմունքն Աստծո գործին աջակցելու մասին... միևնույն ժամանակ, իր ծառայության տարբեր ժամանակահատվածներում, խոշոր քաղաքներում նա արհեստով էր զբաղվում՝ ապրուստի գումար վաստակելու... Մենք կարդում ենք, որ առաջին անգամ Պողոսն իր ձեռքերով սկսեց վաստակել Թեսաղոնիկեում: Միևնույն ժամանակ նա քարոզում էր Աստծո Խոսքը... (Ա Թեսաղոնիկեցիս 2.5,9, Բ Թեսաղոնիկեցիս 3.8,9)...

Սակայն Պողոսն այդ ժամանակը կորած չէր համարում... Իր հետ համագործակցողներին նա հոգևոր հարցերում հորդորում էր՝ աշխատասիրության և ճշտակատարության օրինակ տալով: Նա հնարամիտ, փորձառու աշխատող էր, գործերում՝ ջանասեր: Նա հոգով ջերմեռանդ էր և Տիրոջն էր ծառայում (Հռոմեացիս 12.11)» (Է.Ուայթ, Ավետարանի ծառայողները, 234-236):

Հարցեր քննարկման համար

1. Մտածե՛ք ծանր ժամանակի մասին, որը դուք վերապրել եք (ֆիզիկական, հոգևոր, հուզական տառապանքներ): Ձեզ ինչպե՞ս հաջողվեց պահպանել ուրախությունը և արիությունը՝ չնայած վերապրածին: Ինչո՞ւ է ավելի հեշտ ուրախությունը և արիությունը պահպանել խոսքով, քան գործով:
2. Հիշե՛ք մարդու, ում կյանքը չի համապատասխանում քրիստոնյա կոչմանը: Այդ մարդն ինչպիսի՞ ազդեցություն թողեց Տիրոջ հետ ձեր փոխհարաբերությունների վրա:

3. Ինչպիսի՞ վտանգներ կարող են թաքնված լինել այն մարդկանց հետ հուզական կապում, ում մենք ավետարանում ենք: Ինչպիսի՞ խելամիտ սահմաններ են անհրաժեշտ մարդկանց հետ փոխհարաբերություններում, ում հետ աշխատում եք:

Վերջաբան

Ուսումնասիրվող հատվածում Պողոսը բացեց իր սիրտը՝ ցույց տալու ծառայության ճշմարիտ դրդապատճառները: Ամենակարևոր դրդապատճառն առաջին հերթին Աստծուն, այլ ոչ թե մարդկանց հաճոյանալն է, ում ծառայում ենք: Այնպիսի դրդապատճառներ, ինչպիսիք են փողը, սեքսը և իշխանությունը, Աստծուն ուրախացնել ցանկացող մարդու սրտում չպետք է տեղ գտնեն: Ծառայության մյուս կարևոր դրդապատճառը կործանվող մարդկանց հանդեպ ջերմ սերն է: Ա Թեսաղոնիկեցիս 2.1-12-ում հստակորեն ներկայացված են այդ երկու դրդապատճառները:

ԸՆԴՄԻՇՏ ԸՆԿԵՐՆԵՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 2.13-3.13, Հռոմեացիս 9.1-5, 11.1-12, 24-32, Մատթեոս 24.9-22, 10.42:

Հիշելու համարը.

«Որ ձեր սրտերը հաստատվեն անարատ սրբությունով Աստծո և մեր Հոր առաջին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսն իր ամեն սրբերով գալու ժամանակում» (Ա Թեսաղոնիկեցիս 3.13):

Հիմնական միտքը.

Պողոսը շարունակում է գովաբանել թեսաղոնիկեցիներին այն ամեն բարու համար, որը նրանց մեջ տեսնում է, և նեցուկ է լինում հալածանքների մեջ, որոնք նրանք վերապրում են:

Նշված հատվածները կարդալով՝ մենք կարող ենք տեսնել, որ Պողոսի համար թեսաղոնիկեցիները ոչ միայն պարզապես եկեղեցու անդամներ էին, այլ ընկերներ: Պողոսի և այդ մարդկանց միջև գոյություն ունի խորը հուզական կապ, և առաքյալը շեշտը դնում է այդ կապվածության վրա՝ ձգտելով նրանց գիտակցությանը հասցնել իրենց հանդեպ տածած մեծագույն սերը: Անկասկած, նրա խոսքերն անկեղծ են, և դրանք հավատացյալներին կօգնեն վերապրել քննադատության հեղեղը, որը շուտով կթափվի նրանց վրա:

Այս հատվածը Պողոսն սկսում և ավարտում է աղոթքով: Որոշակի իմաստով ողջ հատվածը գրված է աղոթող սրտով: Այդպիսի կենտրոնացումն աղոթքի վրա բացատրվում է Պողոսի ցանկությամբ՝ թեսաղոնիկեցիներին տեսնել «անարատ սրբությունով» (Ա Թեսաղոնիկեցիս 3.13, Ա Թեսաղոնիկեցիս 2.19,20), Քրիստոսի երկրորդ գալուստին պատրաստ:

Թեսաղոնիկեցիների հետ Պողոսի ընկերությունն ավելի խորն է, քան երկրային ընկերական փոխհարաբերությունները. այն անցնում է երկրային ժամանակի և պատմության եզրագծված սահմանները: Պողոսը ցանկանում է Թեսաղոնիկեի հավատացյալների հետ անցկացնել ողջ հավիտենությունը: Ողջ ուղերձի ընթացքում դիտվող այդ ցանկությունը մասնակիորեն բացատրում է նրա խորը անհանգստությունը թեսաղո-

նիկեցիների համոզմունքների և վարքի համար: Պողոսը սիրում է այդ մարդկանց և ցանկանում, որպեսզի նրանք պատրաստ լինեն Քրիստոսի վերադարձին:

Միաշաբթի ***օգոստոսի 5***

Հուդայի եկեղեցիներին ընդօրինակելով (Ա Թեսաղոնիկեցիս 2. 13-16)

Ա Թեսաղոնիկեցիների 2.13-16-ի հպանցիկ ընթերցման ժամանակ կարող է թվալ, որ այստեղ Պողոսը նահանջում է Աստծուն փառաբանելու և նորադարձների մասին հոգատարության թեմայից (Ա Թեսաղոնիկեցիս 2.2-12): Սակայն դա այդպես չէ: 13-րդ համարը շարունակում է պատմել այն մասին, թե ինչպես թեսաղոնիկեցիներն արձագանքեցին բարի լուրին, որը նրանց քաղաք մտավ առաքյալների միջոցով:

14-րդ համարում Պողոսը վերադառնում է ընդօրինակելու թեմային: Թեսաղոնիկեում հալածանքներն արձագանքն էին ավելի վաղ ծագած Հուդայի քրիստոնյաների հալածանքների: Որոշ հրեաներ Հուդայում հետապնդում էին իրենց քրիստոնյա-համացեղակիցներին, երբ միևնույն ժամանակ Թեսաղոնիկեում հեթանոս և հրեա հարևանները միասին հետապնդում էին հեթանոսներից դարձի եկած քրիստոնյաների մեծ խմբի: Պողոսն այստեղ ցույց է տալիս, որ քրիստոնյաների հանդեպ հալածանքները կապված են ավելի խորը պատճառների հետ: Քրիստոսի հետևորդները բախվելու են հակազդեցությունների և նույնիսկ հետապնդումների:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.14-16-ը: Ի՞նչ լուր է այս հատվածը մեզ տալիս այսօր: Իսկ ի՞նչն է, որ որոշակիորեն այն չի սովորեցնում: _____

_____

_____

Պողոսն այստեղ բացում է իր զգացմունքերը հրեաների հատուկ խմբի վերաբերյալ, ովքեր հետապնդում էին նրան՝ տարաձայնություններ սերմանելով և առաքյալներին հակառակվելով: Աստվածաշնչյան որոշ հատվածներ (տե՛ս նաև Մատթեոս 23.29-38) կոպիտ ձևով աղավաղվել և խեղաթյուրվել են հրեաների հետապնդումն «արդարացնելու» նպատակով, սակայն այդ համարների նման համապարփակ կերպով օգտագործումը դուրս է գալիս այն ամենի սահմաններից, ինչ Պողոսն այստեղ գրում է: Գլխավորապես նա խոսում է հրեական իշխանու-

թյունների մասին, ովքեր համագործակցում էին հռոմեացիների հետ Հիսուսի մահապատժի հարցում, և միշտ և ամենուրեք խոչընդոտում էին ավետարանի քարոզմանը: Փաստորեն, Պողոսն ասես կրկնում էր Հիսուսի խոսքերը նրանց մասին, ովքեր փորձում էին Նրան սպանել (Մատթեոս 23.29-36):

Մենք չպետք է մոռանանք, որ Պողոսն ինքը հրեա էր: Նա չէր պարսավում ողջ ժողովրդին: Հիսուսը ֆիզիկական մարմնով հրեա էր: Եվ առաջին աշակերտներն էլ հրեաներ էին: Նոր կազմավորվող եկեղեցին հրեաներից էր կազմված: Այնպիսի հրեաներ, ինչպիսիք էին Շիղան, Բառնաբասը և Տիմոթեոսը, Պողոսի հավատարիմ ընկերներն էին (Հռոմեացիս 9.1-5, 11.1-12, 24-32): Քրիստոսը մեռավ հանուն յուրաքանչյուր մարդու փրկության (Հռոմեացիս 14.15, Ա Կորնթացիս 8.11): Ազգի հանդեպ նախապաշարմունքն անընդունելի է խաչի պատվանդանի մոտ ապրողների համար:

Մենք ինչպե՞ս ենք վերաբերվում մարդկանց: Արդյոք ձեր սրտում էթնիկ նախապաշարմունքները բույն հյուսե՞լ են:

Երկուշաբթի օգոստոսի 6

Պողոսի հույսը և ուրախությունը (Ա Թեսաղոնիկեցիս 2.17-20)

Տասնչորս համարներում (Ա Թեսաղոնիկեցիս 2.17-3.10) Պողոսը պատմում է դեպքերի մասին, որոնք կատարվել են իր հետ Թեսաղոնիկեի հավատացյալներից բաժանվելուց հետո: Ընկերության թեման համակում է ողջ հատվածը: Պարզ երևում է, որ թեսաղոնիկեցիները պարզապես այցելուներ չեն, այլ առաքյալի իսկական ընկերները: Ողջ հատվածը լի է խորը հույզերով:

Պողոսը ցանկանում է, որպեսզի եկեղեցու հասցեին ուղղված իր հետագա խորհուրդները և քննադատական դիտողությունները (Ա Թեսաղոնիկեցիս 4 և 5) ընթերցվեն իր սիրո և նրանց հանդեպ հոգատարության լույսի ներքո: Իր սիրո շնորհիվ նա իրավունք ստացավ այդ եկեղեցուն խորհուրդներ տալ: Խորհուրդները լավագույնս ընկալվում են այն ժամանակ, երբ դրանք սիրող սրտից են բխում:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 2.17-20-ը: Պողոսի ասածներից ի՞նչն է, որ այսօր մեզ համար մեծ նշանակություն ունի: _____

17-րդ համարի գլխավոր բայը (սովորաբար թարգմանվում է որպես

«լինելով բաժանված» կամ «պոկված«) իր մեջ կրում է «որբանալ» գաղափարը: Երբ Պողոսին ստիպում են շտապ լքել Թեսաղոնիկեն, նա զգում է փոխհարաբերությունների կորուստ, որը կարելի է համեմատել ծնողների մահվան հետ: Առաքյալը շատ է ցանկանում նրանց մոտ գալ, քանի որ ողջ սրտով նրանց կարոտում է: Նրանք իր կողքին չեն, սակայն նրա սրտում են: Հաջորդ տեքստում նա սատանային մեղադրում է իրենց հանդիպման ուշացման մեջ՝ ցույց տալով մեծ պայքարի իրական լինելը:

Սակայն թեսաղոնիկեցիների հավատացյալներին տեսնելու Պողոսի ձգտումը ոչ միայն է բխում է փոխհարաբերությունները պաշտպանելու ցանկությունից այլև կապված է վերջին ժամանակների իրադարձությունների հետ: Պողոսը փափագում է նրանց Հիսուսին ներկայացնել երկրորդ գալուստից հետո: Նրանք Քրիստոսին իր ծառայության ապացույցն են, նրա վախճանաբանության ուրախությունը և պարծանքը: Պողոսը ցանկանում է, որպեսզի երկրի պատմության ավարտին տրվի վկայությունը, որ նրա կյանքն օժանդակել է շրջապատի մարդկանց կյանքի փոփոխությանը:

Այս հատվածը նաև վկայում է այն մասին, որ մեզ անհրաժեշտ է հստակ կերպով տեղաբաշխել առաջնահերթությունները: Երկրի վրա մեր գոյությունը պարզապես «շոգի» է (Հակոբոս 4.14), որը, սակայն, ունի հավիտենական հետևանքներ: Պողոսի ուշադրությունը և առաջնահերթություններն ուղղված են հավիտենականին, որն ունի անանց արժեք և կարևորություն: Վերջիվերջո, եթե դուք իսկապես մտածում եք աշխարհի վերջնական ճակատագրի մասին, ապա ի՞նչը կարող է առավել կարևոր լինել, քան կորչողներին փրկելը:

Ինչո՞ւ մեր բոլոր գործողությունները պետք է այս կամ այն կերպ վերաբերեն կորչողների փրկությանը: Կարելի է հիանալի կերպով պատմել նման իդեալի մասին, սակայն իրականում մենք ինչպե՞ս կարող ենք ապրել այդ նպատակին համապատասխան:

Երեքշաբթի ***օգոստոսի 7***

Տիմոթեոսի փոխարինական այցելությունը (Ա Թեսաղոնիկեցիս 3. 1-5)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 3.1-5-ը և Մատթեոս 24.9-22-ը: Ո՞ր ավելի ծավալուն համատեքստում է Պողոսը տեսնում իր և թեսաղոնիկեցիների տառապանքները: _____

_____

Պողոսն այնքան է անհանգստանում թեսաղոնիկեցիների բարօրության համար, որ որոշում է հրաժարվել Աթենքում Տիմոթեոսի ընկերակցությունից՝ հավատի լուրեր ստանալու համար, թե ինչ է տեղի ունենում Թեսաղոնիկեում: Նրանց հանդեպ խորը կարոտի պատճառով առաքյալը գերադասում է առանց Տիմոթեոսի մնալ, քան թեսաղոնիկեցիների մասին լուր չունենալ:

Քանի որ Տիմոթեոսը պետք է Պողոսին փոխարիներ, առաքյալը ձգտում է լավագույն կերպով նրան եկեղեցուն ներկայացնել: Տիմոթեոսը Պողոսի համար «եղբայր» է, «Աստծո ծառա» և «ավետարանի գործակից»: Որոշ հունական ձեռագրերում Տիմոթեոսը անգամ անվանված է «Աստծո մշակ»: Սա չափազանց բարձր գովասանք է: Պողոսը գիտի, որ Տիմոթեոսի առաքելությունը դժվար է լինելու, այդ պատճառով իր կողմից ամեն հնարավորն անում է, որպեսզի նրան այնպես ընդունեն, ասես դա հենց Պողոսն է:

3-րդ և 4-րդ համարները մեզ պատկերացում են տալիս այն մասին, թե ինչ կասեր Պողոսը թեսաղոնիկեցիներին, եթե կարողանար նրանց մոտ գնալ: Հատուկ բառերը, որոնք Պողոսն օգտագործում է՝ նկարագրելու նրանց տառապանքները, տիպիկ են վերջին ժամանակների իրադարձություններին վերաբերող նկարագրություններին, ինչպես, օրինակ, Մատթեոս 24.9-22-ը: Վշտերը հավատացյալներին չպետք է զարմացնեն: Մեզ նախազգուշացրել են դրանց մասին:

Քրիստոնյաների տառապանքները մեր գիտակցության մեջ արթնացնում են վերջին ժամանակների պատկերները, երբ Քրիստոսի ճշմարիտ հետևորդները հալածանքների կհանդիպեն (Հայտնություն 13.14-17): Երբ այդ տառապանքները վրա հասնեն, մենք դրանցում պետք է տեսնենք մարգարեությունների կատարումը և ավելի քաջալերվենք, քան հիասթափվենք: Մարգարեությունը չի ձգտում բավարարել ապագայի վերաբերյալ մեր հետաքրքրասիրությունը, նրա խնդիրն է մեզ հստակ վստահություն տալ այն ապրումների մեջ, որոնց հետ մենք ամեն օր բախվում ենք:

5-րդ համարում առաքյալը Տիմոթեոսի գալու ևս մեկ պատճառ է նշում: Պողոսն անհանգստանում է, որ դժվարությունները, որոնց հետ բախվում են թեսաղոնիկեցիները, կարող են նրանց տանել հավատի կորստի: Նա անհանգստանում է, որ Թեսաղոնիկեում նրա առաքելությունն ինչ-որ կերպ կարող է զուր լինել:

Մենք ի՞նչ է պետք ամեն օր անենք, որպեսզի մշտապես պատրաստ լինենք անխուսափելի փորձություններին, որոնք մատուցում է կյանքը:

Տիմոթեոսի այցելության արդյունքը (Ա Թեսաղոնիկեցիս 3.6-10)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 3.6-8-ը: Տիմոթեոսն ուղարկված էր թեսաղոնիկեցիներին քաջալերելու նպատակով: Տիմոթեոսի զեկույցի մեջ ի՞նչը քաջալերեց և ուրախացրեց Պողոսին: Այլ խոսքերով, Տիմոթեոսն ի՞նչ դրական բան տեսավ թեսաղոնիկեցիների մեջ: _____

_____

_____

«Հիմա երբ որ» բառակապակցությունը (հ. 6) շատ արտահայտիչ է: Պողոսը որոշեց առանց ժամանակ կորցնելու թեսաղոնիկեցիներին լուր ուղարկել: Տիմոթեոսից լուր ստանալով՝ նա անմիջապես նրանց գրեց առաջին նամակը:

Ա Թեսաղոնիկեցիս 3.9,10-ից մենք ի՞նչ ենք իմանում Պողոսի աղոթքի կյանքի մասին: Դա մեզ ի՞նչ է սովորեցնում: _____

_____

_____

_____

«Ամեն ժամանակ» և «անդադար» խոսքերի բացակայությունը (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 1.2,3) ենթադրում է, որ Պողոսի ուրախության և երախտագիտության մեջ, որոնք նա զգում էր թեսաղոնիկեցիների համար աղոթելիս, ինչ-որ նոր բան հայտնվեց: Ա Թեսաղոնիկեցիս 3.9,10-ի ուրախությունը և երախտագիտությունը Տիմոթեոսի բերած լուրի անմիջական արձագանքն են:

Թեսաղոնիկեցիների հավատին ի՞նչն էր պակասում (Ա Թեսաղոնիկեցիս 3.10): Հաջորդ տեքստն այդ մասին ոչինչ չի ասում: Ավելի ուշ պարզ կդառնա, որ Պողոսին անհանգստացնող հարցն ավելի շուտ գործնական բնույթի էր, քան աստվածաբանական: 4-րդ և 5-րդ գլուխները ցույց են տալիս, որ թեսաղոնիկեցիներին անհրաժեշտ էր իրենց հավատը գործնականում դրսևորել: Թեև նրանք զուրկ չէին ո՛չ սիրուց, ո՛չ հավատից, և Տիրոջում հաստատված էին, ուղերձի հետագա ընթերցման ժամանակ ակնհայտ է դառնում, որ նրանք դեռևս հոգևոր աճի կարիք ունեին:

Ինչո՞ւ է աղոթքն այդքան կարևոր Տիրոջ հետ մեր հարաբերությունների մեջ: Որքա՞ն ժամանակ եք անցկացնում աղոթքում: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում ձեզ համար աղոթքի

կարևորության մասին: Դուք ինչպե՞ս կարող եք ձեր աղոթքի կյանքը բարելավել:

Հինգշաբթի *օգոստոսի 9*

Պողոսի նոր աղոթքները (Ա Թեսաղոնիկեցիս 3.11-13)

Հիսուսի երկրորդ գալուստը հոգևոր աճի համար հզոր խթանիչ է: Ցանկացած անարգանք և հալածանք կկանգնեն արդարադատության առջև: Սիրո և բարության ցանկացած դրսևորում կնշվի և կփոխհատուցվի: (տե՛ս, օրինակ, Մատթեոս 10.42): Դա նշանակում է, որ մեր կյանքում ցանկացած գործողություն, որքան էլ որ փոքր լինի այն, որոշակի նշանակություն ունի կատարվող իրադարձությունների վերջնական պատկերում:

Սակայն Պողոսի համար կարևոր է նաև այն, որ երկրորդ գալուստը կվերամիավորի ընտանիքները և ընկերներին, ում փոխհարաբերությունները Հիսուսի սխրանքի շնորհիվ կտևեն հավիտյան: Մեր դասը նույնպես դրա վրա է շեշտը դնում: Քրիստոնեական փոխհարաբերությունները ժամկետը լրանալու խնդիր չունեն: Դրանք ստեղծված են հարատևելու համար:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 3.11-13-ը: Պողոսը Տիմոթեոսի վերադարձից հետո ի՞նչ ավելացրեց թեսաղոնիկեցիների համար իր աղոթքներին: _____

_____

_____

Ա Թեսաղոնիկեցիս 3.11-13 տեքստերը հնչում են ինչպես երկրպագության ավարտի օրհնության խոսքեր: Իհարկե, Պողոսը ցանկանում է Թեսաղոնիկե վերադառնալ և լրացնել եկեղեցում հավատի պակասությունը (Ա Թեսաղոնիկեցիս 3.10): Եվ թեև առաքյալը հնարավորություն չունի վերադառնալ, նա կարող է Աստծուն աղաչել թեսաղոնիկեցիների մեջ աճեցնել սերը, և ոչ միայն միմյանց, այլ նաև մոտիկների, հարևանների և շրջապատի հանդեպ: Հիսուսի վերադարձի ժամանակ այդ սերը նրանց բնավորության կարևոր բաղադրիչը կլինի:

Մի փոքր զարմացնում է 13-րդ համարում Պողոսի դիտողությունն այն մասին, որ Հիսուսը կգա «իր ամեն սրբերով»: «Սրբեր» խոսքը Նոր կտակարանում սովորաբար օգտագործվում է մարդկանց վերաբերյալ: Մյուս կողմից, երկրորդ գալուստը նկարագրող նորկտակարանյան տեքս-

տերը սովորաբար Հիսուսին նկարագրում են «գալիս» հրեշտակների, այլ ոչ թե մարդկանց ուղեկցությամբ (Մատթեոս 24.30,31, Մարկոս 8.38, 13.27): Այդ դեպքում, ովքե՞ր են 13-րդ համարի «սրբերը»:

Ակնհայտ է, որ Պողոսն այս համարում ընդօրինակել է Զաքարիա մարգարեի 14.5-ի լեզուն և կիրառել է այն Քրիստոսի երկրորդ գալուստի համար: Հին Կտակարանում «սրբերը» հրեշտակներ են (տե՛ս նաև Երկրորդ Օրինաց 33.2, Դանիել 7.10): Մյուս կողմից, Նոր կտակարանը «սուրբեր» բառը նոր իմաստով է օժտում. դրանք այն մարդիկ են, ում Հիսուսն Իր արդարությունն է պարգևել: Սակայն Ա Թեսաղոնիկեցիս 3.13-ում Պողոսը վերադառնում է «սուրբեր» բառի հինկտակարանյան սահմանմանը՝ մատնանշելով Աստծո ներկայության մեջ գտնվող երկնային արարածներին: Հենց նրանք կուղեկցեն Աստվածամարդ Հիսուսին Նրա երկիր վերադառնալու ժամանակ:

Ուրբաթ ***օգոստոսի 10***

Հետագա ուսումնասիրության համար

«Երբ Պողոսը Կորնթոսում էր, Մակեդոնիայից ժամանեցին Շիղան և Տիմոթեոսը, ինչը չափազանց ուրախացրեց առաքյալին: Նրանք «հավատի և սիրո մասին բարի լուր» բերեցին նրանց մասին, ովքեր ճշմարտությունն ընդունեցին ավետարանի լրաբերների՝ առաջին անգամ Թեսաղոնիկե այցելելու ժամանակ: Պողոսը քնքշորեն, ողջ սրտով սիրում էր այդ հավատացյալներին, ովքեր փորձության և շրջապատի թշնամական վերաբերմունքի մեջ Աստծուն հավատարիմ մնացին» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 255):

«Ճշմարիտ սերը երկնային ծագում ունի, եսասեր չէ և անփոփոխ է: Այն մարդկային փառաբանումից կախված չէ: Աստծո շնորհն ընդունած սիրտը տոգորվում է անսահման սիրով Աստծո և նրանց հանդեպ, ում համար Քրիստոսը մեռավ: Նրա «ես«-ը հետամուտ չի լինում համընդհանուր ճանաչմանը: Նա ուրիշներին սիրում է ոչ այն պատճառով, որ նրանք էլ իրեն են սիրում կամ բարձր են գնահատում նրա արժանապատվությունը, նա իր մոտիկներին սիրում է, որովհետև նրանք բոլորը Քրիստոսով փրկագնված են: Եթե մարդիկ սխալ են մեկնաբանում նրա մղումները, խոսքերը կամ գործողությունները, նա չի վիրավորվում, այլ շարունակում է աշխատել: Նա բարի է և հոգատար, համեստ, և միևնույն ժամանակ, հույսով լի՝ մշտապես վստահելով Աստծո ողորմությանը և սիրուն» (Է.Ուայթ, Քրիստոսի առակները, 101,102):

Հարցեր քննարկման համար

1. «Քրիստոսի առակները» գրքում և շատ ուրիշ տեղերում էլեն Ուայթն օգտագործում է. «Հոգիներ, որոնց համար Քրիստոսը մեռավ» արտահայտությունը: Ո՞ւմ է ներառում այդ արտահայտությունը: Արդյո՞ք աշխարհի յուրաքանչյուր արարածի: Թե՞ միայն Քրիստոսում եղբայրակիցներին: Եթե Քրիստոսը իսկապես բոլորի համար է մեռել, ապա ինչո՞ւ բոլորը չեն փրկվի:
2. Ի՞նչ դեր են խաղում ամուր փոխհարաբերություններ, երբ եղբորը կամ քրոջն անհրաժեշտ է խորհուրդ տալ կամ նկատողություն անել: Այդ հարցում մենք ի՞նչ կարող ենք սովորել Պողոսի օրինակից: Դա մեզ ինչպե՞ս կարող է օգնել շրջապատին ծառայելու մեջ:
3. Թեսաղոնիկեի հավատացյալների հանդեպ Պողոսի սերը և հոգատարությունը ակնհայտ են: Պողոսի սերը արտացոլում է Հիսուսի դրսևորած սերն Իր երկրային կյանքի ընթացքում: Սերը զորավոր ուժ ունի մարդկանց սրտերը փափկացնելու և Աստծո շնորհին ընդառաջ դրանք բացելու համար: Մենք ինչպե՞ս կարող ենք սիրել շրջապատողներին ավելի, քան հիմա: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ավելի լավ այդ սերն արտահայտել:

Վերջաբան

Ա Թեսաղոնիկեցիս 2.13-3.13-ում Պողոսը նկարագրում է իրադարձությունները և իր ապրումները այն ժամանակահատվածում, որն ընկած էր հետևյալ երկու իրադարձությունների միջև՝ երբ իրենց ստիպեցին Թեսաղոնիկեն լքել, և երբ Տիմոթեոսը Կորնթոս ժամանեց՝ եկեղեցուց լուրեր բերելու: Այստեղ հիմնական շեշտը դրվում է թեսաղոնիկեցի հավատացյալների հանդեպ Պողոսի խորը կապվածության վրա:

ՍՐԲՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՊՐԵԼՈՎ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 4.1-12, Մատթեոս 25.34-46, Ծննդոց 39.9, Հովհաննես 13.34,35:

Հիշելու համարը.

«Որովհետև Աստված մեզ չկանչեց պղծության մեջ, այլ սրբության մեջ» (Ա Թեսաղոնիկեցիս 4.7):

Հիմնական միտքը.

Թեև ինտիմ հարաբերությունները Աստծո պարգևն են, սակայն մարդիկ կարող են այն, ինչպես և ցանկացած այլ պարգև չարաշահել:

Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձի երեք ներածական գլուխները հիմնականում կենտրոնացած են անցյալի վրա: Սակայն 4-րդ և 5-րդ գլուխներում Պողոսն ապագային է դիմում: Թեսաղոնիկեցիների հավատի մեջ որոշ թերություններ կային (Ա Թեսաղոնիկեցիս 3.10), և առաքյալը ցանկանում է օգնել նրանց ուղղելու այդ թերությունները: Ուղերձը պետք է սկսեր ուղղելու գործընթացը, սակայն ամբողջովին այն կզարգանար միայն այն բանից հետո, երբ Պողոսը և թեսաղոնիկեցիները նորից կհանդիպեին:

Ա Թեսաղոնիկեցիս 4.1-ից սկսած՝ Պողոսը, հիմնվելով ընկերական փոխհարաբերությունների վրա, որոնք նա հաստատել է առաջին երեք գլուխներում, թեսաղոնիկեցիներին տալիս է գործնական խորհուրդներ իրենց ամենօրյա կյանքի վերաբերյալ:

Այս շաբաթվա ուսումնասիրության համար առաջարկվող հիմնական հարցը վերաբերում է բարոյական մաքրությանը: Թեև մեզ հայտնի չէ, թե ինչն է հանգեցրել այդ նախազգուշացմանը, Պողոսը հստակ կերպով խոսում է սեռական անբարոյականությունից խուսափելու անհրաժեշտության մասին: Այստեղ նա շատ խիստ արտահայտություններ է օգտագործում: Առաքյալը խոսում է, որ իր խորհուրդները մերժողները, փաստորեն, մերժում են ոչ թե իրեն, այլ Տիրոջը: Հասկանալու համար, թե ինչու է Տերն այդքան խիստ խոսում այդ մասին Պողոսի միջոցով, պարզապես պետք է տեսնել, թե ինչպիսի տառապանքներ է բերում սեռական սանձարձակությունը:

Համակվել և տոգորվել (Ա Թեսաղոնիկեցիս 4.1,2)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 3.11-13-ը և 4.1-18-ը: 4-րդ գլխի բովանդակությունն ինչպե՞ս է օգնում հասկանալ Ա Թեսաղոնիկեցիս 3.11-13-ում գրված աղոթքի տարբեր հատվածները: Ինչպիսի՞ կապ կա Պողոսի աղոթքի և թեսաղոնիկեցիներին ուղղված նրա քաջալերող խոսքերի միջև: _____

_____

_____

_____

_____

Ա Թեսաղոնիկեցիս 3.11-13-ում գրված Պողոսի աղոթքը պարունակում է մի շարք հիմնական խոսքեր, որոնք առաջ են անցնում Ա Թեսաղոնիկեցիս 4.1-18-ի բովանդակությունից: Առաքյալն աղոթում է նրա համար, որ Հիսուսի երկրորդ գալուստի լույսի ներքո թեսաղոնիկեցիները «լցված» լինեն «միմյանց հանդեպ սիրով», «սրբության մեջ անարատ»: Այս բոլոր թեմաները մատնացույց են անում 4-րդ գլխի որոշակի հատվածներ:

Այսօր առաջարկված տեքստերում (Ա Թեսաղոնիկեցիս 4.1,2) Պողոսը դիմում է «լցվել» գաղափարին (Ա Թեսաղոնիկեցիս 3.12), թեև ժամանակակից թարգմանությունների մեծ մասը լիովին չեն փոխանցում այդ երկու մեջբերումների կապը միմյանց հետ: Սակայն հունարենում Ա Թեսաղոնիկեցիս 3.12-ի և Ա Թեսաղոնիկեցիս 4.1-ի միջև զուգահեռն ակնհայտ է: Երկու տեքստերում էլ Պողոսը կոչ է անում թեսաղոնիկեցիներին լցվել և տոգորվել սիրով՝ միմյանց և բոլոր մարդկանց հանդեպ:

Թեսաղոնիկեում գտնվելով՝ Պողոսն սկսեց հավատացյալների քրիստոնեական աշխարհայացքը կառուցելու աշխատանքը, սակայն այժմ Սուրբ Հոգուց դրդված՝ նա լրացնում է իրենց հասկացողության մեջ եղած բացթողումները (Ա Թեսաղոնիկեցիս 3.10) և օգնում նրանց ձեռք բերելու հստակ տեսիլ: Արդյունքում թեսաղոնիկեցիները կլցվեն և կտոգորվեն նրանով, ինչն արդեն իսկ փորձում են անել, այսինքն՝ իրենց կոչմանն արժանի կյանքով ապրել: 4-րդ գլուխը Պողոսը սկսում է «ուրեմն» խոսքով:

4-րդ և 5-րդ գլուխներում նա հիմնվում է նախորդ գլուխների վրա, որոնցում շեշտը դնում է հավատացյալների փոխադարձ ընկերության

վրա. այդ ընկերության շնորհիվ առաքյալը մտադրված էր նրանց գործնական խորհուրդներ տալ: Թեսաղոնիկեցիները լավ էին սկսել: Այժմ Պողոսը ցանկանում էր, որպեսզի նրանք շարունակեն աճել իրենից իմացած ճշմարտության մեջ:

Այս հատվածում հատկապես հետաքրքրական են (Ա Թեսաղոնիկեցիս 4.1,15) Հիսուսի մասին երկու հիշատակումները: Դրանք ցույց են տալիս, որ Պողոսը փոխանցում էր Քրիստոսի բերանից դուրս եկած վարդապետությունը (ավելի ուշ այն շարադրվել է չորս Ավետարաններում): Պողոսը ոչ միայն լավ խորհուրդ էր առաջարկում: Ինքը՝ Հիսուսը, տվեց այդ պատվերները, իսկ առաքյալը կոչ էր անում դրանք կատարել: Լինելով Հիսուսի ծառան՝ նա կիսվում էր Քրիստոսից ստացած ճշմարտություններով:

Եվս մեկ անգամ կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.1-ը: Ի՞նչ է նշանակում «հաճո լինել Աստծուն»: Մի՞թե տիեզերքի Արարիչն ուշադրություն է դարձնում մեր գործողություններին: Մեր արարքներն ինչպե՞ս կարող են «հաճո լինել Աստծուն»: Ինչի՞ վրա է հիմնված ձեր պատասխանը, և այն ձեզ ինչի՞ է պարտավորեցնում:

Երկուշաբթի ***օգոստոսի 13***

Սրբագործումը Աստծո կամքն է (Ա Թեսաղոնիկեցիս 4.3)

Ա Թեսաղոնիկեցիս 4.3-8-ը կարևոր միտք է փոխանցում: Աստծո կամքն է, որպեսզի յուրաքանչյուր հավատացյալ սրբագործվի (Ա Թեսաղոնիկեցիս 4.3,4,7): Այն, ինչը Պողոսն այստեղ նկատի ուներ սրբագործում ասելով, բացատրվում է հաջորդ երկու պնդումների մեջ: Յուրաքանչյուր հավատացյալից ակնկալվում է, որ նա կզգուշանա շնությունից և «իր անոթը …սրբությամբ և պատվով» (Ա Թեսաղոնիկեցիս 4.3,4) կպահպանի: Պողոսը միտքն ավարտում է սուրբ կյանքին դրդող երեք գործոններով (Ա Թեսաղոնիկեցիս 4.6-8): (1) Աստված «այդ բոլոր բաների համար վրեժխնդիր է», (2) Նա մեզ սրբության է կանչել, (3) Նա Սուրբ Հոգին է մեզ պարգևել: Այս և հաջորդ երկու դասերին մենք մանրամասնությամբ կդիտարկենք այս հատվածը:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցի 4.3,7-ը: Ինչպե՞ս են այս երկու համարները կապված: Ո՞րն է նրանց գլխավոր լուրը, և այսօր

այն ի՞նչ կապ ունի մեզ հետ: _____

_____

_____

_____

_____

Երրորդ համարը, հիմնվելով առաջինի վրա, որում Պողոսը թեսաղոնիկեցիներին հիշեցնում է այն մասին, թե նրանք ինչպես պետք է «վարվեն» (շատ թարգմանություններում «ապրեն») ենթադրելով հրեական հայեցակարգը, որն օգտագործվում է բարոյական և էթիկական առօրյա վարքը նկարագրելու համար: Երրորդ համարում առաքյալն ուրիշ հրեական հայեցակարգ է օգտագործում հոգևոր կյանքը և աճը, այսինքն «սրբագործումը» նկարագրելու համար:

Հաճախ սրբություն հասկացողությունը որոշվում է որպես սուրբ օգտագործման համար առանձնացված: Սակայն այս ուղերձում Պողոսն ավելի հստակ եզրույթ է օգտագործում: Սրբությունը սրտի բարոյական վիճակն է, և այդպիսի վիճակ պետք է պահպանեն թեսաղոնիկեցիները մինչև Հիսուսի վերադարձը (Ա Թեսաղոնիկեցիս 3.13): Իսկ չորրորդ գլխում Պողոսն օգտագործում է ավելի շուտ հայեցակարգի ձևը, որը գործընթացն է ընդգծում, քան թե արդյունքը: Դա «հագիասմոս» գոյականն է՝ կազմված սրբացնել բայից: Աստծո կամքն այն է, որպեսզի մենք ներգրավվենք այդ գործընթացի մեջ (Ա Թեսաղոնիկեցիս 4.3):

Պողոսն օրենքից ազատ ավետարան չի քարոզում: Կան որոշակի պահանջներ նրանց վարքի հանդեպ, ովքեր Քրիստոսում են կենում: 7-րդ համարում սրբության հականիշն է «անսուրբ» բառը: Ինչպես 3-րդ համարում է բացատրվում. «որ դուք ետ կենաք պոռնկությունից» (Ա Թեսաղոնիկեցիս 4.3): Հունարեն «պոռնիեա» բառը, որը թարգմանված է որպես «պոռնկություն», այսօր կշոշափեր բոլոր բնագավառները՝ պոռնկագրությունից և պոռնկությունից մինչև ամուսնությունից դուրս ինտիմ հարաբերությունները:

Թեև փրկությունը պարգևվում է Աստծո շնորհով հավատի միջոցով, քրիստոնեական կյանքը պետք է բնութագրվի աճով և Քրիստոսում մեզ խոստացված կատարելության մշտական ձգտմամբ:

Ինտիմ հարաբերությունները Աստծո պարգևն են, դրանք ծառայում են իբրև մեր հանդեպ Նրա սիրո հզոր վկայություն: Այնուամենայնիվ, այդ պարգևն այնքան է աղավաղվել, որ շատերի համար անեծքի, ծանր տառապանքների և վշտի պատճառ է դարձել: Մեր ո՞ր որոշումները կօգնեն այն վնասից խուսափել, որը կարող է պատճառել այդ պարգևի սխալ օգտագործումը:

Ոչ որպես հեթանոսներ (Ա Թեսաղոնիկեցիս 4.4,5)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.4,5-ը: Այս համարներն ի՞նչ լուր են պարունակում: Անձամբ ձեզ դրանք ի՞նչ են ասում: ____

_____

_____

Թեև փիլիսոփաները, որոնց մասին մենք երրորդ դասին խոսել ենք, քննադատում էին սեռական անժուժկալության շատ ձևեր, Պողոսի օրերում հեթանոս հասարակությունն, ընդհանուր առմամբ, գործնականում սեռական հարաբերությունների զսպման հասկացողությունը չուներ: Ահա թե ինչ էր գրում հայտնի հեթանոս հռետոր Ցիցերոնը. «Եթե ինչ-որ մեկը մտածում է, որ երիտասարդությանը պետք է արգելել կապերը նույնիսկ կուրտիզանուհիների հետ, անկասկած, նա չափազանց խստություն է դրսևորում... նման հայացքը ոչ միայն հակասում է այն ամենին, ինչ այդ տարիքն է թույլ տալիս, այլ նաև մեր նախնիների սովորություններին և վարքի ընդհանուր կանոններին: Որովհետև ե՞րբ է, որ դա համընդհանուր փորձ չի եղել: Դա ե՞րբ է եղել նախատելի և արգելված» (Abraham Malherbe, The Letters to the Thessalonians, The Anchor Bible, vol. 32B (New York: Doubleday, 2000), pp. 235,236):

Ժամանակակից աշխարհում շատերը սեռական զսպվածությունը շատ անհրապույր են համարում: Նրանք գտնում են, որ այնպիսի հատվածներ, ինչպիսիք են Ա Թեսաղոնիկեցիս 4.4,5-ը, առավելապես արդիական էին այլ ժամանակ և այլ վայրում: Սակայն հին աշխարհը սեռական զսպվածությամբ ներկայիս աշխարհին չէր զիջում: Պողոսի լուրն այն ժամանակվա հասարակության համար նույնքան անընդունելի էր, որքան և հիմա:

Պողոսը սեռական անժուժկալության խնդրի լուծումը տեսնում էր նրանում, որ ամեն մարդ «գիտենա իր անոթը պահել» (Ա Թեսաղոնիկեցիս 4.4): «Պահել» բառը հունարենում նշանակում է «ձեռք բերել»: Սակայն «ձեռք բերել իր մարմինը» արտահայտությունը մեզ համար այնքան էլ հասկանալի չէ: Եթե մարմին ասելով Պողոսը կին նկատի ուներ (հնում այդ դարձվածքը հաճախ էր կնոջը մատնանշում, տե՛ս Ա Պետրոս 3.7), այսպիսով նա ասում է, որ յուրաքանչյուր տղամարդ պետք է ձգտի արժանավոր ամուսնության, որպեսզի խուսափի անկանոն սեռական կապերից:

Սակայն ժամանակակից թարգմանությունները (տե՛ս օրինակ Մ.Պ. Կուլակովի խմբագրությամբ թարգմանությունը) սահմանում են, որ «մարմին» բառը վերաբերում է հենց տղամարդու մարմնին: Այսպիսով, «պահպանել մարմինը» արտահայտությունը պետք է մեկնաբանել որպես սեփական մարմնի հսկում:

Ամեն դեպքում, Պողոսը միանշանակ կերպով հակադրվում է իր ժամանակների բարոյական անկայունությանը: Քրիստոնյաները չպետք է իրենց պահեն հեթանոսների պես: Այն, ինչը սովորական է ողջ հասարակության համար, մեզ համար սովորական չպետք է լինի: Ինտիմ հարաբերությունները սուրբ են, դրանք նախասահմանված են միայն միմյանց հետ ամուսնական կապի մեջ գտնվող տղամարդու և կնոջ համար: Ա Թեսաղոնիկեցիս 4.5-ում առաքյալը շարունակում է միտքը՝ ընդգծելով, որ ինտիմ հարաբերությունները երբեք արտամուսնական չպետք է լինեն: Երբ մարդիկ խրախուսում են իրենց՝ խախտելով Աստծո կողմից սահմանված ընդհանուր կանոնները, դա անխուսափելիորեն տանում է դեպի կործանում: Ո՞վ չի տեսել շրջապատի մարդկանց կամ սեփական կյանքի օրինակով, թե չարաշահման դեպքում որքան կործանարար կարող է լինել այդ պարգևը:

Չորեքշաբթի ***օգոստոսի 15***

Աստծո մտահղացման համաձայն (Ա Թեսաղոնիկեցիս 4.6-8)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.6-8-ը: Պողոսն ի՞նչ է ասում բարոյական սանձարձակության մասին: _____

_____

_____

Արտամուսնական սեռական կապ ունեցող տղամարդն ասաց հովվին. «Երիտասարդ լինելով՝ ես սովոր էի սեռական կապը և սերը միասնական համարել: Սակայն ամուսնանալով՝ ես հայտնաբերեցի, որ մինչամուսնական կապը ոչ միայն մարմինն է քայքայում (ես վեներական հիվանդությամբ վարակվեցի), այլև բանականությունը: Թեև հիմա մենք քրիստոնյաներ ենք, ես և կինս ստիպված ենք պայքարել մտավոր և հուզական հաստատումների դեմ, որոնք մենք մեր անցյալից ենք ամուսնական կյանք բերել»:

Աստվածաշնչյան արգելքները կյանքի ուրախությունների դեմ չեն ուղղված: Այդ սահմանափակումները մեզ պաշտպանում են ֆիզիկա-

կան և հուզական վնասից, որը հայտնվում է սեռական անժուժկալության արդյունքում: Մեր սեռական փոխհարաբերությունները մենք օրինական սահմաններում ենք պահում, քանի որ մեզ համար միևնույն չէ, թե մեր կյանքն ուրիշների վրա ինչ ազդեցություն ունի: Քրիստոսը յուրաքանչյուրի համար մեռավ, այդ պատճառով ոչ ոք և ոչ մի կերպ չպետք է սեռականորեն շահագործվի: Այդպես վարվելը նշանակում է մեղանչել ոչ միայն այդ մարդու, այլև Աստծո դեմ (տե՛ս Ծննդոց 39.9): Ինտիմ կյանքի նկատմամբ մեր վերաբերմունքը վկայում է այն մասին, թե մենք ինչպես ենք վերաբերվում ոչ միայն շրջապատի մարդկանց, այլև Քրիստոսին՝ ի դեմս նրանց (տե՛ս նաև Մատթեոս 25.34-46):

Ի վերջո, հարաբերությունների այդ բնագավառն ազդում է նաև մեր և Աստծո հարաբերությունների վրա: Աստծուն չճանաչող հեթանոսներն ապրում են իրենց կրքերից և ցանկություններից դրդված (Ա Թեսաղոնիկեցիս 4.5): Աստծուն չճանաչելը տանում է անբարոյականության: Այդ հարցում աստվածաշնչյան ուսմունքն անտեսող մարդիկ ոչ միայն մերժում են բուն ուսմունքը, այլ նաև Աստծո կոչը և նույնիսկ Աստծուն (Ա Թեսաղոնիկեցիս 4.8): Այլ տեսանկյունից, երբ մենք հետևում ենք Աստծո ծրագրին, տղամարդու և կնոջ միջև սերտ հարաբերությունները հիանալի կերպով հիշեցնում են դառնում անձնազոհ սիրո մասին, որն Աստված Քրիստոսում հայտնեց (տե՛ս նաև Հովհաննես 13.34,35): Դա Աստծո պարգևն է, և եթե մենք դա վայելում ենք մեր հանդեպ Աստծո կամքի համաձայն, դա մեզ օրհնություն է բերում:

Ա Թեսաղոնիկեցիս 4.7-ում Պողոս առաքյալի միջոցով Տերը մեզ պատվիրում է սրբության մեջ ապրել: Դուք ինչպե՞ս եք հասկանում այդ պատվերը: Արդյոք այստեղ խոսվում է միայն ինտի՞մ հարաբերությունների մասին: Եթե ոչ, ապա էլ ինչի՞ մասին:

Հինգշաբթի ***օգոստոսի 16***

«Իր գործը գործի» (Ա Թեսաղոնիկեցիս 4.9-12)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.9-12-ը և 3.11-13-ը: Ինչպիսի՞ ընդհանուր տեսակետներ են այս հատվածները կապում: _____

_____

_____

Հույները մի քանի խոսք ունեին, որոնք սեր էին նշանակում: Դրանցից երկուսը հանդիպում են Նոր կտակարանում: Էրոս (չի հանդիպում Նոր

կտակարանում) - հունարեն բառ, որից առաջացել է էրոտիկա բառը: Այն փոխանցում է սիրո զգայական կողմը: Ագապե - այս ձևը ավելի հաճախ է օգտագործվում Նոր կտակարանում, այն ընդգծում է սիրո անձնազոհ, անպայմանական կողմը: Հաճախ այն օգտագործվում է նկարագրելու խաչի վրա դրսևորված Քրիստոսի սերը, ինչպես նաև փոխհարաբերությունները, որոնք պետք է լինեն մարդկանց միջև:

Եվ մեկ հունարեն բառ ևս, որը նշանակում է սեր՝ ֆիլիա: Դրա նույնարմատ խոսքերը օգտագործվում են նաև մեր այսօրվա հատվածում: Պողոսը թեսաղոնիկեցիներին հիշեցնում է նրանց արդեն իսկ հայտնի եղբայրական սիրո մասին: Հունարեն բառից, որը թարգմանված է «եղբայրասիրություն», իր անվանումն ստացավ Ֆիլադելֆիա քաղաքը: Հեթանոսական աշխարհում ֆիլադելֆիա բառը մատնանշում էր արյունակցական կապերով վավերացված սեր: Սակայն եկեղեցին ընդլայնեց նրա նշանակությունը՝ դրան ավելացնելով սերը հավատակիցների, քրիստոնեական ընտանիքի հանդեպ: Այդպիսի ընտանեկան սեր է սովորեցնում Աստված, և այն Աստծո շնորհի հրաշքն է ամենուր, որտեղ դրսևորվում է:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.11,12-ը: Ձեր խոսքերով նկարագրեք թեսաղոնիկեցիներին տրված Պողոսի զգուշացումը քաղաքում բիզնեսի և աշխատանքի վերաբերյալ: _____

_____

_____

_____

Ըստամենիայնի,եկեղեցումորոշթեսաղոնիկեցիներծույլէինևանհոգ: Հիսուսի երկրորդ գալուստով ոգևորված՝ հավանաբար, նրանք թողեցին իրենց աշխատանքը և սկսեցին ապրել հեթանոս հարևանների խնամքի տակ: Սակայն ամեն ժամանակ վկայելու պատրաստակամությունը չի նշանակում անհոգատարություն, աներեսություն կամ աշխատանքի մեջ ծուլություն:

Մենք պետք է հիշենք. որքան ավելի մոտիկից են անհավատ մարդիկ ծանոթանում եկեղեցուն, այնքան ավելի մեծ տպավորություն է նրանց վրա թողնում իրենց ծանոթ քրիստոնյաների առօրյա կյանքը:

Այդ խնդիրը լուծելով՝ Պողոսը դրդում է թեսաղոնիկեցիներին լինել նպատակասլաց, սակայն իշխանության կամ ազդեցության չձգտել, այլ «հանդարտ լինել» (4.11): Դա իր մեջ ներառում է անհրաժեշտությունը՝ «իր գործը գործի և ձեր ձեռքովն աշխատեք»: Հին աշխարհում ձեռքի աշխատանքը նյութական անկախության հիմնական միջոցն էր: Պողոսը ժամանակակից քրիստոնյաներին հավանաբար կասեր. «Նյութապես

ապահովեք ձեզ և ձեր ընտանիքը, ինչպես նաև մի փոքր գումար խնայեք՝ օգնելու կարիքավորներին»:

Մենք ինչպե՞ս կարող ենք այս տեքստերում Պողոսի խոսքերը կիրառել մեր կյանքում, մեր ժամանակներում և շրջապատի հանդեպ:

Ուրբաթ *օգոստոսի 17*

Հետագա ուսումնասիրության համար

«Սերը մաքուր և սուրբ սկզբունք է, բայց ցանկասիրությունը և կրքերը ոչ մի սահմանափակման, ինչպես նաև առողջ դատողության ձայնին չեն հնազանդվում: Դրանք մարդուն կուրացնում են, և նա չի հասկանում հետևանքները և չի տեսնում պատճառահետևանքային կապը» (Է.Ուայթ, Բանականություն, բնավորություն, անձ, հ.1, 222):

«[Սերը] մաքուր է և սուրբ: Սակայն չսրբված սրտի կիրքը լիովին այլ բան է: Այն ժամանակ, երբ մաքուր սերն Աստծուն է հանձնում իր ողջ ծրագրերը՝ գտնվելով Աստծո Հոգու հետ կատարյալ ներդաշնակության մեջ, կրքին բնորոշ է կամայականությունը, հապճեպությունը, անխելամտությունը, ցանկացած սահմանափակումներին անհնազանդությունը և իր ընտրած էակին աստվածացնելը: Աստծո շնորհը կերևա ճշմարիտ սեր ունեցող յուրաքանչյուր մարդու վարքի մեջ» (Է.Ուայթ, The Advent Review and Sabbath Herald, September 25, 1888):

«Նա, ով չի ցանկանում սատանայական դավերի զոհ դառնալ, պետք է պահպանի իր հոգու մատույցները, չպետք է կարդա, նայի և լսի այն, ինչն անմաքուր մտքեր է արթնացնում, որոնք թշնամին է շշնջում նրանց: Թող սիրտը հուսալի կերպով պահպանվի, այլապես այս աշխարհում իշխող չարը մարդկային բնության մեջ ննջող արատները կարթնացնի, և հոգին խավարի մեջ կխարխափի» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 518):

Հարցեր քննարկման համար

1. Վերջին մեջբերման մեջ Էլեն Ուայթը կոչ է անում «պահպանել հոգու մատույցները»: Ինչպե՞ս հավատացյալները կարող են դա անել: Այդ սկզբունքն ինչպե՞ս է կիրառվում զվարճությունների և կրթության մեր ընտրության հարցում:
2. Պողոսը Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձում հաճախ է օգտագործում «աճեցնի և ավելացնի» արտահայտությունը՝ նկարա-

գրելու համար քրիստոնեական բնավորության և վարքի մեջ աճը: Ի՞նչ կարող են եկեղեցիներն անել՝ դրան նպաստելու համար:

3. Եթե երիտասարդը խնդրի ձեզ առնվազն երկու գործնական պատճառ բերել, ինչի համար նա պետք է զսպվածություն դրսևորի մինչև ամուսնությունը, դուք նրան ի՞նչ կասեք, և ինչո՞ւ:

Վերջաբան

Չորրորդ գլխի առաջին տասներկու տեքստերում Պողոսը շոշափում է որոշ ամենաբարդ խնդիրներ, որոնք գոյություն ունեն եկեղեցիների մեծ մասում, հատկապես քաղաքի եկեղեցիներում: Ինտիմ հարաբերությունների մասին ընդունված չէ խոսել, դա անձնական թեմա է, սակայն եկեղեցին դառը պտուղ կհնձի, եթե սեռական սանձարձակությանը դիմադրություն չցուցաբերի: Կարևոր է նաև, թե ինչպիսի անուն ունի եկեղեցին իր քաղաքում, շրջանում, և ինչպիսին են նրա անդամներն աշխատավայրերում: Պողոսի հանձնարարականներն այդ հարցում այսօր նույնքան կարևոր են, որքան այն ժամանակ:

ՔՐԻՍՏՈՍՈՒՄ ՄԵՌԱԾՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18, Գործք առաքելոց 17.3, Ա Կորնթացիս 15.20-23, 51,58 Հովհաննես 5.28, 29, Հայտնություն 20.4-6:

Հիշելու համարը.

«Որովհետև ինքը Տերը հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից, և Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կառնեն» (Ա Թեսաղոնիկեցիս 4.15):

հիմնական միտքը.

Պողոսը Քրիստոսի երկրորդ գալուստի խոստման մեծ հույսն է առաջարկում թեսաղոնիկեցիներին (և մեզ):

Շաբաթվա ընթացքում ուսումնասիրվող հատվածի օգնությամբ (Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18) Պողոսը որոշ ուղղումներ է մտցնում թեսաղոնիկեցիների մեջ տեղ գտած աստվածաբանական սխալ պատկերացումներում: Թեև մեզ հստակ կերպով հայտնի չէ նրանց սխալը, ակնհայտ է, որ եկեղեցու որոշ անդամներ խորապես անհանգստանում էին մինչև Հիսուսի վերադարձը մեռած հավատացյալների ճակատագրի մասին: Դատելով ըստ ամենայնի, հարցը տարբերության մեջ էր՝ մինչև գալուստը մեռածների և նրանց միջև, ովքեր այդ մեծ օրը կենդանի կդիմավորեն:

Դասի մեջ մենք կվերլուծենք իրավիճակը, որը Պողոսին դրդել է գրել Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18-ը: Այս տեքստերում Պողոսը ոչ միայն ուղղում է առաջին դարում տարածված սխալ հայացքները, այլև պնդում է ճշմարիտ հիմքը, որի վրա կարող են քսանմեկերորդ դարի քրիստոնյաները կանգնել: «Որովհետև Տեր Եհովան ոչ մի բան չի անի, եթե չհայտնի իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարեներին» (Ամովս 3.7): Պողոս առաքյալի մարգարեական ծառայության միջոցով Տերը մեզ հրաշալի ճշմարտություններ է բացում երկրորդ գալուստի բնույթի մասին: Աղոթքով ուսումնասիրելով այդ համարները՝ մենք կանդրադառնանք դրանցում պարունակվող մեծ հույսին:

Իրավիճակը Թեսաղոնիկեում

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18-ը: Այդ հատվածում գտեք Թեսաղոնիկեի եկեղեցու սխալ հայացքները, որոնք անտեղի վշտացրին նրանց, ովքեր հետևեցին դրանց: _____

_____

_____

Պողոսի ժամանակներում հուդաիզմում տարածված էին տարբեր տեսակետներ վերջին ժամանակների վերաբերյալ: Դրանցից մեկը որոշակիորեն տարածում էր գտել Թեսաղոնիկեի եկեղեցում: Այսօր մենք հստակ տվյալներ չունենք այդ տեսակետի վերաբերյալ, սակայն կարելի է ենթադրել, որ այն հետևյալն էր. թեև Աստծուն բոլոր հավատարիմները գալիք աշխարհը կժառանգեն, սակայն միայն նրանք, ովքեր Քրիստոսին կենդանի կդիմավորեն, երկինք կվերցվեն: Իսկ մինչև երկրորդ գալուստը մահացածները հարություն կառնեն, սակայն երկրի վրա կմնան:

Նման կարծիքը ոչ շահավետ կացության մեջ էր դնում մինչև երկրորդ գալուստը մեռածներին և բաժանում էր երկինք վերցվածներին և երկրի վրա մնացողներին: Թեսաղոնիկեցիները, ում Պողոսը գրում էր, համարում էին. եթե իրենք մինչև վերջ ապրեն, ապա անպայման Հիսուսի երկրորդ գալուստի ժամանակ երկինք կհամբարձվեն, սակայն իրենք ստիպված կլինեն իրենց մեռած մերձավորներին լքել, ովքեր հավիտյան կմնան երկրի վրա (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 4.13,14):

Այդ պատճառով զարմանալի չէ, որ այլ տեղերում հանդիպող «ինքներդ հաստատ գիտեք» արտահայտության փոխարեն՝ (Ա Թեսաղոնիկեցիս 5.2-ը, տե՛ս նաև 4.2-ը), Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18-ում Պողոսն սկսում է խոսել հավատացյալների անհիրազեկության մասին: Եկեղեցու անդամները երկրորդ գալուստի մասին կարևոր ճշմարտությունները չգիտեին, իսկ որոշ տեսակետներ նրանք պետք է փոխեին:

Խորհելով մարգարեության մասին՝ մենք պետք է հիշենք, որ այն տրված չէ մեր հետաքրքրասիրության բավարարման համար ժամկետների և վերջին ժամանակների իրադարձությունների մանրամասների վերաբերյալ: Մարգարեությունն էթիկական և բարոյական նպատակ ունի: Աստծո մտադրության համաձայն՝ այն մեզ պետք է սովորեցնի ճիշտ ապրել: Այն պետք է քաջալերում բերի և ցույց կտա նպատակը, հատկապես՝ տառապանքի և մահվան մեջ: Աստվածաշնչյան մարգարեությունների ճիշտ ըմբռնումը զորություն ունի կյանքը փոխելու: Այլ

խոսքերով, թեև կարևոր է ընդունել ադվենտիստական ուսմունքը (ինչը ենթադրում է նաև աստվածաշնչյան մարգարությունների հանդեպ հավատը), առավել կարևոր է դրանց համապատասխան ապրելը:

Ի՞նչ է նշանակում «ադվենտիստի պես ապրել»: Կիսվեք ձեր պատասխաններով շաբաթ օրվա դասի ժամանակ:

Երկուշաբթի ***օգոստոսի 20***

Անհույս վիշտ
(Ա Թեսաղոնիկեցիս 4.13)

Ըստ Ա Թեսաղոնիկեցիս 4.13-ի՝ Պողոսն ի՞նչ նպատակով է գրել 13-18 համարները: Այդ հատվածն այսօր ինչո՞ւ է մեզ համար այդքան կարևոր: _____

_____

_____

Թեսաղոնիկեցի հավատացյալներն ինչո՞ւ էին սգում, ասես թե հույս չունեին: Հավանաբար, հիմնական պատճառն այն էր, որ Պողոսը բավականաչափ ժամանակ չէր անցկացրել նրանց հետ: Մենք գիտենք, որ առաքյալը քարոզում էր Հիսուսի մահվան և հարության մասին (Գործք առաքելոց 17.3): Վկայություններ կան, որ նա խոսել է վերջին ժամանակների իրադարձությունների մասին, թեև նրա հորդորները սխալ էին հասկացվել: Սակայն, հավանաբար, նրան ժամանակը չի բավարարել հավատացյալների հարության թեմային առնչվող հարցերը բացատրելու համար:

Դրանից բացի, անհրաժեշտ է հաշվի առնել շատ հավատացյալների հեթանոսական անցյալը, ում գրում է Պողոսը (Ա Թեսաղոնիկեցիս 1.9): Թեև այն ժամանակվա առեղծվածային կրոններն իրենց պատկերացումն ունեին հանդերձյալ կյանքի մասին, միևնույնն է, հեթանոսների մեծամասնությունը մահից հետո կյանքի հույս չէին փայփայում: Դրա ուշագրավ օրինակն է երկրորդ դարով թվագրված նամակը. «Հիրինի՝ Տաոննոֆրիսին և Ֆիլոնին, մխիթարվե՛ք: Ես սգում և լալիս եմ հանգուցյալ Դիդիմոսի համար: Ես արեցի, ինչ որ վստահված էր, ինձ հետ են նաև իմ Էպաֆրոդիտը, Տերմուտիոնը, Ֆիլիոնը, Ապպոլոնը և Պլանտասը: Սակայն կա մի բան, որի դեմ մարդը անկարող է որևէ բան անել: Այսպիսով, միմյանց մխիթարե՛ք: Առողջ եղե՛ք» (Adolf Deissmann, *Light From the Ancient East* (New York: George H.Doran Company, 1927), p.176):

Հետաքրքրական է նկատել, որ որդուն կորցրած մորն ուղղված այդ նամակում նույն խոսքերն են, ինչ և Ա Թեսաղոնիկեցիս 4.18-ում, թեև միտքը բոլորովին տարբեր է: Միմյանց մխիթարե՛ք, թեև ոչ մի հույս չկա՞: Հենց դրա մասին է նամակում ասվում: Ինչպիսի՜ հակադրություն նրա, ինչի մասին Պողոսը գրում է թեսաղոնիկեցիներին:

Պողոսի երկու արտահայտություններն ընդգծում են մեր ուսումնասիրվող հատվածի նպատակը: Սկզբում նա գրում է, որ հավատացյալները հույս չունեցողների պես չսգան (Ա Թեսաղոնիկեցիս 4.13), իսկ վերջում առաքյալը ցանկանում է, որպեսզի երկրորդ գալուստի բնության մասին ճշմարտությունը նրանց փառավոր հիմք տա միմյանց մխիթարելու, երբ որևէ մեկը կյանքից հեռանում է (Ա Թեսաղոնիկեցիս 4.18):

Ինչ-որ մեկն ասել է. «Վերջին հաշվով, մենք բոլորս մեռած ենք»: Մարդկային տեսակետից դա այդպես էլ կա: Սակայն աստվածաշնչյան տեսակետից նման հայացքը բավականին անհեռատես է: Ինչպիսի՞ մեծ հույս մենք ունենք Հիսուսում, և այն ինչպե՞ս է մխիթարում և հուսադրում մեզ այժմ:

Երեքշաբթի ***օգոստոսի 21***

Մեռնելով և հարություն առնելով (Ա Թեսաղոնիկեցիս 4.14)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.14-ը: Պողոսը մեռածների վերաբերյալ ինչպիսի՞ հույս է հաղորդում: _____

_____

_____

14-րդ համարում Պողոսն անհույս վշտի համար լուծում է առաջարկում: Նա հավատացյալ մեռածներին նկարագրում է որպես «Հիսուսում ննջածների»: Այն ժամանակ, երբ նորկտակարանյան ժամանակահատվածում քունը համարվում էր բոլորի կողմից ընդունված մահվան փոխաբերություն, հավատացյալ մարդու մահը մատնանշող սովորական արտահայտությունը հնչում էր ինչպես «ննջել է Հիսուսում» կամ «Քրիստոսում»: Դրա տիպիկ օրինակը մենք գտնվում ենք 16-րդ համարում, որտեղ ասվում է. «Քրիստոսում մեռածների» մասին:

13-րդ համարի արտահայտությունը ևս հարց է առաջացնում. «Աստված ննջեցյալներին Հիսուսի ձեռով կբերի Նրա հետ»: Ոմանք համարում են. այս արտահայտությունը ցույց է տալիս, որ Քրիստոսում մեռածները (համարվում է, որ նրանց մահից հետո երկինք են գնացել) երկ-

որդ գալուստի ժամանակ կվերադառնան Հիսուսի հետ: Սակայն նման մեկնաբանությունը հակասում է 16-րդ համարի Պողոսի ուսմունքին, որտեղ նա ասում է, որ մեռած հավատացյալները երկրորդ գալուստի ժամանակ հարություն կառնեն, և ոչ ավելի շուտ:

Ա Կորնթացիս 15.20-23, 51-58-ի տեքստերն ինչպե՞ս են մեզ օգնում հասկանալ Ա Թեսաղոնիկեցիս 4.14-ը: _____

_____

_____

Մենք կարող ենք հասկանալ Պողոսի խոսքերը, եթե շատ ուշադիր լինենք նրա գլխավոր մտքին: Առաքյալը մի կողմից զուգահեռ է անցկացնում Հիսուսի մահվան և հարության, իսկ մյուս կողմից՝ հավատացյալների հարության միջև: Մեռելներից Հիսուսի հարությունը Պողոսի համար երաշխիք էր, որ բոլոր հավատացյալները նույնպես հարություն կառնեն երկրորդ գալուստի ժամանակ (տե՛ս Ա Կորնթացիս 15.20-23): Պողոսի աստվածաբանությունը հաջորդական է: «Եթե հավատում ենք» (Ա Թեսաղոնիկեցիս 4.14) Հիսուսի մահվանն ու հարությանը, նշանակում է՝ պետք է նաև հավատանք նրանց հարությանը, ովքեր մահացել են որպես Հիսուսի ճշմարիտ հետևորդներ:

Այսպիսով, Պողոսն օգտագործում է «Հիսուսով» արտահայտությունը նույն կերպ, ինչպես և 16-րդ համարում՝ «Քրիստոսում» արտահայտությունը: Նա փորձում է թեսաղոնիկեցիներին ցույց տալ, որ նրանց հանգուցյալ եղբայրներն ու քույրերը երկրի վրա չեն մնա, երբ կենդանի հավատացյալները երկինք կհամբարձվեն: Բոլորը միասին երկինք կհամբարձվեն (տե՛ս Հովհաննես 14.1-3): Քրիստոսի գալուստի ժամանակ Աստված հարություն առած քրիստոնյաներին երկիր չի «բերի», ընդհակառակը (ինչպես դա եղավ Հիսուսի հետ), Նա կհանի նրանց գերեզմաններից, այնուհետև կենդանի մնացածների հետ երկինք կտանի: Ինչպես Հիսուսի հարությունը նախորդեց Նրա երկինք բարձրանալը, այդպես էլ կլինի Նրա հավատարիմ հետևորդների հետ:

Չորեքշաբթի ***օգոստոսի 22***

Քրիստոսում հարություն առածները (Ա Թեսաղոնիկեցիս 4.15, 16)

Ա Թեսաղոնիկեցիս 4.13-5.11-ում շարադրված ճշմարտությունները Պողոսը հիմնում է Հիսուսի վարդապետության վրա: Շատ զուգահեռներ կան վերջին ժամանակների մասին այս տեքստերի և Մատթեոսի,

Մարկոսի և Ղուկասի ավետարաններում գրված Հիսուսի ասածների միջև: Սակայն խոսելով «Տիրոջ խոսքի» մասին՝ Ա Թեսաղոնիկեցիս 4.15-ում Պողոսը վկայակոչում է Հիսուսի խոսքերը, որոնք չեն մտել չորս Ավետարաններ, այլ նրա միջոցով են մեզ փոխանցված (նման օրինակ նաև կարելի է գտնել Գործք առաքելոց 20.35-ում):

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.15,16-ը: Համաձայն Պողոսի խոսքերի, ի՞նչ կկատարվի Քրիստոսի գալուստի ժամանակ: Տե՛ս նաև Հայտնություն 1.7, Մատթեոս 24.31, Հովհաննես 5.28,29, Գործք առաքելոց 1.9-11:

Հիսուսի երկրորդ գալուստը որոտընդոստ իրադարձություն է: Այն ուղեկցվում է հրեշտակապետի և Աստծո շեփորի ձայնով: Բոլոր բնակիչները կտեսնեն և կլսեն այդ իրադարձությունը (տե՛ս վերը նշված տեքստերը):

Այստեղ հետին դեր չի խաղում Քրիստոսի գալուստին ուղեկցող իրադարձությունների հաջորդականությունը: Թեսաղոնիկեցիները հավատում էին, որ մինչև Հիսուսի վերադարձը վրա հասած մահն իր հետ բերում է որոշակի անբարենպաստ պահեր, հավանաբար, ֆիզիկական բաժանում նրանցից, ովքեր ողջ են մնացել մինչև Հիսուսի վերադարձը:

Ուսումնասիրվող տեքստերում Պողոսը թեսաղոնիկեցիներին հավաստիացնում է, որ կենդանի հավատացյալները չեն «առաջանա», այսինքն՝ մահացածներից առաջ չեն ընկնի և որևէ առավելություն չեն ունենա նրանցից: Սկզբում Քրիստոսում մեռածները հարություն կառնեն (տե՛ս Հայտնություն 20.4-6): Դա կատարվում է մինչ այն, երբ կենդանի մնացածները բարձրանում են, որպեսզի «օդում» հանդիպեն Հիսուսի հետ (Ա Թեսաղոնիկեցիս 4.17): Մեռած արդարները հարություն են առել, և նրանց անմահություն է տրվում նրանց հետ միասին, ովքեր կենդանի կդիմավորեն Նրան:

Այս տեքստերը չեն սովորեցնում, որ իրենց մահից անմիջապես հետո հավատացյալները երկինք են ընկնում: Եթե Պողոսը ցանկանար թեսաղոնիկեցի հավատացյալներին հայտնել, որ իրենց սիրելի հանգուցյալները գտնվում են երկնքում, այդ դեպքում ինչո՞ւ նրանք պետք է սգան, և ինչո՞ւ առաքյալը նրանց չպիտի այդ մասին չասեր: Պողոսի կողմից առաջարկվող մխիթարությունն այն է, որ արդարների հարությունը կմիավորի նրանց իրենց սիրելիների հետ:

Մտածե՛ք այն ամենի մասին, ինչ կկատարվի Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակ. Հիսուսը գալիս է երկինքներից, Նրան բոլորը տեսնում են, մեռած արդարները կյանքի են վերադառնում, ողջերին անմահություն է տրվում, և բոլորը միասին երկինք են

բարձրանում: Մի կողմից, դա անըմբռնելի է, լիովին հակասում է առողջ դատողությանը, փորձառությանը և անգամ գիտությանը: Սակայն դրան մենք պետք է հավատանք, այլապես ոչ մի հույս չունենք: Եթե դուք հավատում եք, որ Տերը զորեղ է դա կատարելու համար, ինչո՞ւ եք կասկածում Նրան, երբ բախվում եք առօրյա խառնաշփոթություններին:

Հինգշաբթի *օգոստոսի 23*

Միմյանց մխիթարե՛ք (Ա Թեսաղոնիկեցիս 4. 13, 17, 18)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.13,17,18-ը: Ո՞րն է Քրիստոսի երկրորդ գալուստի մասին այս հաղորդագրության նպատակը:

_____

_____

_____

Ինչպես արդեն ասվել է, մարգարեության նպատակը ապագայի վերաբերյալ մեր հետաքրքրասիրությունը բավարարելը չէ, այլ մեզ սովորեցնելը՝ այսօր ապրել հույսով: Պողոսի համար վերջին օրերի իրադարձությունների հերթականությունը գործնական նշանակություն ունի առօրյա քրիստոնեական կյանքում: Մարգարեությունը գնահատելի է այնքանով, որքանով այն ազդում է Աստծո և մարդկանց նկատմամբ մեր վերաբերմունքի վրա: Տվյալ դեպքում Պողոսը ցանկանում էր վերջին օրերի իրադարձություններն օգտագործել, որպեսզի մխիթարի նրանց, ովքեր կորցրել են իրենց հարազատներին:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 4.16,17-ը: Երկրորդ գալուստի մասին աստվածաշնչյան ուսմունքի ինչպի՞սի կարևոր տեսակետեր այս համարներում չեն շոշափվում: Տե՛ս Հովհաննես 14.1-3, Մատթեոս 24.31, Գործք առաքելոց 1.9-11-ը:

Թեսաղոնիկեցիներին ուղղված ուղերձից ընթերցված տեքստերը հաղորդում են այն մասին, որ հավատացյալներն օդում կմիանան Հիսուսին, որպեսզի հավիտյան մնան Նրա հետ: Լուրի հիմնական թեման միմյանց հետ վերամիավորումն ու Հիսուսի հետ հավիտյան մնալն է:

Տեքստը ոչինչ չի ասում այն մասին, թե նրանք ուր կգնան առաջին անգամ օդում հանդիպելուց հետո: Պողոսն ընդհանրապես ոչինչ չի ասում այն մասին, որ Հիսուսը և հավատացյալները երբևէ երկնքից կիջնեն երկրի վրա և այնտեղ կթագավորեն: Փաստորեն, հատվածում ցույց է տրված

սուրբերի ընթացքը միայն դեպի վերև: Մեռած արդարները սկզբում գերեզմաններից դուրս կգան, այնուհետև նրանք և կենդանի մնացած հավատացյալները միասին կբարձրանան, որպեսզի օդում հանդիպեն իրենց Տիրոջը:

Պողոսը շարադրում է իրադարձությունների հաջորդականությունը Ա Կորնթացիս 15.23,24-ում: Այստեղ նա հստակ զուգահեռ է անցկացնում Հիսուսի վերապրածի և նրա միջև, թե ինչ կկատարվի հավատացյալների հետ, ովքեր «Քրիստոսում» են: Հիսուսը հարություն առավ և երկինք համբարձվեց, իսկ դա ենթադրում է, որ Նրանում կենողները նույնպիսի փորձառություն կվերապրեն:

Սուրբերի բնակության անմիջական վայրը նշված է ոչ թե Պողոսի, այլ Հիսուսի կողմից Հովհաննեսի Ավետարանի 14.1-3-ում: Երբ Փրկիչը գա, Նա Իր աշակերտներին կտանի այնտեղ, որտեղ Ինքն է (երկինք): Նա չի գալիս երկրի վրա նրանց հետ միանալու: Այդ պատճառով ադվենտիստները հավատում են, որ Հիսուսի վերադարձից հետո, հազարամյա թագավորության ժամանակ (Հայտնություն 20.4-6), արդարները Նրա հետ երկնքում կլինեն, անմաքուրները՝ մեռած, իսկ սատանան բանտարկված կլինի երկրի վրա՝ չունենալով հնարավորություն որևէ մեկին գայթակղել կամ չարացնել: Միայն Հազարամյա թագավորության հետ կապված իրադարձություններից հետո հավատարիմները երկիր կվերադառնան, որպեսզի այնտեղ ապրեն (Բ Պետրոս 3.13, Հայտնություն 3.12):

Մտածե՛ք, թե որքան «գերբնական» է մեր հույսը: Բայց մի՞թե կարող է այլ կերպ լինել: Վերջիվերջո, ինչպիսի՞ հույս է մեզ առաջարկում աշխարհը: Մենք ինչպե՞ս պետք է սովորենք հույս չկապել մի բանի հետ, ինչը բոլորովին հույս չի բերում:

Ուրբաթ ***օգոստոսի 24***

Հետագա ուսումնասիրության համար

«Պողոսի խոսքերը, որ «Աստված ննջեցյալներին Հիսուսի ձեռքով կբերի նրա հետ», շատերը հասկանում են որպես հանգուցյալների գալուստ Քրիստոսի հետ երկնքից: Սակայն Պողոսն այլ բան նկատի ուներ. ինչպես Քրիստոսը հարություն առավ մեռելներից, այնպես էլ սուրբ ննջեցյալներն Աստծո կողմից կկանչվեն գերեզմաններից և Քրիստոսի հետ միասին երկինք կտարվեն» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 259):

«Թեսաղոնիկեցիներն ագահաբար կառչեցին այն մտքից, որ Քրիստոսը շուտով կգա, որպեսզի երկրի վրա ապրող հավատարիմներին վերափոխի և Իր մոտ տանի: Նրանք մանրակրկիտ կերպով պահպանում էին իրենց ընկերների կյանքը, որպեսզի նրանք չմեռնեն և չզրկվեին օրհնությունից, որը նրանք հույս ունեին ստանալ Տիրոջ գալուստի ժամանակ: Սակայն նրանց մերձավորները մեկը մյուսի հետևից հեռանում էին այս կյանքից, և թեսաղոնիկեցիներն անասելի վշտով վերջին անգամ նայում էին մեռածների երեսին՝ չհամարձակվելով հուսալ, թե ապագայում կհանդիպեն նրանց:

Երբ բացեցին և կարդացին Պողոսի նամակը, մեռածների իսկական վիճակի մասին նրա խոսքերը չափազանց ուրախացրին և մխիթարեցին ողջ եկեղեցին: Պողոսը վկայեց, որ մարդիկ, ովքեր կապրեն Քրիստոսի գալուստի ժամանակ, Հիսուսում ննջածներից շուտ Տիրոջը չեն հանդիպի» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 258):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում քննարկեք, թե ի՞նչ է նշանակում «ադվենտիստական կյանքով» ապրել: Արդյո՞ք դա նշանակում է, որ մեր դավանանքը պետք է մեր կենսակերպում արտացոլվի:
2. Խորհե՛ք մարդու անկման, փրկության ծրագրի և հավիտենական կյանքի խոստման մասին: Ի՞նչ կատարեց Հիսուսը՝ մեզ հույս և խոստում տալու, որ մահը հավիտյան չի թագավորի: Ինչո՞ւ մենք պետք է Նրան վստահենք: Հիսուսի հարությունը ինչպե՞ս է մեզ հույս տալիս, որ մենք նույնպես հարություն կառնենք, եթե մինչ Նրա վերադարձը մեռնենք: Մենք ինչպիսի՞ մխիթարություն կարող ենք գտնել փրկության ծրագրի մեջ մահվան առաջ, որը մեզ թվում է ինչ-որ վերջնական, ավարտված և անողոք մի բան:
3. Բոլորդ միասին բարձրաձայն կարդացե՛ք այս շաբաթվա ուսումնասիրության համար առաջարկված հատվածը (Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18): Այնուհետև խոսեք դրա նշանակության մասին, թե ինչպիսի զգացմունքներ է ընթերցված հատվածն առաջացնում ձեզ մոտ, արտահայտվեք նաև հատվածում ամփոփված հույսի և խոստման մասին:

Վերջաբան

Ուսումնասիրվող հատվածում Պողոսը մահացածների վիճակի և Քրիստոսի երկրորդ գալուստին ուղեկցող մի շարք սխալ տեսակետներ է ուղղում: Երբ Հիսուսը վերադառնա, առաջինը

հարություն կառնեն Քրիստոսում մեռածները, այնուհետև բոլոր հավատացյալները միասին կբարձրանան և Հիսուսի հետ օդում կհանդիպեն: Հավատացյալները խորապես կմխիթարվեն՝ իմանալով, որ իրենց սրտին սիրելի հավատացյալ մարդկանցից բաժանումը ժամանակավոր է:

ԵՋՐԱՓԱԿԻՉ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 5.1-11, Ծննդոց 3.15-24, Եսայիա 13.6-9, Ղուկաս 21.34-36, Հռոմեացիս 1.18:

Հիշելու համարը.

«Իսկ մենք, ցերեկինը լինելով, արթուն լինենք՝ հագած հավատքի և սիրո զրահը և փրկության հույսի սաղավարտը» (Ա Թեսաղոնիկեցիս 5.8):

Հիմնական միտքը.

Քրիստոսի վերադարձի իրական լինելը մեզ պարտավորեցնում է միշտ պատրաստ լինել Նրա հետ հանդիպմանը:

Ուղերձի այն հատվածում, որը մենք պետք է ուսումնասիրենք շաբաթվա ընթացքում, առաջվա պես հիմնական թեման երկրորդ գալուստն է, սակայն կիզակետը մի փոքր տեղափոխվում է: Այստեղ Պողոսն այնքան չի լուսաբանում Հիսուսի վերադարձի մանրամասները, որքան խոսում է այդ իրադարձությանը (և դրան հաջորդող դատին) մշտապես պատրաստ լինելու մասին: Նախորդող աստվածաշնչյան հատվածը ոգևորող էր. երբ գա վերջը, ամեն ինչ ավելի լավ կդասավորվի, քան թեսաղոնիկեցիներն ակնկալում էին: Սակայն հիմա, երբ նրանք ավելի լավ են հասկանում վերադարձի բնությունը, հարց է առաջանում. ինչպե՞ս դրան պատրաստվել:

Հավանաբար, Թեսաղոնիկեի եկեղեցու խնդիրը հետևյալն էր. միավորել «խաղաղություն և ապահովություն» աստվածաբանությունը և եկեղեցու անդամների փորձերը՝ հաշվարկելու երկրորդ գալուստի ժամանակը: Թեսաղոնիկեցիները հույս ունեին մարգարեության միջոցով կանխագուշակել, թե երբ կլինեն վերջին իրադարձությունները, և այդ կերպ իմանալ, թե որ ժամանակի համար պատրաստվեն: Արդյունքում, որոշ հավատացյալներ ապրում էին՝ չգիտակցելով մշտապես պատրաստ լինելու անհրաժեշտության մասին: Մի՞թե մենք էլ այսօր նման իրավիճակում չենք: Որքան երկար է մարդկությունը մնում երկրի վրա, այնքան մեզ հեշտ է կորցնել երկրորդ գալուստի մոտ լինելու զգացումը:

Այդ պատճառով մենք պետք է լուրջ ուշադրություն դարձնենք Պողոսի խոսքերին:

Միաշաբթի ***օգոստոսի 26***

Դատաստանի երկու սահմանները

Կարդացե՛ք Ծննդոց 3.15-24-ը: Ինչո՞ւմ էր ամփոփվում Աստծո դատաստանը Ադամի և Եվայի վրա: Թվարկեք դատաստանի և՛ դրական, և՛ բացասական տեսանկյունները: _____

_____

_____

Թեև Ա Թեսաղոնիկեցիս 5.1-11-ում «դատաստան» բառը չի հանդիպում, տվյալ հատվածն անմիջական կապ ունի այդ իրադարձության հետ: Պողոսը ցանկանում է, որպեսզի Թեսաղոնիկեի հավատացյալներն իմանան. Աստծո դատաստանը չի սահմանափակվում նրանով, ինչ կկատարվի երկնքում ժամանակի վերջում, սակայն իրական հետևանքներ ունի նրանց առօրյա կյանքի համար:

Ներկա ժամանակի մարդկանցից շատերին անհանգստացնում է դատաստանի թեման: Նրանց դուր չի գալիս դատաստանի բացասական, սպառնալից կողմը: Սակայն աստվածաշնչյան դատաստանի հայեցակարգը շատ ավելի լայն է: Դա պարզապես սպառնալիք, մեղադրանք և պատիժ չէ: Դատաստանը դրական տեսանկյուն էլ ունի: Ողորմածության և բարության առօրյա պարզ դրսևորումներն աննկատ և չվարձատրված չեն մնա (տե՛ս օրինակ. Մատթեոս 10.42): Աստված տեսնում է այն ամենն, ինչ մենք անում ենք՝ թե՛ լավը, թե՛ վատը, և այդ ամենը նշանակություն ունի:

Դատաստանի երկկողմանի էությունն արդեն իսկ երևում է աստվածաշնչյան վաղ պատմությունների մեջ: Եդեմական պարտեզում Աստված դատապարտում է Ադամի և Եվայի մեղքը: Այժմ մեղքի հետևանքները կազդեն կյանքի տարբեր բնագավառների վրա. երեխաների ծնունդի, երկիրը մշակելու և անգամ մարդկանց թույլատրված բնակության վայրի վրա: Միևնույն ժամանակ, աստվածային դատաստանն ունի նաև դրական տեսանկյուն: Տերը մարդու և սատանայի միջև թշնամություն է դնում և ողորմած կերպով մարդկանց կաշվե հագուստ հագցնում, որպեսզի նրանք չափից դուրս չտառապեն փոփոխված միջավայրում: Ավելին, այդ հագուստը խորհրդանշում է Քրիստոսի արդարությունը, որը նույն կերպ կծածկի նրանց մեղքերը:

Ծննդոց գրքի 4-րդ գլխում Աստված դատապարտում է Կայենին՝ նրան աքսորելով: Սակայն այստեղ առկա է նաև ողորմությունը: Աստված Կայենի վրա հատուկ նշան է դնում, որպեսզի ոչ ոք չսպանի նրան: Ջրհեղեղի ժամանակ Աստված մարդկությանը դատապարտում է՝ ողջ կենդանի աշխարհի կորուստը կանխասելով, սակայն նախատեսում է տապան փրկության համար (Ծննդոց 6-9):

Ծննդոց գրքի 11-րդ գլխում Աստված խառնում է լեզուները և մարդկանց ցրում երկրով մեկ (բացասական տեսանկյունը): Արդյո՞ք դրանում դրական տեսանկյուն կա: Այն կարելի է տեսնել Աբրահամին ուղղված կոչում, որպեսզի նա օրհնություն դառնա երկրի բոլոր ցեղերի համար (Ծննդոց 12.3) հենց նույն մարդկանց համար, ովքեր դրանից շատ տարիներ առաջ Բաբելոնից ցրվել են (Ծննդոց 11.9):

Ճշմարտությունն այն մասին, որ դատաստանի ժամանակ Քրիստոսը մեր տեղն է գրավում, ինչպե՞ս է այն մեզ համար դրական դարձնում: Խորհելով դատաստանի մասին՝ ինչո՞ւ մենք միշտ պետք է հիշենք այդ կարևոր ճշմարտության մասին:

Երկուշաբթի ***օգոստոսի 27***

Հանկարծակի և անսպասելիորեն (Ա Թեսաղոնիկեցիս 5.1-3)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.1-3-ը և Գործք առաքելոց 1.6,7-ը: Այս տեքստերում ի՞նչ են նշանակում «ժամերը և ժամանակները» խոսքերը: _____

_____

_____

_____

«Տիրոջ օրը» բառակապակցությունը հաճախ է հանդիպում հինկտակարանյան հատվածներում, որոնք պատմում են ժողովուրդների նկատմամբ վերջնական դատաստանի մասին: Այն նկարագրում է Աստծո վերջնական միջամտությունը՝ ընդգծելով անհնազանդության բացասական հետևանքները (Եսայիա 13.6-9, Երեմիա 46.10, Եզեկիել 30.2-12): Ուղերձի բերված հատվածում Պողոսը զուգակցում է այդ հինկտակարանյան հայեցակարգը՝ տուն թափանցել փորձող գողի մասին Հիսուսի առակի հետ: (Մատթեոս 24.43, Ղուկաս 12.39):

Այնպիսի երեք փոխաբերություններ, ինչպիսիք են Տիրոջ օրը, գիշերվա գողը և երկունքի ցավերը, մեկ միտք են լուսաբանում՝ Քրիստոսի

երկրորդ գալուստը հանկարծակի, անսպասելի և անխուսափելի կլինի անմաքուրների համար: Տիրոջ այցելության օրը վերջին պատրաստվելու համար ժամանակը չէ: Պատրաստվել պետք է հիմա:

Սակայն 4-րդ համարում պարզորոշ ցույց է տրված, որ Պողոսը թեսաղոնիկեցիներին չի հանդիմանում: Նրանք արդեն գիտեն, որ Տիրոջ օրը գիշերվա գողի պես կգա: Սակայն նրանք, ովքեր գոչում են. «Խաղաղությո՛ւն և ապահովությո՛ւն», կապշեն հանկարծահաս կործանումից:

Գործք առաքելոց 1.6,7-ում աշակերտները Հիսուսին հարցնում են երկրի պատմության վերջին իրադարձությունների մասին: Սակայն Հիսուսը նրանց հետաքրքրասիրությունը չի բավարարում: Նրանց պետք չէ իմանալ ժամանակի վերջը: Մենք տեսնում ենք, որ «ժամեր և ժամանակներ» արտահայտությունը ցույց է տալիս ժամանակի ավարտը հաշվարկելու փորձերը: Նման փորձերը ուշադրություն են գրավում, սակայն դրանք հոգևորապես արդյունավետ չեն: Դրանք կա՛մ դեպի հիասթափության են տանում, երբ հաշվարկված ժամանակն անցնում է, կա՛մ այն մտքին, որ նախապատրաստությունը կարելի է հետաձգել, քանի որ այդ ժամանակը դեռ շուտ չի գա:

Ինչպիսի՞ զուգահեռներ կան Ղուկաս 21.34-36-ի և Ա Թեսաղոնիկեցիս 5.1-11-ի միջև: _____

_____

_____

_____

_____

Ըստ Ղուկաս 21.34-ի՝ շատ մարդիկ որկրամոլության, հարբեցողության և զվարճությունների միջոցով փորձում են հոգևոր պատասխանատվությունից խուսափել: Ուրիշները կարող են ավելի ուշադիր լինել վերջին ժամանակներում հոգևոր պատրաստությանը, սակայն կյանքի հոգսերն ու տագնապները նրանց շեղում են դրանից: Սակայն ավարտի հանկարծահասությունը նշանակում է, որ այդ ժամանակն անխուսափելիորեն կգա, և այն ճակատագրական կլինի բոլոր ունայնամիտ և ինքնահավան մարդկանց համար: Հաջորդ խոսքերում (Ղուկաս 21.34-36) Քրիստոսն ասում է, որ փորձանքից կարող են խուսափել միայն արթուն մնացողները:

Ինչպե՞ս սովորել ապրել Քրիստոսի մոտալուտ գալուստին սպասելով և, միևնույն ժամանակ չընկնել մոլեռանդության կամ ծայրահեղության մեջ: Ինչպե՞ս մենք կարող ենք ճիշտ հաշվեկշիռը պահպանել: Ձեր պատասխաններով կիսվեք դասարանում:

Հավատացյալի առավելությունը (Ա Թեսաղոնիկեցիս 5.4,5)

Հինգերորդ գլխի առաջին հինգ համարներում Պողոսը դիմում է այն մարդկանց, ովքեր տարբեր պատճառներով պատրաստ չեն Տիրոջ գալուստին: Թեսաղոնիկեցիները գիտակցում են երկրորդ գալուստի իրական լինելը, սակայն նրանց հայտնի չէ այդ իրադարձության ժամանակը: Դրա հանկարծահաս լինելը ողբերգություն կդառնա անպատրաստների համար: Ոմանք պատրաստ չեն, քանի որ չեն հավատում երկրորդ գալուստին, մյուսները համարում են, որ պատրաստությունը կարող են այնքան հետաձգել, մինչև կատարվելիք իրադարձությունները նրանց կհամոզեն վերջի մոտ լինելու մասին:

Դա տեղի է ունեցել 1950-ականների վերջում: Երիտասարդը լսեց, ինչպես քարոզիչն ասաց, որ Հիսուսը 1964 թվականին կգա, այդ պատճառով եկեղեցին պետք է պատրաստվի այդ իրադարձությանը: Երիտասարդը որոշեց. քանի որ դեռևս բավականին ժամանակ կա, նա իրեն նախապատրաստությամբ չի ծանրաբեռնի մոտավորապես մինչև 1962 թվականը: Այլ խոսքերով, քարոզչի ցանկությունը՝ մարդկանց մեջ արթնացնել գալուստի մոտ լինելու գիտակցումը, տվեց հակառակ արդյունքը: Իհարկե, նման հետաձգումները վտանգավոր են, քանի որ մենք չգիտենք՝ արդյոք մինչև օրվա վերջը կենդանի կլինե՞նք, թե՞ ոչ: Բարի լուրն այն է, որ մեզ պետք չէ իմանալ, թե երբ Հիսուսը կգա, կարևորը Նրա գալուստին արդեն հիմա պատրաստ լինելն է:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.4,5-ը: Ո՞րն է նման փոխաբերությունների հոգևոր նշանակությունը, ինչպիսի՞ք են «լույսը և խավարը», «օրը և գիշերը» փոխաբերությունների հոգևոր նշանակությունը: Ձեր կյանքի ո՞ր տեսանկյունները կարելի է համեմատել լույսի, և որոնք՝ խավարի հետ: Ինչպիսի՞ն պետք է լինի ձեր որոշումը: _____

_____

_____

Նշված համարներում Պողոսը հակադրում է մի շարք այնպիսի երևույթներ, ինչպիսիք են օրն ու և գիշերը, լույսն ու խավարը (3-րդ համարում մենք հանդիպում ենք նման հակադրության. ապահովություն և կորուստ): Անհավատները զարմանք կապրեն վերջին իրադարձություններից, իսկ հավատացյալների համար դրանք անակնկալ չեն

լինի: Ինչո՞ւ: Որովհետև նրանք լույսի մեջ են բնակվում: Աստվածաշունչը դա «ճրագ է իմ ոտների համար, և լույս՝ իմ ճանապարհի համար» (Սաղմոս 119.105): Մարգարեությունը տրված է, որպեսզի մենք բավականաչափ տեղեկություն ունենանք, որպեսզի հոգևորապես պատրաստ լինենք գալիք իրադարձություններին:

Երկրորդ գալուստին նախապատրաստվելիս պահանջվում է շատ ժամանակ Աստծո Խոսքի ուսումնասիրությանը հատկացնելու համար: Պատրաստությունն իր մեջ ներառում է երկնքում գանձեր դիզելը և ամեն օր մեզ Աստծուն նվիրաբերելը:

Ժամանակակից աշխարհում մեզ շատ բան է շեղում՝ աշխատանքը, համացանցը, զվարճությունները և լավ տրամադրության բազմաթիվ խթանիչներ: Մի կողմ դրեք այդ ամենը: Ձեր կյանքում առաջին տեղում Աստծո Խոսքը դրեք, և վերջին ժամանակների իրադարձությունները ձեզ անակնկալի չեն բերի, երբ էլ դրանք կատարվեն:

Չորեքշաբթի ***օգոստոսի 29***

Մշտական զգոնություն (Ա Թեսաղոնիկեցիս 5.6-8)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.6-8-ը: Հարբեցող և սթափ մարդկանց նկարագրությունն ինչպե՞ս է մեզ օգնում ավելի լավ հասկանալ Հիսուսի երկրորդ գալուստին պատրաստվելու թեման: _____

_____

_____

Պողոսը 6-րդ համարն սկսում է «ուրեմն» բառով: Նա սահմանեց, որ Հիսուսի ճշմարիտ հետևորդները լույսի և ցերեկի որդիներ են: Այսօրվա հատվածում առաքյալը շարունակում է համեմատություններ բերել՝ հավատացյալներին համոզելու ավելի ու ավելի պատրաստված լինել Հիսուսի գալուստին: Այն դեպքում, երբ 7-րդ համարն իրենից ներկայացնում է մի փոքր շեղում, 6 և 8 համարները թեսաղոնիկեցիներին դրդում են արթուն մնալ, զգոն լինել և պատրաստվել գալիք փորձություններին:

Պողոսն սկսում է «ննջել/արթուն մնալ» հակադրումից: Քանի որ հավատացյալները «ցերեկի որդիներ են», նրանք չպետք է քնեն, քանի որ քնելու համար գիշերն է նախատեսված: Իհարկե, Պողոսը փոխաբերաբար է արտահայտվում: Տվյալ համարում քունը հոգևոր ծուլությունը կամ հետաքրքրության բացակայությունը նշող փոխաբերություն է (10-րդ

համարում առաքյալը քունը մահ է անվանում): Բնագրում «չքնենք» արտահայտությունը հնչում է. «Նույնիսկ մի՛ ննջեք»: Պողոսը ենթադրում է, որ թեսաղոնիկեցիներն արդեն արթուն են, սակայն հորդորում է նրանց առավել աչալուրջ լինել:

Պողոսը հավատացյալներին կոչ է անում սթափ լինել, այլ ոչ թե չհարբել: Հին աշխարհում սթափությունը փիլիսոփայական հասկացողություն էր: Պողոսը ցանկանում է, որպեսզի թեսաղոնիկեցիները խորհող և շրջահայաց լինեն Սուրբ Գիրքն ուսումնասիրելիս, այս կամ այն հետևությունն անելիս: Ոմանց Աստվածաշունչը պետք է, որպեսզի իրենց տարեթվերը սահմանեն և դրանք շահարկեն: Պողոսը ցանկանում է, որ դրա փոխարեն հավատացյալները կենտրոնանան Սուրբ Գրքի էության և անձնական նախապատրաստության վրա: «Սթափ/հարբեցող» փոխաբերությունը կարող է նաև ցույց տալ որոշակի առումով էթիկական սահմանափակումներ, ինչին նա դրդում է Ա Թեսաղոնիկեցիս 4.1-12-ում:

Ցերեկը զուգորդվում է արթուն մնալու և սթափ լինելու հետ: Մարդիկ գիշերը քնում են, և սովորաբար՝ հարբում: Սակայն 8-րդ համարում Պողոսը նկարագրում է ժամապահներին: Պահակները ցանկացած ժամանակ՝ ցերեկ և գիշեր, պետք է արթուն և սթափ լինեն: Եվ նման զինվորներին՝ քրիստոնյաները պետք է հագնեն իրենց «համազգեստը»՝ նախքան իրենց դիրքերը կգրավեն:

Պողոսի խոսքերը կարդացեք որպես անձամբ ձեզ ուղղված կոչ: Դուք ինչպե՞ս դրանց կարձագանքեիք և կմարմնավորեիք ձեր կյանքում: Այսինքն, ձեր կյանքում ի՞նչ փոփոխության կարիք կա, որպեսզի դուք կարողանաք կատարել այն, ինչի մասին խոսում է առաքյալը:

Հինգշաբթի ***օգոստոսի 30***

Մխիթարե՛ք միմյանց (Ա Թեսաղոնիկեցիս 5.9-11)

Ինչպես տեսանք Ա Թեսաղոնիկեցիս 5.1-11-ում, Պողոսը մի շարք հակադրություններ նկարագրեց՝ դատաստանի երկու կողմը պատկերելու համար: Այսօրվա մեր հատվածում (Ա Թեսաղոնիկեցիս 5.9-11) Պողոսը ցույց է տալիս հակադրությունը բարկության և փրկության միջև: Հավատացյալները կարող են իրենց վստահ զգալ, երբ խոսքը վերջին օրերի մասին է, քանի որ Քրիստոսում նրանք երաշխիք ունեն, որ լույսի որդիներ են:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.8-11-ը: Ինչպիսի՞ գլխավոր լուր են պարունակում այս համարները: Ի՞նչ հույսի մասին է խոսում Պողոսը, և ինչո՞ւ մենք կարող ենք հավակնել դրան: Ինչպե՞ս է ավետարանը բացվում այս տեքստերում: _____

_____

_____

_____

Այսօր շատերը համարում են, որ Աստծո բարկության աստվածաշնչյան հայեցակարգն ավելի շուտ արտացոլում է այն ժամանակվա մշակույթը, քան ճշմարտությունն Աստծո մասին: Սակայն դա այդպես չէ: Աստվածաշնչում Տերն իրոք արտահայտել է ճշմարտությունը մարդկային լեզվի սահմաններում: Սակայն Աստծո բարկության հայեցակարգը հանդիպում է ոչ միայն Աստվածաշնչի վաղ գրքերում: Այն լայնորեն ներկայացված է Նոր կտակարանում և նույնիսկ հնչում է Հիսուսի շուրթերից (Ղուկաս 21.23, տե՛ս նաև Հովհաննես 3.36), Պողոսի գրչով (Հռոմեացիս 1.18, Ա Թեսաղոնիկեցիս 1.10), հանդիպում է Հայտնության գրքի տեսիլքներում (Հայտնություն 6.16,17, 15.1): Այդ պատճառով մենք չենք կարող այն անտեսել, չէ՞ որ այն շատ կարևոր բան է արտահայտում Աստծո և փրկության ծրագրի մասին:

Թեև մենք չենք կարող այդ հարցի ողջ խորությունն ըմբռնել, սակայն հստակ կերպով պետք է հասկանանք, որ Աստծո բարկությունը բանականությամբ անըմբռնելի, հանկարծական մղումով ցասումի նոպա չէ: Աստծո ճանապարհները մեր ճանապարհները չեն (տե՛ս Եսայիա 55.8,9): Աստծո բարկության աստվածաշնչյան հայեցակարգն արտահայտում է Տիրոջ արձագանքը բուն մեղքի երևույթին: Այն նաև պատասխանն է ժողովրդի կարիքին, որպեսզի արդարադատությունը կատարվի օրենքը խախտողների նկատմամբ, ովքեր ճնշում և վիրավորում են շրջապատի մարդկանց: Մեղքի մեջ համառողները կպատժվեն և կոչնչացվեն: Քանի որ մենք բոլորս էլ Աստծո օրենքը խախտել ենք, ապա բոլորս էլ արժանի կլինեինք դատապարտության, եթե չլինեին Քրիստոսի կյանքը, մահը և հարությունը:

Դա Աստծո բարկության մասին բարի լուրն է, որը փայլատակում է Ա Թեսաղոնիկեցիս 5.8-11-ում: Աստծո նպատակը մեր նկատմամբ պատժիչ արդարադատություն իրականացնելը չէ, այլ շնորհ և փրկություն պարգևելը: Քրիստոսում նա մեզ պարգևեց անհրաժեշտ պաշտպանությունը, որպեսզի դատաստանի ժամանակ մենք չոչնչանանք: Այդ պատճառով Պողոսը համարում էր, որ Աստծո բարկությունը, եթե այն ճիշտ հասկանանք, ավելի շուտ քաջալերում է, քան վախ է առա-

ջացնում (Ա Թեսաղոնիկեցիս 5.11): Քրիստոսում մենք երբեք Աստծո բարկությունը չենք զգա, քանի որ խաչի վրա Հիսուսն այն զգաց մեր փոխարեն: Հռչակե՛ք այդ բարի լուրը:

Ուրբաթ ***օգոստոսի 31***

Հետագա ուսումնասիրության համար

«Մեզ անհրաժեշտ է արթուն լինել, քանի որ մեր սրտերը նենգ են. մենք լիովին մարդկային տկարությունների և թուլությունների իշխանության տակ ենք, իսկ սատանան հաստատ կերպով մտադրված է մեր հոգիները կործանել: Մենք երբեմն թուլացնում ենք աչալրջությունը, բայց մեր թշնամին միշտ զգոն է: Իմանալով նրա անխոնջ արթնության մասին՝ ուրիշների պես չքնենք, այլ «արթուն լինենք և զգաստանանք» (Է.Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հ.5, 409):

«Հավանաբար, ոմանք կարծում են, թե փորձվում են, այդ պատճառով պետք է Տիրոջն ապացուցեն, որ փոխվել են՝ նախքան Նրա օրհնության վրա հույս կդնեն: Սակայն... Հիսուսը ցանկանում է, որպեսզի մենք Նրա մոտ գանք, ինչպիսին որ կանք՝ մեղավոր, անօգնական, կախյալ: Մենք հայտարարում ենք, որ լույսի, այլ ոչ թե գիշերվա կամ խավարի որդիներ ենք: Ի՞նչ իրավունք ունենք անհավատ լինել» (Է.Ուայթ, Ընտիր լուրեր, հ.3,150):

«Այսպես կոչված շատ քրիստոնյաներ... ապրում են աշխարհի համար: Նրանց հավատը սահմանափակ ազդեցություն ունի իրենց ցանկությունների վրա: Դավանելով իրենց որպես Լույսի զավակներ՝ նրանք խավարի մեջ են քայլում և գիշերվա ու խավարի զավակներ են» (Է. Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հ.1,404):

«Աշխարհը, որն ապրում է այնպես, ասես Աստված չկա, ընկած եսասիրական բաղձանքների բավարարման ետևից, շուտով կկանգնի անսպասելի կործանմանը դեմ առ դեմ և չի խուսափի... Սատանան գործում է իր ողջ հմտությամբ և թովչանքով՝ մարդկանց ստիպելով կուրորեն համաքայլել իրենց համար պատրաստված ճանապարհով, մինչև որ Տերը կբարձրանա Իր գահից և երկրի բնակիչներին անօրենության համար կպատժի: Այդ ժամանակ երկիրը բաց կանի իր կողմից կլանված արյունը և այլևս չի թաքցնի սպանվածներին: Ասես ողջ աշխարհն ընթանում է դեպի անխուսափելի մահը»: (Է.Ուայթ, Ավետարանչություն, 26):

Հարցեր քննարկման համար

1. Եթե այսօր Քրիստոսը գար, արդյո՞ք դուք պատրաստ կլինեիք: Քննարկե՛ք հարցերը և դրանց հիմնավորումները:
2. Անդրադարձեք երկուշաբթի օրվա վերջին հարցի ձեր պատասխաններին: Ինչպե՞ս կարելի է պատրաստվածության վիճակում գտնվել և միևնույն ժամանակ լիարժեք կերպով հասարակության հետ համագործակցել:
3. Ինչպիսի՞ ազդեցություն է ձեր կյանքի վրա գործում աստվածաշնչյան տեսակետը վերջին ժամանակի իրադարձությունների վերաբերյալ: Անցած տարիների համեմատ ձեր հայացքները փոխվե՞լ են վերջին ժամանակների իրադարձությունների վերաբերյալ: Ինչո՞ւ փրկության ծրագրի և միայն հավատով արդարացման ընմբռնումն այդքան մեծ նշանակություն ունի վերջին ժամանակների իրադարձությունները հստակ հասկանալու համար:

Վերջաբան

Ա Թեսաղոնիկեցիս 5.1-11-ում Պողոսը կոչ է անում լիովին նվիրվել Հիսուսի երկրորդ գալուստի պատրաստմանը: Ավետարանն ընդունելով՝ մենք լույսի զավակներ ենք դառնում: Ապրելով ավետարանական սկզբունքներով՝ հավատի, հույսի և սիրո մեջ, մենք ավելի ու ավելի ենք աճում Հիսուսում՝ պատրաստվելով Նրա հետ հանդիպմանը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Թեսաղոնիկեցիս 5.12-28, Մատթեոս 5.43-48, Գաղատացիս 5.22, Փիլիպպեցիս 4.4, Հովհաննես 15.4-6:

Հիշելու համարը.

«Մարգարեությունները մի՛ անարգեք: Ամեն բան փորձեցեք, բարին ամուր բռնեցեք» (Ա Թեսաղոնիկեցիս 5.20,21):

Հիմնական միտքը.

Պողոսը Թեսաղոնիկեի եկեղեցու ղեկավարներին և հասարակ անդամներին տալիս է հոգևոր և գործնական խորհուրդ այն մասին, թե ինչպես պետք է միմյանց հանդեպ վերաբերվել:

Թեսաղոնիկեցիներին ուղղված իր Առաջին ուղերձը Պողոսն ավարտում է տասնյոթ հորդորով (Ա Թեսաղոնիկեցիս 5.12-22), որոնց հաջորդում է եզրափակիչ աղոթքը (Ա Թեսաղոնիկեցիս 5.23-27): Այս շաբաթվա դասն սկսվում է երեք հորդորով, թե ինչպես տեղական եկեղեցու անդամները պետք է իրենց ղեկավարներին վերաբերվեն (Ա Թեսաղոնիկեցիս 5.12,13): Այս պատվերները փոխվում են վեց ցուցումով այն մասին, թե տեղական եկեղեցու ղեկավարներն ինչպես պետք է անդամների հետ իրենց պահեն:

Հաջորդ յոթ տեքստում ևս ութ համառոտ հորդոր է տրվում (Ա Թեսաղոնիկեցիս 5.16-22): Դրանք կարելի է բաժանել երկու խմբի. երեք խորհուրդ քրիստոնեական ոգու պահպանման մասին (Ա Թեսաղոնիկեցիս 5.16-18), և հինգը՝այն մասին թե ինչպես նոր մարգարեական լույսն ընկալել (Ա Թեսաղոնիկեցիս 5.19-22):

Եզրափակիչ աղոթքում Պողոսն ամփոփում է իր նամակի գլխավոր թեմայի արդյունքը. Թեսաղոնիկեի հավատացյալներն այսուհետ պետք է սրբության մեջ աճեն՝ ընդհուպ մինչև երկրորդ գալուստը: Այլ կերպ ասած, ամեն օր նրանք պետք է ապրեն՝ պատրաստվելով Տիրոջ գալուստին: Որոշակի իմաստով, ի՞նչն ավելի լավ կարող է փոխանցել «ներկա ժամանակի ճշմարտության» իմաստը, քան այս մաղթանքները:

Ծառայության հանդեպ վերաբերմունքը (Ա Թեսաղոնիկեցիս 5.12, 13)

Այսօրվա դասի կենտրոնում գտնվող երկու համար հաջորդում են նախորդ շաբաթվա ընթացքում մեր դիտարկած վերջին խրատներին. «Սրա համար իրար մխիթարեցեք և իրար շինություն տվեք, ինչպես անում էլ եք» (Ա Թեսաղոնիկեցիս 5.11): Այս աշխատանքը տեղական համայնքներում է կատարվում: Այն իր մեջ է ներառում ուսուցանելու և աշակերտելու գործընթացը: Այսօրվա դասը կենտրոնացած է նրա վրա, թե ինչպես պետք է աշակերտներն արձագանքեն իրենց ղեկավարների և ուսուցիչների աշխատանքին:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.12,13-ը: Ինչի՞ մասին է այստեղ խոսում Պողոսը, և մենք ինչպե՞ս կարող ենք այդ խոսքերը կիրառել մեր նկատմամբ: Ինչպե՞ս դուք կարող եք զորացնել, աջակցել և սիրել «ձեր վերակացուներին Տերում»: _____

_____

_____

Հունարենում 12-րդ համարի կառուցվածքը ցույց է տալիս, որ տեքստի երկրորդ մասի բոլոր երեք արտահայտությունները նույն խմբին են վերաբերում՝ թեսաղոնիկեցիների տեղական եկեղեցու ղեկավարներին: Պողոսը կոչ է անում եկեղեցու անդամներին «հարգել» նրանց, ինչը նշանակում է քաղաքավարի, հարգալից վերաբերվել և գնահատել նրանց: Ենթատեքստը հանգեցնում է այն մտքին, որ, հավանաբար, եկեղեցու որոշ անդամներ իրենց անհարգալից էին պահում ղեկավարների հանդեպ:

«Խրատել» բառը նշանակում է սովորեցնել, նախազգուշացնել, փորձել խելքի բերել: Այստեղ Պողոսն ընդունում է, որ եկեղեցու ղեկավարները հաճախ ստիպված են «խիստ սեր» դրսևորել: Միշտ չէ, որ մարդիկ ողջունում են նմանատիպ ղեկավարության, ամեն դեպքում, 13-րդ համարում Պողոսը շարունակում է այդ թեման՝ խնդրելով եկեղեցու անդամներին բարձր գնահատել իրենց ղեկավարներին՝ հաշվի առնելով այն դժվարին խնդիրները, որոնց հետ նրանք գործ են ունենում: Պողոսը ցանկանում է, որպեսզի եկեղեցու բոլոր անդամները միմյանց հետ հաշտ լինեն:

Այս համարների լեզուն արտահայտում է մարդկանց միջև եղած փոխհարաբերությունների հին սկզբունքները: Պողոսի ժամանակների հեղինակավոր առաջնորդները գիտեին, որ տարբեր մարդկանց հետ

փոխհարաբերություններ կառուցելը նուրբ աշխատանք է: Նրանք ղեկավարներին դրդում էին մանրակրկիտ կերպով վերլուծել իրենց հետևորդների վիճակը, զգալ ուղղվելու նկատմամբ նրանց պատրաստակամությունը, ընտրել ճիշտ ժամանակ և անհրաժեշտ միջոցներ: Սակայն ղեկավարներից առաջին հերթին ակնկալվում էր, որ մինչ նրանք կփորձեն ուրիշներին ուղղել, իրենք իրենց պետք է քննեն: Պողոսը կարևոր տարրեր է ավելացնում այդ հիմնարար սկզբունքներին: Քրիստոնյաների համար Աստված է ղեկավարության օրինակը, և եկեղեցական ղեկավարության նպատակը բարեպաշտ կյանքով ապրող հավատացյալների միաբանությունն է:

Որոշ մշակույթներում միտում է նկատվում ղեկավարության հանդեպ անվստահություն և նույնիսկ բացահայտ անհնազանդություն, ուրիշներին բնորոշ է կուրորեն հնազանդվելը: Ղեկավարության հանդեպ ինչպիսի՞ վերաբերմունք է բնորոշ ձեր մշակույթին, և դա ինչպե՞ս է ազդում ձեր եկեղեցու վրա:

Երկուշաբթի *սեպտեմբերի 3*

Ծառայություն կատարելով (Ա Թեսաղոնիկեցիս 5.14, 15)

12 և 13 համարներում Պողոսը խոսում էր այն մասին, թե եկեղեցու անդամներն ինչպես պետք է իրենց ղեկավարներին վերաբերվեն: Այսօրվա հատվածում (Ա Թեսաղոնիկեցիս 5.14,15) Պողոսը դիմում է ղեկավարներին և ցույց տալիս, թե նրանք ինչպես պետք է վերաբերվեն իրենց խնամակալության տակ գտնվողներին:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.14,15-ը: Պողոսն ի՞նչ խորհուրդ է տալիս եկեղեցու ղեկավարներին: Վերլուծե՛ք այդ սկզբունքները: Անկախ եկեղեցում մեր դերից, մենք ինչպե՞ս կարող ենք այն կիրառել մեր հանդեպ: Այդ սկզբունքներն ինչպե՞ս է պետք կիրառել աշխատանքի վայրում, տանը և ցանկացած այլ իրավիճակում: Տե՛ս նաև Մատթեոս 5.43-48-ը: _____

Պողոսը Թեսաղոնիկեի եկեղեցու ղեկավարներին կոչ էր անում՝ «խրատեցե՛ք անկարգներին» (Ա Թեսաղոնիկեցիս 5.14): Եկեղեցու անկարգ անդամների թվին էին պատկանում նրանք, ովքեր հրաժարվում էին իրենք իրենց ապահովել և համառություն էին դրսևորում, ինչպես նաև նրանք, ում անհրաժեշտ էր հանդիմանել: Դրան հակառակ, Պողոսը

ղեկավարներին կոչ է անում. «մխիթարե՛ք փոքրասիրտներին, օգնական եղեք տկարներին, երկայնամիտ եղեք ամենի հետ» (Ա Թեսաղոնիկեցիս 5.14): «Փոքրասիրտները» թուլակամ, երկչոտ և անվճռական մարդիկ են: Նրանք շատ բանով են անհանգստանում և հուզվում: Սակայն նման մարդիկ նույնպես կարևոր են Աստծո համար, այդ պատճառով ղեկավարները պետք է նեցուկ լինեն նրանց:

«Տկարները» բարոյապես և հոգևորապես թույլ մարդիկ են: Նրանք դյուրահավատ են, փորձությունների մեջ շուտ են հիասթափվում և վախենում են նրանից, ինչ անհայտ է: Նրանց սրտերը կարող են դեպի ճշմարտությունը ձգտել, սակայն նրանց գիտելիքները բավարար չեն, և անցյալը շարունակում է նրանց անհանգստացնել: Կենդանի մնալու համար նրանց օգնություն է պետք:

Պողոսը եկեղեցու ղեկավարներին խորհուրդ է տալիս համբերատար լինել յուրաքանչյուրի հանդեպ: Եթե 14-րդ համարում առաջին երեք խորհուրդները որոշակի մարդկանց և իրավիճակների են վերաբերում, ապա հովվական ծառայության մեջ համբերությունը միշտ էլ տեղին է:

Հնարավոր է, որ 15-րդ համարում Պողոսը շարունակում է ղեկավարների մասին մտածել: Երբ հոգատար ղեկավարը քննադատություն է լսում նրանցից, ովքեր նրա նախազգուշացումները չեն գնահատում, նրա մոտ կարող է փորձություն առաջանալ ագրեսիային ագրեսիայով պատասխանել: Սակայն, երբ ղեկավարները նման կերպ են արձագանքում, դրանով նրանք ցույց են տալիս, որ տվյալ պահին Քրիստոսի Հոգով չեն շարժվում: Եկեղեցու առողջ ղեկավարության համար չափազանց կարևոր է շրջապատի մարդկանց բարօրության համար հոգալը:

12-ից 15 համարները ենթադրում են, որ եկեղեցում ուսուցիչներ և աշակերտներ կլինեն, այդ պատճառով շատ կարևոր է, որպեսզի նրանց փոխհարաբերություններում հարգանք և համբերություն դրսևորվի: Սակայն հիշե՛նք առաքյալի խոսքերը. «Իրար մխիթարեք, և իրար շինություն տվեք» (Ա Թեսաղոնիկեցիս 5.11): Հաճախ հովվական ծառայությունն իր մեջ ներառում է և՛ մեկը, և՛ մյուսը: Երբեմն ուսուցիչներին նույնպես անհրաժեշտ է սովորեցնել:

Երեքշաբթի ***սեպտեմբերի 4***

Քրիստոնեական ճիշտ հայացքներ (Ա Թեսաղոնիկեցիս 5.16-18)

Ըստ Ա Թեսաղոնիկեցիս 5.12-15-ի՝ քրիստոնյաները պետք է կարո-

ղանան ընդունել և արտահայտել կառուցողական քննադատություն: Դա միայն կարելի է անել փոխհարաբերությունների համատեքստում և սիրո ոգով: Դրա էությունն այն է, որ յուրաքանչյուր քրիստոնյա պետք է հաշվետու լինի մյուսներին և, միևնույն ժամանակ, պատրաստ լինի, որպեսզի ուրիշներն էլ իր իրեն հաշվետու լինեն: Աղոթող եկեղեցին կաճի հորդորների և փոխադարձ աջակցության մեջ:

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.16-18-ը: Ըստ Պողոսի՝ ո՞րն է Աստծո կամքը յուրաքանչյուր հավատացյալի համար: Ինչո՞ւ է կարևոր այդ կամքը կազմող երեք բաղադրիչներից յուրաքանչյուրը: Տե՛ս նաև Գաղատացիս 5.22-ը, Փիլիպպեցիս 4.4-ը:

_____

_____

_____

Աստծո Խոսքը շատ անգամ է մեզ կոչ անում ուրախանալ: Սակայն այդ հատկանիշին մենք շատ ավելի քիչ ուշադրություն ենք դարձնում, քան այն արժանի է: Ուրախությունը Հոգու պտղի հատկանիշներից մեկն է (Գաղատացիս 5.22, տե՛ս նաև Փիլիպպեցիս 4.4): Իսկ Սուրբ Հոգով տրված ուրախությունը նույնիսկ տառապանքների մեջ է հնարավոր (Ա Թեսաղոնիկեցիս 1.6):

Անկասկած, Պողոսն իր կյանքում դրսևորում էր անդադար աղոթքի օրինակը: Ինչպես մենք տեսանք, Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձը համակված է աղոթքով: Պողոսն ուղերձի ընթերցողներին հրավիրում է հետևել աղոթքի կյանքի իր օրինակին: Եվս մեկ քրիստոնեական առաքինություն՝ երախտագիտությունը, որը Պողոսը դրսևորում էր (Ա Թեսաղոնիկեցիս 1.2, Բ Թեսաղոնիկեցիս 1.3): Հեթանոսական անբարոյականության հիմքում ընկած էր Աստծո հանդեպ երախտամոռությունը (Հռոմեացիս 1.21): Ըստ Թոմաս Էրսկինի՝ «Նոր կտակարանում կրոնը՝ շնորհն է, իսկ բարոյագիտությունը՝ երախտագիտությունը» (F.F.Bruce, *Paul: Apostle of the Heart Set Free* (*UK*:*The Paternoster Press, 1977*, 19): Հետաքրքրական է, որ հունարենում ուրախություն և երախտագիտություն նշանակող բառերը նույն արմատից են կազմված: Բարեպաշտ ուրախության բանալին Աստծո հանդեպ անդադար երախտագիտության ոգին է:

Նայե՛ք ձեր շուրջը, Աստծո պարգևներն ամենուր մեզ շրջապատում են, մենք պարզապես մոռանում ենք Տիրոջը դրանց համար շնորհակալություն հայտնել, քանի որ կլանված ենք կյանքի անհանգստություններով և փորձություններով: Եթե մենք ավելի ու ավելի աճեցնենք Աստծո հանդեպ երախտագիտության զգացումը մեր մեջ, Նրա հետ մեր հա-

բաբերություններն ավելի սերտ կլինեն, իսկ կյանքն՝ ուրախությամբ լի:

Ցուցակում գրե՛ք տասը պատճառ Աստծուն երախտագիտություն հայտնելու համար: Որոշակի եղե՛ք: Այնուհետև յուրաքանչյուր պատճառի համար կարճ աղոթքով շնորհակալություն հայտնեք: Ամեն օր վարժվեք դրանում, և կտեսնեք, թե կյանքի հանդեպ ձեր վերաբերմունքի մեջ ինչպիսի փոփոխություններ կկատարվեն: Նման գործնական աշխատանքը ցույց է տալիս, թե որքան կարևոր է երախտագիտությունը Աստծո հետ մեր հարաբերություններում:

Հորեքշաբթի *սեպտեմբերի 5*

«Նոր երկրի» հանդեպ վերաբերմունքը (Ա Թեսաղոնիկեցիս 5.19-22)

«Հոգին մի՛ հանգցրեք: Մարգարեությունները մի՛ անարգեք: Ամեն բան փորձեցե՛ք, բարին ամուր բռնեցե՛ք: Ամեն կերպ չար բանից կացե՛ք» (Ա Թեսաղոնիկեցիս 5.19-22): Ինչի՞ մասին է այստեղ խոսում Պողոսը: Այդ խոսքերն ինչպե՞ս կարելի է մեր կյանքի նկատմամբ կիրառել: Ինչպի՞սի «չար բանից» մենք պետք է մեզ ետ պահենք: _____

_____

_____

Ա Թեսաղոնիկեցիս 5.12-15-ում Պողոսը խրատում է եկեղեցուն: 19-22 համարներում իր խրատների մեջ նա մարգարեության պարգևի թեման է շոշափում: Երկու արգելքները, որոնցով առաքյալն սկսում է այս հատվածը, շատ արտահայտիչ են: Փաստորեն, նա պատվիրում է դադարել Հոգին հանգցնել և մարգարեություններն անարգել (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 5.19,20): Ըստ էության, նա թեսաղոնիկեցիներին խնդրում է դադարել անել այն, ինչը նրանք մշտապես արել են:

Թեև մեզ հայտնի չէ, թե որոշակիորեն ինչպիսի խնդրի հետ Պողոսը գործ ուներ, նա ասես հավատացյալներին խորհուրդ է տալիս ավելի բաց լինել լույսի համար և, միևնույն ժամանակ, ստուգել այն՝ նրա իսկության մեջ վստահ լինելու համար (տե՛ս Բ Թեսաղոնիկեցիս 11.14):

Շատ տարբեր ձևերով կարելի է արժեզրկել մարգարեության պարգևը: Դրանցից մեկն էլ Հոգին նվաստացնելն է: Մենք դա անում ենք այն ժամանակ, երբ արհամարհում ենք ճշմարիտ մարգարեի աշխատանքը կամ դիմադրում նրան: Նայե՛ք հակառակությանը, որը եղել է և կա Էլեն Ուայթի պարգևի և ծառայության վերաբերյալ:

Մարգարեության պարգևն արժեզրկելու երկրորդ ձևն է՝ ընդունել ասածը, սակայն այն սխալ մեկնաբանել կամ կիրառել: Մենք կարող ենք մարգարեական լուրին բաց սրտով մոտենալ, սակայն այն սխալ կիրառել տարբեր իրավիճակներում: Մենք պետք է բավականին զգույշ լինենք դրանում: Մեր եկեղեցուն տրվել է հրաշալի մարգարեական պարգև, և մենք չենք ցանկանում այն ոչնչացնել մեր սխալ կիրառումով:

Մարգարեության պարգևի արժեզրկման երրորդ ձևն է՝ մարգարեական հեղինակությամբ օժտել մարդկանց կամ նրանց աշխատությունները, որոնցում չկա աստվածային այդ պարգևը: Եկեղեցին պետք է շատ անխոնջ աչալրջություն դրսևորի և համեմատի՝ արդյոք «նորահայտ մարգարեի» լուրը Սուրբ Գրքին համապատասխանո՞ւմ է, թե՞ ոչ:

Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ էլեն Ուայթի մարգարեական ծառայությունը ձեր կյանքի վրա: Ձեր պատասխաններով կիսվեք շաբաթօրյա դասին:

Հինգշաբթի ***սեպտեմբերի 6***

Վերջին օրերի սրբությունը (Ա Թեսաղոնիկեցիս 5.23-28)

Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 5.23,24-ը: Ի՞նչ է նշանակում սրբված լինել «բոլորովին» և «անարատ պահվել մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը»: Արդյոք դա մեզ հետ չպե՞տք է կատարվի արդեն հիմա: _____

_____

Այսօրվա հատվածում Պողոսը վերադառնում է աղոթքի լեզվին: Նույն ոճով և լեզվով է գրված նաև Ա Թեսաղոնիկեցիս 3.11-13-ը: Հիմնական թեման նույնպես համընկնում է. անարատ և սուրբ լինել երկրորդ գալուստի ժամանակ: Այստեղ Պողոսն անցում է կատարում նրանից, ինչ սպասվում է թեսաղոնիկեցիներից (Ա Թեսաղոնիկեցիս 5.12-22), այն բանին, ինչ Աստված է կատարում մեր մեջ (սրբությունը) և մեզ համար (երկրորդ գալուստը):

Հաճախ հավատացյալների կարծիքները տարբերվում են նրա վերաբերյալ, թե հատկապես ինչ է այս տեքստն ասում մարդկային էության և բնավորության մասին, որը նրանք կարող են ունենալ Հիսուսի գալուստի ժամանակ: Այս հատվածին մեր համառոտ ծանոթության մեջ մենք կկենտրոնանանք նրա վրա, ինչը կարելի է այս տեքստի հիման վրա ասել առանց կասկածելու:

Պողոսն ասում է, որ Աստված աշխատում է հավատացյալ մարդու անձի բոլոր տեսանկյունների վրա: Շնորհի այս ժամանակում, երբ Հիսուսի գալուստը մոտենում է, հավատացյալի կյանքի յուրաքանչյուր մասնիկը պետք է սրբվի: Ասելով «հոգի և շունչ և մարմին»՝ Պողոսը չէր ձգտում մարդկային արարածին գիտական ճշգրիտ սահմանում տալ (աստվածաշնչյան հասկացողության մեջ բանականությունը և մարմինը միասնական են և չեն դիտարկվում որպես առանձին մասեր): Պարզապես առաքյալը ցանկանում էր ասել, որ մեր մարմնի և հոգու յուրաքանչյուր մաս պետք է Աստծուն հնազանդեցվի: Մենք մեր մտքերի, զգացմունքների և գործողությունների նկատմամբ հսկողությունը պետք է լիովին հանձնենք Աստծուն:

Պողոսի աղոթքը տարածվում է ներկա ժամանակներից մինչև երկրորդ գալուստը: Հավատացյալները պետք է «անարատ պահվեն, մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը»: Պողոսն աղոթում է, որպեսզի նրանց լիովին նվիրաբերումն Աստծուն պահպանվի մինչև վերջ: Ըստ այս նամակի՝ թեսաղոնիկեցիները կատարելությունից հեռու էին, սակայն Պողոսն աղոթում էր, որպեսզի Հիսուսի հետ փոխհարաբերությունների միջոցով նրանք շարունակեն աճել շնորհում (տե՛ս նաև Հովհաննես 15.4-6):

Դուք ինչպե՞ս կարող եք և պետք է պատրաստվեք ամեն օր Տիրոջ վերադարձին:

Ուրբաթ *սեպտեմբերի 7*

Հետագա ուսումնասիրության համար

«Հիսուսը միշտ ուրախությամբ էր աշխատում: Մեծ համբերություն և հոգևորություն է պահանջվում առօրյա կյանքում աստվածաշնչյան հավատը մարմնավորելու, տանը և արհեստանոցում առօրյա աշխատանքի լարվածությանը դիմանալու և Աստծո փառքով միշտ ոգևորվելու համար: Քրիստոսը դրանում նույնպես օգնում էր Իր մոտիկներին: Նա երբեք այնքան կլանված չէր աշխարհիկ հոգսերով, որպեսզի ժամանակ կամ ցանկություն չգտներ մտորելու երկնայինի և հավիտենականի մասին: Նա հաճախ էր Իր ուրախությունն արտահայտում սաղմոսների և երկնային օրհներգերի միջոցով: Նազարեթի բնակիչները հաճախ էին լսում Աստծուն փառաբանություն և շնորհակալություն բարձրացնող Նրա ձայնը: Նա երգեր էր երգում, և դա երկնքի հետ Նրա շփումն էր: Հոգնած ընկերներին ոգևորում էր Նրա քաղցրալուր երգե-

ցողությունը: Նրա փառաբանությունը կարծես քշում էր չար ոգիներին և խունկի պես անուշահոտությամբ էր լցնում շուրջը: Այդ ժամանակ Նրան լսողների սրտերը թողնում էին աշխարհային աքսորավայրը և ձգտում դեպի երկնային հայրենիք» (Է.Ուայթ, Դարերի Փափագը, 73):

«Ոչինչ այնպես չի նպաստում մարմնի և հոգու առողջությանը, ինչպես շնորհակալության և փառաբանության ոգին: Դա մելամաղձությանը, դժգոհ մտքերին և զգացումներին դիմադրելու անկասկածելի պարտավորություն է: Նման պարտավորություն է նաև աղոթքը» (Է. Ուայթ, Բժշկության ծառայություն, 251):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում քննարկեք չորեքշաբթի օրվա դասի վերջին հարցի ձեր պատասխանները: Դիտարկեք նաև այսպիսի հարց. ինչպիսի՞ ազդեցություն ցույց թողեց Էլեն Ուայթի ծառայությունը մեր Եկեղեցու վրա ընդհանուր առմամբ և յուրաքանչյուր անդամի վրա՝ անհատապես:
2. Խորհե՛ք, թե ինչպես է որոշակի մշակույթում ընդունված իշխանության հանդեպ վերաբերմունքն ազդում եկեղեցու ղեկավարների նկատմամբ վերաբերմունքի վրա: Ձեր մշակույթն ինչի՞ն է ձեզ դրդում. անհարգալի՞ց վերաբերվել իշխանությանը, թե՞ չափազանց շատ երկյուղել նրա առջև: Մենք ինչպե՞ս կարող ենք պահպանել ճիշտ հավասարակշռությունը:
3. Ձեր տեղական համայնքն ինչպե՞ս կարող է նպաստել եկեղեցու նորադարձ անդամների աճին: Դրա համար ինչպիսի՞ կրթություն է պահանջվում:

Վերջաբան

Այս շաբաթվա ուսումնասիրվող հատվածում (Ա Թեսաղոնիկեցիս 5.12-27) Պողոսը տարբեր հարցեր է շոշափում, սակայն հիմնականում նա կենտրոնանում է եկեղեցու հոգևոր վիճակի վրա: Տեղական մակարդակում հավատացյալները միմյանց պետք է սովորեցնեն, ուրախության և երախտագիտության հոգի դրսևորեն: Նրանք պետք է բաց լինեն նոր, մասնավորապես մարգարեական ճշմարտության համար, սակայն, միևնույն ժամանակ, զգուշություն և խոհեմություն դրսևորեն նոր գաղափարները գնահատելիս: Ամենից առավել Պողոսն իր ընթերցողներին կոչ է անում կյանքի բոլոր բնագավառներում լիովին հնազանդվել Աստծուն և Հիսուսի մոտալուտ վերադարձը տեսադաշտից բաց չթողնել:

ԽՈՍՏՈՒՄՆԵՐ ՀԱԼԱԾՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Թեսաղոնիկեցիս 1.1-12, Հովհաննես 1.18, Հռոմեացիս 2.5, 12.19, Հայտնություն 16.4-7, 20.1-6, Հովհաննես 14.1-3:

Հիշելու համարը.

«Այս պատճառով էլ ամեն ժամանակ աղոթք ենք անում ձեզ համար, որ մեր Աստվածը ձեզ արժանի անի ձեր կոչումին և կատարի բոլոր բարի հաճությունը, և հավատքի գործը զորությունով» (Բ Թեսաղոնիկեցիս 1.11):

Հիմնական միտքը.

Հիսուսի երկրորդ գալուստը ողջ քրիստոնեական հույսի գագաթնակետն է:

Պողոսի ժամանակներում տեղեկությունը փոխանցելու ժամանակակից միջոցները չկային, այդ պատճառով հաղորդակցությունը շատ դանդաղ էր իրականանում: Օրինակ, եթե եկեղեցին ցանկանում էր Պողոսի հետ շփվել, սկզբում նա պետք է իմանար, թե որտեղ է գտնվում Պողոսը, այնուհետև նրան նամակ ուղարկեր: Դա բավականին դժվար էր: Եթե նամակը տեղ էր հասնում, առաքյալը պետք է պատասխանը գրեր և մարդ գտներ, ով այն կտաներ եկեղեցի: Այդ ողջ գործընթացը տևում էր մեկ ամիս: Իսկ այդ ընթացքում եկեղեցի կարող էին թափանցել մոլորություններ:

Ակնհայտ է, որ հենց դա էլ կատարվել էր թեսաղոնիկեցիների եկեղեցում, քանի որ այնտեղ նոր խնդիրներ էին առաջացել: Այդ խնդիրները կարող էին նույնիսկ խորանալ Պողոսի առաջին ուղերձը սխալ հասկանալու արդյունքում: Թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ ուղերձը Պողոսի կողմից փորձն էր՝ ուղղելու իրավիճակը: Դասի ժամանակ մեր ուշադրությունը կսևեռենք Պողոսի հետևյալ խոսքերի վրա՝ հավատացյալները կփրկվեն Աստծո կողմից Քրիստոսի փառավոր երկրորդ գալուստի ժամանակ: Դասը լրացուցիչ տեղեկություն է տալիս գալուստի բնույթի մասին:

Ցնծագին ողջույններ (Բ Թեսաղոնիկեցիս 1.1,2)

«Պողոս և Սիղուանոս և Տիմոթեոս. Թեսաղոնիկեցիների եկեղեցուն Աստված մեր Հորում և Տեր Հիսուս Քրիստոսում. շնորհք լինի ձեզ հետ և խաղաղություն Աստված մեր Հորից և Տեր Հիսուս Քրիստոսից» (Բ Թեսաղոնիկեցիս 1.1,2): Ինչպիսի՞ հույս և խոստում մենք կարող ենք տեսնել նույնիսկ նման հասարակ ողջույնի մեջ: Որքա՞ն աստվածաբանություն, հույս, խոստում կա այստեղ: Մենք ինչպե՞ս կարող ենք այս խոստումը և հույսը կիրառել մեր կյանքում:

_____

_____

Պողոսը, ինչպես միշտ խոսում է շնորհի և խաղաղության մասին: Մի կողմից, մի՞թե այս հասկացողությունները կապված չե՞ն: Մի՞թե Աստծո շնորհի և Հիսուսում ներում գտնելու խոստման գիտակցումը չպետք է հոգեկան խաղաղության բերեն մեր կյանքում: Որքան կարևոր է, որպեսզի, անկախ կյանքի իրավիճակներից, մենք ժամանակ գտնենք խորհելու փրկության պարգևի և շնորհի մասին, որոնք մենք ստանում ենք՝ չնայած մեր անարժանությանը: Էլ ինչպե՞ս կարելի է զգալ խոստացված խաղաղությունը: Մենք չպետք է նայենք մեզ, այլ Հիսուսին և նրան, ինչ մեզ պարգևված է Նրանում:

Համեմատե՛ք Ա Թեսաղոնիկեցիս 1.1-ը և Բ Թեսաղոնիկեցիս 1.1,2-ը: Մենք խոսքերի հերթականության և ընտրության մեջ նկատում ենք մի փոքր տարբերություն: Այդ տարբերության մեջ ինչպիսի՞ նշանակություն կարող է թաքնված լինել: _____

_____

_____

Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին և երկրորդ ուղերձների նախաբանների միջև միայն մեկ տարբերություն կա: Պողոսը փոխում է «Աստված Հորում խոսքը» (Ա Թեսաղոնիկեցիս 1.1) «Աստված մեր Հորում» (Բ Թեսաղոնիկեցիս 1.1) արտահայտությամբ: Դա ազգակցության երանգ է մտցնում: Ոմանք զգում են Հիսուսի հետ իրենց մոտիկությունը, միևնույն ժամանակ Հայր Աստծո առաջ վախ են զգում: Պողոսը թեսաղոնիկեցիներին հավաստիացնում է, որ նրանք ինչպես Հիսուսի, այնպես էլ Հոր հետ կարող են նույն վստահալից փոխհարաբերություններն ունենալ: Հիսուսն աշխարհ եկավ, որպեսզի մեզ ցույց տա Հորը:

Կարդացե՛ք Հովհաննես 1.18 և 14.7-11-ը: Ինչպիսի՞ վստահություն և հույս մենք կարող ենք ստանալ այս համարներից, հատկապես Բ Թեսաղոնիկեցիս 1.1,2-ի համատեքստում:

Երկուշաբթի *սեպտեմբերի 10*

Պողոսի գոհությունը (Բ Թեսաղոնիկեցիս 1.3,4)

Պողոսը սիրում էր բավականին երկար նախադասություններ կազմել: Բ Թեսաղոնիկեցիս 1.3-10-ի հատվածը մի նախադասություն է՝ հիմնականում կենտրոնացված Քրիստոսի երկրորդ գալուստի հետ կապված իրադարձությունների վրա: Սակայն նախադասության հիմնական միտքը սևեռված է ոչ թե երկրորդ գալուստի, այլ գոհության վրա. «Պարտ ենք ամեն ժամանակ Աստծուց գոհանալ ձեզ համար» (Բ Թեսաղոնիկեցիս 1.3):

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 1.3,4-ը: Հավատի վերաբերյալ ինչպիսի՞ կարևոր հոգևոր սկզբունք է այս տեքստերում պարունակվում: Ի՞նչ է կատարվում հավատի հետ, եթե այն չի աճում: ___

_____

_____

«Պարտ ենք ամեն ժամանակ Աստծուց գոհանալ ձեզ համար»: «Պարտ ենք» բայը ցույց է տալիս, որ Պողոսը պարտավորություն է զգում Աստծուն շնորհակալություն հայտնել թեսաղոնիկեցիների համար, քանի որ նրանց հավատն աճում է, այսինքն՝ ավելի ու ավելի է զորանում: Միևնույն ժամանակ, միմյանց հանդեպ նրանց սերը կրկնապատկվում է: Բնագրում երկու բայերը (աճում և շատանում) ներկա ժամանակով են գրված: Դա նշանակում է, որ թեսաղոնիկեցիների աճը հավատի և սիրո մեջ կայուն էր և հարատև: Նման աճը ցանկացած առողջ եկեղեցու հիմքն է: Եկեղեցին կարելի է բույսի հետ համեմատել, և եթե այն հոգևորապես չի աճում, նշանակում է, որ աստիճանաբար մեռնում է:

Իր ուղերձի երկրորդ և երրորդ գլուխներում Պողոսը նորից եկեղեցուն կշարադրի կառուցողական, տեղին քննադատություն: Սակայն նա գիտի, որ նրանց անհրաժեշտ է քաջալերանք լսել և աջակցություն ստանալ՝ քննադատությունն ըմբռնումով ընդունելու համար: Առաջին գլխում նա երկուսն էլ արտահայտում է:

Թեսաղոնիկեցիների եկեղեցին աջակցության և հավանության կարիք ուներ, քանի որ դեռևս հալածվում էր: Պողոսին հայտնի էին թեսա-

ղոնիկեցիների պայմանները, այդ պատճառով նա հատկապես գովում է վշտերի ժամանակ նրանց դրսևորած «համբերությունը»: Հավատի, հույսի և սիրո փոխարեն Պողոսը խոսում է նրանց հավատի, սիրո և համբերության մասին: Քանի որ «համբերությունն» այստեղ փոխարինել է «հույսին», դա Պողոսին մոտեցնում է առաջին գլխում երկրորդ գալուստի հետագա նկարագրությանը:

Հավատի և սիրո մեջ աճի արդյունքն այն է, որ վշտերի առջև թեսաղոնիկեցիների հոգու ուժը առաքյալի համար պատճառ է դարձել պարծենալ մնացած եկեղեցիների առջև, ուր նրանք այցելում էին: Թեսաղոնիկեցիները դարձան փորձությունների ժամանակ քրիստոնեական նվիրվածության օրինակ:

Փորձություններն ու վշտերն ինչպե՞ս են կրկնապատկում մեր հավատը: Միևնույն ժամանակ, ո՞վ չի պայքարել փորձությունների ժամանակ իր հավատի պահպանման համար:

երեքշաբթի *սեպտեմբերի 11*

Տառապանքը որպես վերջի նշան (Բ Թեսաղոնիկեցիս 1.5,6)

Բ Թեսաղոնիկեցիս 1.5-10-ի հատվածը հունարեն լեզվով ընթերցելիս շատ է հիշեցնում Հին կտակարանի որոշ մեջբերումներ (շատ քրիստոնյաների համար նորկտակարանյան ժամանակաշրջանի Աստվածաշունչը Յոթանասնից թարգմանությունն էր (Հին կտակարանի հունարեն թարգմանությունը, որը արված էր քրիստոնեական դարաշրջանից 3 դար առաջ): Թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ ուղերձում մենք ավելի շատ Հին կտակարանի մեջբերումներ ենք տեսնում, քան առաջինում:

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 1.5,6-ը: Ի՞նչի մասին է խոսում Պողոսը: Այս համարներում ինչպիսի՞ խոստումներ կան:

«Ապացույց» բառը նշանակում է ինչ-որ բանի «հաստատում» կամ որևէ բանի «հստակ ցուցում»: Ի՞նչ են ապացուցում քրիստոնյաների նկատմամբ հալածանքները (հ.4): Իհարկե, դրանք չեն վկայում Իր ժողովրդի նկատմամբ Աստծո դատաստանի մասին: Ընդհակառակը, դրանք ցույց են տալիս գալիք դատաստանը, որի ժամանակ Աստծո ժողովուրդը կարդարացվի, իսկ նրան հալածողները կստանան, ինչ որ ցանել են:

Դրա մեջ մեզ համար նույնպես լուր կա: Բռնությունը բռնություն է ծնում, և նրանք, ովքեր ուրիշների նկատմամբ ուժ են գործադրում, պետք է ապագայից վախենան: Աստծո դատաստանն ամեն ինչ իր

տեղը կդնի: Աստծո ժողովրդին հալածողները մի օր կիմանան Աստծո արդարադատության մասին: Իսկ նրանք, ովքեր իրենց հավատի պատճառով անարդարություն են հանդուրժում, վստահաբար կարող են Աստծո գալիք դատաստանին նայել: Այդ օրը բոլորին պարզ կդառնա, որ Աստված նրանց հանդեպ բարեհաճությամբ է վերաբերվել: Նոր Կտակարանը հավատացյալներին դրդում է շրջապատի հանդեպ ողորմություն, կարեկցանք և ներողամտության հոգի դրևսորել: Սակայն, երբ այդ գործողությունները դիմադրության, բանտարկության, անեծքի և ծեծի են բախվում, ապա արժե հիշել, որ անարդարությունը հավիտյան չի տևի: Դրա համար էլ Սուրբ Գիրքն Աստծո սուրբերին կոչ է անում համբերատար լինել (տե՛ս նաև Հայտնություն 14.12):

Այդ պատճառով Բ Թեսաղոնիկեցիս 1.5,6-ում Պողոսը հիշեցնում է հալածվող թեսաղոնիկեցիներին, որ գալիք «Աստծո արդար դատաստանը» կցուցադրի Տիրոջ բարեհաճ վերաբերմունքը նրանց հանդեպ այսօր, ներկայում: Ավելին, փորձությունների հանդեպ նրանց համբերությունը և հավատը հաստատում են, որ Աստված է նրանց ընտրել: Այսպիսով, քրիստոնյայի տառապանքը կարող է ուրախության առիթ լինել (Ա Թեսաղոնիկեցիս 1.6,7): Դա իրական ապացույցն է նրա, թե ում կողմում մենք կլինենք Քրիստոսի գալուստի ժամանակ: 5-րդ համարը նշում է, որ թեսաղոնիկեցիները Աստծո արդար դատաստանի արդյունքում կարժանանան Աստծո արքայությանը: 6-րդ համարը ցույց է տալիս նրանց հալածողների դատապարտումը և ոչնչացումը: Երկու դեպքում էլ դատաստանը մարդու ներկայիս վարքի հանրագումարն է տալիս:

Պատահե՞լ է արդյոք, երբ դուք անարդարացիորեն տառապել եք, այն դեպքում, երբ ձեզ չարչարողներն արժանի պատիժ չեն կրել: Եթե այո, ապա ի՞նչ մխիթարություն է տալիս ձեզ Աստծո դատաստանի խոստումը: Իսկ այժմ մտածեք. արդյոք դուք մարդկանց հետ վատ, անազնիվ վարվե՞լ եք, և դա ձեզ հաջողվե՞լ է (համենայն դեպս, մինչ այժմ): Եթե այո, ապա ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքն Աստծո վերջին դատաստանի խոստման հանդեպ:

Հորեքշաբթի *սեպտեմբերի 12*

Կրակը և ոչնչացումը (Բ Թեսաղոնիկեցիս 1.7-9)

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 1.7-9-ը: Ո՞րն է Հիսուսի երկ-

որոդ գալուստի ժամանակ մեղավորների ոչնչացման հիմնական պատճառը: Ինչպե՞ս մենք պետք է հասկանանք այս համարներն Աստծո մեծ սիրո, Նրա ողորմության և լիակատար ներման լույսի ներքո: _____

_____

_____

_____

Շատերին այս տեքստերի լեզուն շփոթեցնում է: Նրանք զգում են, որ «հատուցել», վերժ լուծել, պատժել՝ այս ամենը սիրո, ողորմության և շնորհի Աստծուն հարիր չէ: Սակայն Պողոսը շատ հաճախ է խոսում պատժի և հատուցման մասին (Հռոմեացիս 2.5, 12.19): Պողոսը պնդում է. կգա օրը, երբ Աստծո արդարությունն իր ողջ մեծությամբ կդրսևորվի: «Վրեժխնդրություն» թարգմանված բառը բնագրում նշանակում է պատճառած չարիքի համար տույժ և փոխհատուցման պատիժ: Այն արդարություն, օրինականություն, ճշմարտություն, արդարացում խոսքերի հետ նույն արմատն ունի: Այսինքն, դատաստանի ժամանակ Աստծո հատուցումը անարժանաբար հալածված արդարների արդարացումն է և արդարությունն ու օրենքը կոպիտ կերպով ոտնահարողների հատուցումը:

Իսկ ինչո՞ւ Աստծո կառավարման մեջ պետք է միայն ողորմություն լինի՝ առանց արդարադատության: Ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր լավ կառավարություն վաղ թե ուշ պետք է չարը սանձահարելու համար միջոցներ ձեռնարկի: Թեև ուժ գործադրելը միշտ չէ, որ բռնի է (ինչպես, օրինակ, այն դեպքում, եթե ձեզ կանգնեցնում են երթևեկության կանոնները խախտելու համար կամ ստուգում են, թե ինչպես եք հարկերը մուծում), որոշ դեպքերում, հատկապես, երբ հանցագործներն իրենք են բռնության դիմում, անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռնարկել: Հաճախ չարն իրեն չի դրսևորում միայն այն պատճառով, որ այդպիսի հնարավորություն նրան չեն ընձեռում: Որքան ուժեղ են չարությունը և դաժանությունը, այնքան ավելի հզոր ուժ է պետք նրանց սանձահարելու համար: Թեև մենք չենք կարող Աստծո կառավարումը համեմատել երկրային իշխանությունների հետ, սակայն արդարության սկզբունքը նշանակում է, որ կգա ժամանակ, երբ հարկ կլինի արարքների համար պատասխան տալ, և չարը կկանգնեցվի:

Ուղերձի այս հատվածի կերպարները հնարավոր չէ հաճելի անվանել, սակայն նրանք մեզ հավաստիացնում են, որ Աստված կանի հնարավոր ամեն բան, որպեսզի կասեցնի բռնությունը և հալածանքը:

Կարդացե՛ք Հայտնություն 16.4-7-ը և Դանիել 7.21,22-ը: Այս հա-

մարներն ինչպե՞ս են մեզ օգնում ավելի լավ հասկանալ Պողոս առաքյալի խոսքերը թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ ուղերձում: _____

_____

_____

_____

Հիսուսն Իր անձնական փորձից գիտի տառապանքների գինը: Մենք կարող ենք չկասկածել Նրա աստվածային արդարադատության մեջ, որի մեջ ծայրահեղություններ չկան: Եթե մենք ամեն ինչում Աստծուն վստահում ենք, ապա կարող ենք համոզված լինել, որ նրա արդարադատության մեջ դրսևորվելու են իմաստություն և ազնվություն, որոնք ներկա ժամանակում մենք չենք կարող ըմբռնել: Տվյալ հատվածի նպատակը անարգվածներին և հալածվողներին քաջալերելն է, այլ ոչ թե վրեժխնդրության ուրախություն առաջացնելը: Արդարադատության օրը մոտենում է: Մենք չպետք է արդարադատությունը վերցնենք մեր ձեռքը:

Հինգշաբթի ***սեպտեմբերի 13***

Փառաբանելով Քրիստոսին (Բ Թեսաղոնիկեցիս 1.10-12)

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 1.10-12-ը: Ի՞նչ են նշանակում «փառավոր լինի Իր սուրբերում» խոսքերը:

Այս շաբաթ ուսումնասիրվող հատվածը (Բ Թեսաղոնիկեցիս 1.3-10) Քրիստոսի երկրորդ գալուստի մասին մի շարք կարևոր մանրամասներ է բացահայտում: Երբ Հիսուսը վերադառնա, Նա չարագործներին կպատժի և տառապյալներին հանգիստ կպարգևի (տե՛ս Բ Թեսաղոնիկեցիս 1.6,7): Փրկիչը կգա երկնքից վեհ հրեշտակների ուղեկցությամբ (Բ Թեսաղոնիկեցիս 1.7): Նա կգա «կրակի բոցով» և դատաստան կանի նրանց վրա, ովքեր մերժել են Աստծուն և Հիսուս Քրիստոսի ավետարանը (Բ Թեսաղոնիկեցիս 1.8): Ամբարիշտները կոչնչացվեն (Բ Թեսաղոնիկեցիս 1.8,9), իսկ արդարները Քրիստոսին փառք կտան (Բ Թեսաղոնիկեցիս 1.10):

Երկրորդ գալուստի իրադարձությունները կփոխարինվեն հազարամյա թագավորությամբ, որի ընթացքում երկիրը հազար տարով լքված կլինի (Հայտնություն 20.1-6): Թեև ուսումնասիրվող հատվածում չի ասվում, թե ինչ կկատարվի արդարների հետ, Ա Թեսաղոնիկեցիս 4.16,17 տեքստերը հայտնում են, որ փրկվածները երկինք կբարձրանան՝ Հի-

սուսի հետ հանդիպելու Նրա գալուստի ժամանակ: Հովհաննես 14.1-3-ի հատվածում ասվում է, որ Հիսուսն արդարներին Իր հետ կվերցնի երկինք:

Պողոսը հավատացյալներին ինչպե՞ս է խորհուրդ տալիս Հիսուսի երկրորդ գալուստին պատրաստվել: Բ Թեսաղոնիկեցիս 1.11:

10-րդ համարում Պողոսը նորից է անդրադառնում արդարների վիճակին երկրորդ գալուստի օրը: 10-12 համարներում նկարագրված է Նրան հավատացող մարդկանց բնավորությունների մեջ դրսևորված Հիսուսի փառքը: Պողոսն ուրախանում է, որ Հիսուսի հայտնության ժամանակ իր աղոթքների և ջանքերի պտուղները կդրսևորվեն թեսաղոնիկեցիների մեջ (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիս 2.19,20): Այնուհետև առաքյալն անցնում է երկրորդ գլխին, որտեղ պնդում է, որ Տիրոջ օրը դեռ չի եկել, քանի որ դեռևս չկա ո՛չ վառվող կրակը, ո՛չ ամբարիշտների ոչնչացումը, ո՛չ Հիսուսի լիովին փառավորումը, ինչի վկաները պետք է դառնան բոլորը:

Ուսումնասիրվող հատվածում Պողոսն ուշադրությունը Հայր Աստծուց տեղափոխում է Հիսուսի վրա՝ երկու եզրույթներն էլ հերթով օգտագործելով: Ըստ Աստվածաշնչի՝ Հիսուսն Աստված է: Այդ վարդապետությունը մեզ համար շատ կարևոր է: Որքան վեհ է Հիսուսը, այնքան վեհ է Նրա կատարած փրկությունը և Աստծո մասին հստակ պատկերացումը, որը մենք ստանում ենք Քրիստոսի կյանքի, մահվան, հարության և վերադարձի մասին խորհելով: Եթե Հիսուսն իսկապես Աստված է, ապա Հայրը Նրա նման է:

Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել ապրել երկրորդ գալուստին սպասելով՝ չնայած մեր առօրյա գործերին: Ինչո՞ւ է այդքան հեշտ մոռանալ Նրա գալուստի մասին՝ ունայնության մեջ խրվելով: Մեր առօրյա գործերով զբաղվելիս մենք ինչպե՞ս կարող ենք սովորել հիշել այդ զարմանալի խոստման մասին, ժամանակ տրամադրել դրա մասին խորհելուն, դրան արժանի ուշադրություն հատկացնել և գիտակցել դրա ողջ կարևորությունը:

Ուրբաթ *սեպտեմբերի 14*

Հետագա ուսումնասիրության համար

«Աստվածաշունչը գրված է Սուրբ Հոգով ներշնչված մարդկանց կողմից, սակայն դա չի նշանակում, որ այն արտացոլում է Աստծուն բնորոշ մտածելակերպի և մտքերի արտահայտումը: Նրա ոճը մարդուն է բնորոշ: Աստված չի ներկայացված որպես գրող:

Մարդիկ հաճախ են ասում, թե այս կամ այն արտահայտությունը Աստծունը լինել չեն կարող: Սակայն Աստված հնարավորություն չի տալիս Իր մասին դատել Աստվածաշնչում շարադրված խոսքերի, բանականության, ճարտասանության մեջ: Աստվածաշնչի հեղինակները Աստծո գրագիրներն էին, բայց ոչ Նրա գրիչը...

Ոչ թե Աստվածաշնչի խոսքերը, այլ մարդիկ էին Աստծուց ոգեշնչված: Ոգեշնչումն ազդում է մարդու ոչ թե խոսքերի կամ արտահայտությունների, այլ հենց նրա վրա, և բանականությունը որոշակի մտքերով է լցվում Սուրբ Հոգու ազդեցության տակ: Իսկ որոշակի խոսքերը, որոնց մեջ մարմնավորվում են այդ մտքերը, անհատականության կնիքն են կրում: Այդպես են տարածվում աստվածային խրատները: Աստվածային բանականությունը և կամքը միավորվում են մարդկային բանականության և կամքի հետ. այդպիսով մարդու գրածը դառնում է Աստծո Խոսքը» (Է.Ուայթ, Ընտիր լուրեր, հ.1,21): «Քրիստոսի երկրորդ գալուստի վերաբերյալ խրատները, որոնք Պողոսը տվեց թեսաղոնիկեցիներին, լիովին համապատասխանում են նրա առաջվա վարդապետությանը: Սակայն նրա խոսքերը սխալ էին հասկացվել որոշ եղբայրների կողմից... Իր երկրորդ ուղերձի մեջ Պողոսը, մեկնաբանելով իր տեսանկյունը, փորձեց հստակություն մտցնել» (Է.Ուայթ, Գործք առաքելոց, 264):

Հարցեր քննարկման համար

1. Սուրբ Գրքի ճշմարտություններն ինչպե՞ս են ավելի լավ բացվում՝ յուրաքանչյուր խոսքի խորը վերլուծությա՞մբ, թե՞ ծավալուն թեմաների ուսումնասիրությամբ, որոնք ի հայտ են գալիս, երբ մենք մեծ հատվածներ ենք ընթերցում: Թե՞ ժամանակից և վայրից կախված՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը տեղին են: Դասարանում քննարկե՛ք պատասխանները:
2. Կարդացե՛ք էլեն Ուայթի վերը նշված մեջբերումը ոգեշնչման ներգործության մասին: Դա մեզ ինչպե՞ս է օգնում ժամանակ առ ժամանակ Աստվածաշնչում նկատվող «մարդկային գործոնը» հասկանալ:
3. Երկրորդ գալուստի մասին մտքերը ձեզ վախեցնու՞մ, թե՞ հույս են տալիս: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում Աստծո հետ ձեր փոխհարաբերությունների և Ավետարանը հասկանալու մասին:
4. Այն ճշմարտությունը, որ փորձությունները կարող են ձեր հավատը և բնավորությունն ամրացնել, թեև պարզ է, դուք ի՞նչ կասեիք այն մարդկանց, ովքեր փորձությունների ժամանակ ոչ միայն խստացել են, վշտացել և չարացել (այսինքն՝ փորձությունները չեն վեհացրել նրանց բնավորությունը), այլև լիովին կորցրել են հավատը:

Վերջաբան

Թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ ուղերձի առաջին գլխում Պողոսն ուրախանում է, որ անկախ վշտերից՝ թեսաղոնիկեցի հավատացյալները հավատարիմ են մնում: Նա քաջալերում է նրանց, ցույց տալիս մեծ փոփոխությունները, որոնք Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակ տեղի կունենան: Ինչ էլ որ հիմա կատարվի, մենք հույս ունենք, որ Աստված Իր աստվածային արդարադատությունը կվերականգնի:

ՀԱԿԱՔՐԻՍՏՈՍԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Թեսաղոնիկեցիս 2.1-12, Մատթեոս 24.1-14, Զաքարիա 3.1, Դանիել 8.8-11, Գործք առաքելոց 2.22:

Հիշելու համարը.

«Մեկը չիաբի ձեզ ոչ մի կերպով, որովհետև նա չի գա, եթե առաջ չգա ապստամբության մարդը՝ կորուստի որդին» (Բ Թեսաղոնիկեցիս 2.3):

Հիմնական միտքը.

Ուղղելով վերջին օրերի իրադարձությունների մասին թեսաղոնիկեցիների սխալ աստվածաբանական պատկերացումները՝ Պողոսը պատմում է վերջին օրերի խաբեության մասին:

Քաջալերումից և հորդորներից բացի, Պողոսը նաև գրել է վերջին օրերի իրադարձությունների մասին՝ ներառելով մեծագույնը՝ Հիսուսի երկրորդ գալուստը:

Այս շաբաթվա ուսումնասիրվող հատվածում Պողոսը խոսում է վերջին իրադարձությունների մասին, սակայն այս անգամ շեշտը մի փոքր տեղաշարժված է: Մի կողմից, առաքյալը, երբ նրանց հետ էր, այդ թեման մանրամասնորեն բացահայտեց թեսաղոնիկեցիներին: Մյուս կողմից, այս տեքստում նա հովվական նպատակ է հետապնդում, որն է՝ հանգստացնել նրանց և կոչ անել ավելի շատ համբերություն դրսևորել՝ կապված վերջին իրադարձությունների հետ, ինչպես նաև զգուշացնել այդ հարցի վերաբերյալ կեղծ ուսմունքների մասին:

Ուսումնասիրվող հատվածի սկզբում (Բ Թեսաղոնիկեցիս 2.1,2) մենք մի քանի հունարեն խոսքերի ենք հանդիպում, որոնք մեզ վերադարձնում են Ա Թեսաղոնիկեցիս 4.13-5.11-ին: Այդ խոսքերը Տիրոջ գալուստի (Ա Թեսաղոնիկեցիս 4.15), հավաքների (Ա Թեսաղոնիկեցիս 4.17) և Տիրոջ օրվա մասին են (Ա Թեսաղոնիկեցիս 5.2): Որոշ չափով տվյալ հատվածը բացատրում է այն, ինչ Պողոսը մինչ այդ էր ասել: Նրանում նա բացահայտում է ճշմարտությունները, որոնք այսօր անհրաժեշտ է իմանալ նաև մեզ:

Խնդիրը
(Բ Թեսաղոնիկեցիս 2. 1-3)

Ի՞նչ թեմա է բարձրացնում Պողոսը Թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ ուղերձում: Ինչպե՞ս են այդ խոսքերն այսօր մեզ վերաբերում: Ինչո՞ւմ են դրսևորվում խնդիրները՝ կապված վերջին ժամանակվա իրադարձությունները սխալ հասկանալու հետ (ժամկետների սահմանումը, գաղտնի համբարձման տեսությունը և այլն), թեև մենք ուրիշ դարաշրջանում ենք ապրում: Ի՞նչ խորհուրդ է տալիս Պողոսը: Բ Թեսաղոնիկեցիս 2.1-3: ___

_____

_____

_____

Հատվածում հստակ վկայություն չկա, որ եկեղեցին Հիսուսի երկրորդ գալստյան մասին հարցեր է տվել: Պողոսն ինքն է գիտակցում խնդրի առկայությունը և խոսում դրա մասին: «Նրա մոտ ժողովվելու» հայեցակարգը համահունչ է նախորդ ուղերձում Պողոսի գրածին (Ա Թեսաղոնիկեցիս 4.15-17):

Տվյալ հատվածում Պողոսի խոսքերը համահունչ են Հիսուսի կողմից հռչակված նախազգուշացմանը (Մատթեոս 24.1-13): Հավանաբար, թեսաղոնիկեցիները շփոթված էին ինչ-որ տեղեկությամբ, որը նրանք ստացել էին Պողոսի առաջին ուղերձից որոշ ժամանակ անց:

Պողոսը չի հստակեցնում նրանց շփոթմունքի կոնկրետ պատճառը: Նույնիսկ հնարավոր է, որ դա նրան հայտնի չէր: Հոգի ասելով (Բ Թեսաղոնիկեցիս 2.2)՝ ավելի շուտ նա նկատի ունի մարգարեական ուսմունքը, որն առաջացել է կա՛մ կեղծ մարգարեից, կա՛մ էլ Պողոսի առաջին ուղերձը չհասկանալուց: Հավատացյալների երկրորդ հնարավոր շփոթմունքի աղբյուրն է խոսքը, այսինքն՝ ուսմունքը, որը եկեղեցու անդամները փոխանցում էին մեկը մյուսին: Հիշատակելով ուղերձի մասին՝ «իբր թե մեզանից գրված», Պողոսը կա՛մ նկատի ուներ կեղծ նամակ՝ իր անունով ստորագրված, կա՛մ իր իսկական նամակի նկատմամբ սխալ վերաբերմունքը:

Հովվի արթուն լինելուց անկախ՝ գոյություն ունեն բազմաթիվ ճանապարհներ, որոնց միջոցով եկեղեցի կարող են թափանցել սխալ հայացքներ: Համայնքի անդամներին երբեմն ավելի հեշտ է ինչ-որ մեկի

ասածը ընդունել կամ լուրերին հավատալ, քան եռանդուն, ինքնուրույն քննել Սուրբ Գիրքը:

Ըստ ամենայնի, հենց վերջինս էր, որ Թեսաղոնիկեում խնդիրների առաջացման պատճառ դարձավ: Թեսաղոնիկեցիները շատ ճիշտ տեղեկություն ստացան Հիսուսի երկրորդ գալուստի և դրան նախորդող իրադարձությունների մասին: Սակայն նրանք հակված էին մեկ այս, մեկ այն ծայրահեղության մեջ ընկնել՝ խախտելով հավասարակշռությունը: Նրանք արժանի ուշադրություն չէին դարձնում Հիսուսի նախազգուշացմանը Նրա վերադարձի նշանները «հետապնդելու» վտանգի մասին (Մատթեոս 24.4-8): Արդյունքում նրանք մորմոքվում էին, որ Հիսուսի գալուստը ուշանում (Ա Թեսաղոնիկեցիս 4.13-15), իսկ այսօրվա գլխում մենք տեսնում ենք, որ նրանք հանգեցին եզրակացության, ասես վերջին իրադարձություններն արդեն սկսվել են:

Երկուշաբթի ***սեպտեմբերի 17***

Պողոսի հակիրճ պատասխանը (Բ Թեսաղոնիկեցիս 2.3,4)

Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին և երկրորդ ուղերձների միջև կարճ ժամանակահատվածի ընթացքում այդ եկեղեցու անդամները կորցրեցին Պողոսի կողմից գրված առաջին նամակի հստակ հասկացությունը: Նրանք եզրակացրին, որ երկրորդ գալուստը կա՛մ դռների մոտ է, կա՛մ ինչ-որ խորհրդավոր կերպով կատարվել է (Բ Թեսաղոնիկեցիս 2.2): Ո՞րն էր այդ խնդրի հակիրճ պատասխանը: Այն հետևյալն է. Դա պարզապես չի կարող պատահել, քանի որ դեռևս շատ բան պետք է կատարվի: Շփոթմունքը Թեսաղոնիկեում Պողոսին դրդեց գրելու վերջին իրադարձությունների վերաբերյալ ամենաերկար բացատրություններից մեկը:

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 2,3,4-ը: Այս համարներում Պողոսն ի՞նչ է ասում «մեղքի մարդու» մասին: Ինչպիսի՞ սկզբունքներ ենք մենք այստեղ գտնում, որոնք օգնում են հասկանալ, թե Պողոսն ինչի մասին է խոսում: _____

_____

_____

3-րդ և 4-րդ համարները բնագրում ոչ լրիվ մի նախադասություն է: Հունարեն բնագրում չկա «նա չի գա» արտահայտությունը: Պողոսը թվարկում է այն, ինչ պետք է կատարվեր մինչև երկրորդ գալուստը:

Սկզբում «նահանջ» կլինի (հունարեն ապոստասիա բառը), այնուհետև կհայտնվի «մեղքի մարդը»: Նրա հայտնվելը Բ Թեսաղոնիկեցիս 2.8-10-ում անվանված է Հիսուսի գալուստի նախօրեին սատանայի գործողությունը (ավելի մանրամասն կերպով այդ հարցը մենք կդիտարկենք չորեքշաբթի օրվա դասին): Սակայն այդ պղծության հայտնվելուց առաջ կլինի «խորհուրդի» և կասեցման ժամանակահատված (Բ Թեսաղոնիկեցիս 2.6,7):

4-րդ համարը նկարագրում է «մեղքի մարդուն», ով մինչև որոշակի ժամանակ ծածուկ է գործում, սակայն հետո բացահայտվում է: Նա հակազդում է Աստծուն, բարձրացնում է իրեն, նստում է տաճարում և իրեն Աստված հռչակում: Այս համարը լի է Հին և Նոր կտակարանների տեքստերից մեջբերումներով: «Հակառակորդ» բառը ցույց է տալիս սատանային Զաքարիա 3.1-ից: Այն, որ մեղքի մարդն իրեն Աստծուց բարձր է դասում և իրավունք վերապահում երկնային տաճարում Նրա տեղում նստել, ցույց է տալիս Դանիել 8-ի փոքր եղջյուրին: «Իբրև Աստված» արտահայտությունը ցույց է տալիս սատանային Եսայիա 14-ում և Եզեկիել 28-ում, ինչպես նաև աստվածահայհոյիչ զորությանը, որի մասին խոսում է Դանիելը 11.36-39-ում: Այսպիսով, մեղքի մարդու նկարագրի մեջ կան տարրեր, որոնք մատնանշում են թե՛ սատանային, թե՛ նրա պիղծ ներկայացուցչին երկրի վրա:

Ինչպե՞ս են ժամանակակից մարդիկ փորձում Աստծուց վեր դասել իրենից: Ինչու՞մ է դա դրսևորվում:

Երեքշաբթի ***սեպտեմբերի 18***

Խափանողը
(Բ Թեսաղոնիկեցիս 2.5-7)

Ըստ Պողոսի խոսքերի՝ ո՞ր երկու ուժերն էին ազդում նրա ժամանակի աշխարհի իրավիճակի վրա: Այդ համարներում ինչպե՞ս է բացահայտվում մեծ պայքարը: Բ Թեսաղոնիկեցիս 2.6,7: ___

_____

_____

_____

Զուգադրելով այս տեքստերը նախորդների հետ՝ մենք տեսնում ենք, որ Պողոսը երեք պատմական ժամանակահատված է ուրվագծում՝ սկսելով իր ժամանակներից և հասնելով մինչև օրերի վերջը: Վերջին ժամանակահատվածն սկսվում է երկրորդ գալուստի ժամանակ: Մինչ

այդ հայտնվում է մեղքի մարդը (Բ Թեսաղոնիկեցիս 2.3), որը հայտնի է նաև որպես «անօրենության մարդ» (Բ Թեսաղոնիկեցիս 2.8): Իսկ դրանից առաջ, խորհրդի և խափանելու ժամանակն է: (Բ Թեսաղոնիկեցիս 2.6,7):

Ո՞վ է «խափանողը» կամ զսպող ուժը այդ համարներում: Այն կա Պողոսի օրոք, պահպանում է օրենքը (անօրենությունը զսպող ուժը, հ.7), և այն բավականին զորեղ է, որպեսզի զսպի սատանայի գործը (հ.9):

Ըստ Նոր կտակարանի ուրիշ հատվածների՝ ի՞նչն է հետաձգում երկրորդ գալուստը: Մատթեոս 24.14, Մարկոս 13.10, Հայտնություն 14.6,7: _____

_____

_____

_____

Նոր կտակարանը բազմիցս վկայել է, որ երկրորդ գալուստին տանող իրադարձությունները կհաջորդեն Ավետարանի վերջնական համաշխարհային հռչակմանը: (Մատթեոս 24.14, Մարկոս 13.10, Հայտնություն 14.6,7): Ապա շատ հնարավոր է, որ Ինքն Աստված է այդ Խափանողը, ում մասին խոսում է Պողոսը: Աստված հետ է պահում վերջին իրադարձությունները, քանի դեռ յուրաքանչյուրը հնարավորություն չի ստացել լսել Բարի լուրը:

Մենք ինչպե՞ս պետք է սովորենք հույս դնել Աստծո զորության վրա, երբ ինչ-որ սխալ բան անելու փորձությունն ենք ունենում:

Չորեքշաբթի *սեպտեմբերի 19*

Հակաքրիստոսը բացահայտված է (Բ Թեսաղոնիկեցիս 2.8-10)

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 2.8-10-ը: Մենք ինչպե՞ս ենք հասկանում այդ իրադարձությունները: Ի՞նչ առանձնահատուկ կարևոր միտք է ընդգծում «ճշմարտության սերը չընդունեցին» արտահայտությունը:

Բ Թեսաղոնիկեցիս 2.3,4-ում ներկայացված է մեղքի մարդը: Քրիստոնեական ողջ պատմության ընթացքում նա ցանկանում էր Աստծո օրենքը ոչնչացնել (հատկապես շաբաթի պատվիրանը) և իրեն վերագրել Քրիստոսին պատկանող իշխանությունը: Դանիել 7.20-25-ում (փոքր եղջյուր) և Հայտնություն 13.1-7-ում (ծովից դուրս եկող գազանը) նույն ուժն է, որը գործում է հեթանոսական Հռոմեական իշխանության անկումից

հետո՝ իր մեջ զուգակցելով կրոնական և աշխարհիկ իշխանությունը, որը և հետապնդում է Աստծո սուրբերին: Պատմության ընթացքում միայն մեկ ուժ է, որը համապատասխանում է այդ բոլոր մարգարեության բաղկացուցիչներին: Դա պապականությունն է: Միջնադարից մինչև մեր օրերը շատ մեկնիչներ այդ իշխանությունն (կամ համակարգը) անվանում էին և անվանում են հակաքրիստոս: (Միայն մի քանի դար առաջ քրիստոնեության ճնշող մեծամասնությունը ետ կանգնեց նման մեկնությունից: Դա հետաքրքիր շրջադարձ է վերջին ժամանակների իրադարձությունների մեր ըմբռնման լույսի ներքո): Պապականության հետ նույնացումը համաձայնեցված է Թեսաղոնիկեցիներին ուղղված երկրորդ թղթի երկրորդ գլխի հետ, որ մեղքի մարդը պետք է արական սեռի ներկայացուցիչ լինի (անձ) և չեզոք սեռի (աշխարհիկ տիրապետություն):

7-րդ համարում նշված է նրա գործունեությունը՝ «անօրենության խորհուրդը»: Սակայն աշխարհի պատմության ավարտին, երկրորդ գալուստի նախօրեին Աստծուն և Նրա օրենքին ավելի ծավալուն և բացահայտ մարտահրավեր է նետվելու: Այս հատվածը և մնացած մասերը (Դանիել 7 և Հայտնություն 13) ցույց են տալիս, որ պապականությունը կարևոր դեր է խաղալու նաև ժամանակի ավարտին:

Պատմության ընթացքում կատարած Աստծո ո՞ր գործողությունները կկեղծվեն վերջին խաբեության ժամանակ: Համեմատե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 2.9-ը Դանիել 2.22-ի հետ:

Այսօրվա հատվածը վարագույրը բարձրացնում է՝ ցույց տալով, թե ով է կանգնած պատմության ընթացքում ժողովրդների մեջ գործող հակաքրիստոսի հետևում: Ինքը սատանան է վերջին ժամանակվա հեղինակը և գլխավոր դերակատարը: Երկրորդ գալուստի մոտեցման հետ մեկտեղ իրադարձությունները կհրահրեն նրան վերջին հուսահատ գործողություններին: Նա մի կողմ կգցի ամեն տեսակ զգուշավորություն և անձամբ կհայտնվի, որպեսզի Հիսուսի երկրային ծառայությունը կեղծի (նայե՛ք ուրբաթ օրվա դասը): Կեղծ հրաշքներով նա կփորձի մարդկանց ուշադրությունն Ավետարանից (Հիսուսի կյանքից, մահից և հարությունից) և նույնիսկ երկրորդ գալուստից շեղել:

Խորհե՛ք «ճշմարտության սերը չընդունեցին» արտահայտության մասին: Ինչպե՞ս կարելի է այդ սերը ընդունել: Ինչո՞ւ յուրաքանչյուրի համար, ով չի ցանկանում հատկապես վերջին օրերում ցանկացած հոգևոր խաբեության զոհ դառնալ, այդքան կարևոր է այդ սերն ունենալ: Ինչպե՞ս այսօր մենք կարող ենք ճշմարտության սերն ընդունել (հ.10):

Ճշմարտությունը և սուտը (Բ Թեսաղոնիկեցիս 2.10-12)

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 2.10-12-ը: Ինչո՞ւ է Աստված շատերին թույլ տալիս խաբվել: Ըստ նշված հատվածի՝ կորչողներն ի՞նչը մերժեցին: _____

_____

_____

Շատերին 11-րդ համարը տարակուսանքի մեջ է գցում և շփոթեցնում: Պողոսը հստակ կերպով պնդում է. «և նրա համար Աստված մոլորության ներգործություն կուղարկի նրանց, որ հավատան ստության» (Բ Թեսաղոնիկեցիս 2.11): Երբեմն այս տեքստի ակամա արձագանքը արտահայտվում է «Ինչպե՞ս ամեն ճշմարտության Աստվածը կարող է մոլորություն ուղարկել: Մի՞թե Նա կարող է այնպես գործել, ինչպես սատանան վերջին ժամանակում»: (Որպեսզի այս հարցերին պատասխան ունենաք, ուսումնասիրեք հետևյալ տեքստերը. Սաղմոս 81.12, 141.4, Եսայիա 63.17, Գործք առաքելոց 14.16,17):

Այսօրվա հատվածում Պողոսը մեզ թույլ է տալիս տեսնել Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարը, որն ավելի լայն է, քան երկրի և նրա պատմության խնդիրները: Սատանան Աստծուն մեղադրեց նրանում, որ Նա դաժան է, բոլորին վախեցնում է և խաբում: Աշխարհի պատմության վերջին ճգնաժամին Աստված մոլորություն «կուղարկի» անմաքուրներին ոչ թե նրա համար, որ Նա ցանկանում է խաբել նրանց, այլ որովհետև ամբարիշտներին թույլ կտա ընտրել սուտը ճշմարտության փոխարեն՝ այդպիսով բացահայտել նրանց ընդունած որոշումների հետևանքները (Բ Թեսաղոնիկեցիս 2.12): Նա պարզապես նրանց թույլ է տալիս հնձել իրենց սխալ գործողությունների պտուղները: Վերջին ժամանակների իրադարձությունները հստակ կերպով ցույց են տալիս սատանայի և նրա հետևորդների մտադրությունները:

Մոլորությունը հենց այն պահից է սկսվում, երբ մարդիկ մերժում են Հիսուս Քրիստոսի Ավետարանը: 10-րդ համարում ցույց է տրված, որ ամբարիշտները հրաժարվում են ճշմարտության սերն ընդունել: Ավետարանում փրկության պարգևը ենթատեքստ է՝ կանգնած ապոկալիպտիկ ուժերի հետևում, ինչը նկարագրված է Թեսաղոնիկեցիների երկրորդ ուղերձի երկրորդ գլխում: Իր ուսմունքով և գործելակերպով պապականությունն Ավետարանին հարված է հասցրել: Այդ աշխա-

տանքն այնքան ժամանակ կշարունակվի, մինչև որ տեսանելի կդառնա Բ Թեսաղոնիկեցիս 2.8-12-ում նկարագրված վերջին իրադարձություններում: Այսպիսով, Ավետարանի վերջին հռչակումը (Մատթեոս 24.14, Հայտնություն 14.6,7) հող է պատրաստում ինչպես վերջին դատաստանի, այնպես էլ վերջին ժամանակվա մոլորությունների համար:

Որքան էլ որ կարևոր թվան մեծ պայքարի քաղաքական և կրոնական դրսևորումները, քրիստոնեական պատմության ընթացքում բարու և չարի բաժանող վճռորոշ չափանիշը Հիսուս Քրիստոսի Ավետարանն էր, այլ ոչ թե քաղաքական իրադարձությունները: Հակաքրիստոսը բացահայտում է իր ճշմարիտ բնավորությունը՝ իրեն վերագրելով Հիսուսի կյանքի, մահվան և երկնային թագավորության արժանիքները: Այս դրամայի մնացած բոլոր մասնակիցները երկրորդական դերեր են խաղում: Ուշադիր կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 2.12-ը: Ո՞րն է հիմնական պատճառը, որ մարդիկ ճշմարտությունը չեն ընդունում: Այդ սկզբունքն ինչպե՞ս է արտահայտվում ձեր կյանքում: Այսինքն, անմաքրության «գրավչությունը», նույնիսկ աննկատ, ինչպե՞ս է ձեզ խանգարում մինչև վերջ բաց լինել ճշմարտության համար:

Ուրբաթ ***սեպտեմբերի 21***

Հետագա ուսումնասիրության համար

«Պողոս առաքյալը եկեղեցուն նախազգուշացնում էր իր օրերում Քրիստոսի գալուստին չսպասել: «Որովհետև նա չի գա, - ասում էր նա, եթե առաջ չգա ապստամբությունը, և հայտնվի անօրենության մարդը» (Բ Թեսաղոնիկեցիս 2.3): Մենք չենք կարող մեր Տիրոջ գալուստին սպասել նախքան հավատից մեծ նահանջը և «մեղքի մարդու» երկարատև իշխանությունը: «Մեղքի մարդը», ով նաև կոչվում է «անօրենության խորհուրդ», «կորստյան որդի» և «անօրեն», պապականությունն է, որն, ինչպես մարգարեությունն է ասում, պետք է աշխարհին տիրի 1260 տարի» (է.Ուայթ, Մեծ Պայքար, 356):

«Խաբեության մեծ դրամայի վերջին գործողությունը կդառնա սատանայի փորձը՝ իրեն Քրիստոսի տեղը դնել… Նրա ձայնը մեղմ է, խուլ և, միևնույն ժամանակ, բարեհնչյուն: Քնքշությամբ և կարեկցությամբ լի խոսքերով նա կկրկնի մի ժամանակ Քրիստոսի կողմից ասված երկնային շնորհի որոշ ճշմարտություններ, նա մարդկանց հիվանդությունները կբժշկի և այնուհետև, նմանակելով Քրիստոսին կհայտարարի, որ շա-

բաթը կիրակիով է փոխարինում, և բոլորին պատվիրում է սրբել իր կողմից օրհնված օրը...

Միայն Սուրբ Գիրքը ջանասիրաբար ուսումնասիրողները, ովքեր ընդունել են ճշմարտության սերը, պաշտպանված կլինեն գայթակղության ուժից, որը գերում է ողջ աշխարհը» (նույն տեղը, 624,625):

«Տանելով լուրը՝ խուսափեք անձնական հարձակումներից այլ եկեղեցիների՝ նույնիսկ հռոմեական կաթոլիկ եկեղեցու հասցեին: Աստծո հրեշտակները դավանաբանական տարբեր ուղղություններում տեսնում են մարդկանց, ում դիմելուց պետք է մեծ զգուշություն դրսևորել: Այդ պատճառով ուշադիր եղեք ձեր խոսքերի հանդեպ... Այդպիսի թեմաներում լռությունը խոսքերից ավելի պերճախոս է: Շատ մարդիկ խաբված են, այնպես որ քարոզեք ճշմարտությունը սիրո խոսքերով և հոգով» (Է. Ուայթ, Ավետարանչություն, 576):

Հարցեր քննարկման համար

1. Շատերն այսօր համարում են, որ պապականությունը փոխվել է, և ինչ-որ բանում դա այդպես է: Սակայն, ինչ վերաբերում է փրկության հիմնական հարցերին, այն առաջվա պես ձգտում է բռնատիրել այն ամենի վրա, ինչ Քրիստոսը կատարել է և կատարում է հանուն մեզ: Այն մարգարեության մեջ նկարագրված ուժն է մնում: Ինչպե՞ս կարող ենք մենք ամուր բռնել պապականության վերաբերյալ աստվածաշնչյան տեսակետը՝ միևնույն ժամանակ դրսևորելով քրիստոնեական սեր, համբերություն և նրբանկատություն:
2. Եկեղեցում մշտապես ի հայտ են գալիս մարդիկ, ովքեր վերջին իրադարձությունների նոր ժամկետներ են հաշվարկում, կազմում նոր սխեմաներ, նոր գաղտնի մտահաղացումներ՝ կապված այս կամ այն խմբի հետ: Մենք ինչպե՞ս պետք է այդ հարցերին արձագանքենք՝ միևնույն ժամանակ նոր լույսի համար բաց մնալով:

Վերջաբան

Վերջին իրադարձությունների հետ կապված թեսաղոնիկեցիների որոշ սխալ հայացքներն ուղղելով՝ Պողոսը մեզ այդ հարցի վերաբերյալ թանկարժեք ճշմարտություն է բացում: Մենք միշտ պետք է հիշենք. կարևորն այն չէ, թե երբ կսկսվեն վերջին իրադարձությունները, և ոչ էլ այդ իրադարձությունների մանրամասները: Կարևոր այն է, թե մենք մեծ պայքարում որ կողմը կգրավենք:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Թեսաղոնիկեցիս 2.13-3.18, Գործք առաքելոց 17.11, Ղուկաս 10.25-28, Մատթեոս 7.24-27, 18.15-17:

Հիշելու համարը.

«Ուրեմն եղբայրներ, հաստատ մնացեք և պահեք բռնեք այն ավանդությունները, որ սովորեցիք, թե՛ խոսքով և թե՛ մեր թղթով» (Բ Թեսաղոնիկեցիս 2.14):

Հիմնական միտքը.

Չնայած ապագայի մեծ և փառավոր խոստումներին՝ մենք ամեն օր մեր եկեղեցում բախվում ենք խնդիրների և ապրումների հետ: Թեսաղոնիկեցիների եկեղեցին բացառություն չէր:

Եկեղեցիները շատ բաներով բույսեր են հիշեցնում: Եթե բույսը չի աճում, այն մեռնում է: Այլ կերպ ասած, փոփոխությունները պետք է կատարվեն Աստծո մտադրությանը համապատասխան: Եկեղեցին, որը չի փոխվում և չի աճում, նույնպես կմեռնի: Սակայն ոչ բոլոր փոփոխություններն են դրական: Փոփոխությունները կարող են մեզ հեռացնել հենց մեզանից, մեր էությունից: Դրանք կարող են մթագնել Աստծո նպատակը, որը նա ունի մեզ համար: Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին պետք է շատ զգույշ լինի, որովհետև ներկա ժամանակի լուրը միայն մենք ենք հռչակում, և ուրիշ ոչ ոք: Դա շատ մեծ պատասխանատվություն է, որի մասին բոլորը՝ թե՛ ծառայողները, թե՛ շարքային անդամները, մշտապես պետք է հիշեն:

Հայտնության և միաբանության միջոցով Աստված եկեղեցին տանում է դեպի ավելի մեծ լույսը: Անցյալի լույսը եկեղեցուն օգնում է ճանապարհից չշեղվել փոփոխությունների անապահով ջրերում: Թեսաղոնիկեցիներին գրված Պողոսի ավարտական խոսքերն այդ կարևոր հարցում ոգեշնչված ձեռնարկ են:

Աստծո ընտրությանը հավատարիմները (Բ Թեսաղոնիկեցիս 2.13-17)

Տվյալ հատվածի լեզուն արձագանքում է Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձում Պողոսի աղոթքին: Այս երկու ուղերձների ավարտին անցնելով՝ Պողոսն ասես վերադարձել է նրան, ինչից սկսել է: Նա անհանգստանում է այն մասին, որ Թեսաղոնիկեի հավատացյալները չշեղվեն այն ճանապարհից, որի վրա նա նրանց կանգնեցրել է:

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 2.12-16-ը: Ինչո՞ւ է Պողոսն Աստծուն շնորհակալություն հայտնում թեսաղոնիկեցիների համար: Այս հատվածում նա ի՞նչ է խնդրում: Որքանո՞վ են առաքյալի խոսքերը վերաբերում մեզ, երբ վերջն այդքան մոտ է: ____

_____

_____

Թեսաղոնիկեցիների կյանքը Պողոսին վկայում էր, որ նրանք «փրկության համար» են ընտրված (բնագրում՝ «երախայրի փրկության համար«): Թեև փրկությունը պարգև է, հավատացյալն այդ փորձառությունը վերապրում է Հոգով սրբագործման և ճշմարտության հանդեպ հավատի միջոցով: Հավատացյալի կյանքը պարզապես անհատական փորձառություն չէ, այն հուսալի կերպով արմատավորված աստվածաշնչյան ճշմարտության մեջ:

Ահա թե ինչու էր Պողոսն այդքան հետաքրքրված, որպեսզի թեսաղոնիկեցիները հետևեն ուսմունքին, որը նրանց ուսուցանվել էր նամակներով և նրա հետ անձնական զրույցներում: Ժամանակի ընթացքում մարդը կարող է ճշմարտության ճանաչման մեջ թուլանալ, այդ պատճառով մեզ միշտ պետք է հաստատեն նրանք, ովքեր քարոզում և սովորեցնում են մեզ:

Երբ եկեղեցին նոր էր ծնունդ առնում, բանավոր խրատների ավանդությունը գերակշռում էր նամակայինի հանդեպ: Բառացի ավանդությունն ավելի քիչ է ենթարկվում չկանխամտածված աղավաղմանը: Ձայնի երանգը և շարժուձևը ավելի ճշգրտորեն են փոխանցում իմաստը, քան գրված խոսքերը: Այդ պատճառով քարոզչությունը հաղորդակցության մեթոդ է, որը երբեք չի հնանա: Սակայն գրավոր ավանդությունը, ինչպիսին են Պողոսի ուղերձները, ավելի քիչ են դիտավորյալ աղավաղվում նրանց կողմից, ովքեր հետապնդելով իրենց նպատակները, փոխում են Ավետարանը: Գրված խոսքը հուսալի, անփոփոխ չափանիշ

է, որով մարդը կարող է ստուգել քարոզում հնչած բանավոր լուրը: Գործք առաքելոց գրքում քաջալերանք է հնչում բերիացիների վարքի մասին, ովքեր ուշադիր լսելով բանավոր խոսքը՝ այն մանրամասնորեն համեմատում էին Սուրբ Գրքի հետ (Գործք առաքելոց 17.11):

Եվս մեկ անգամ կարդացե՛ք այսօրվա աստվածաշնչյան համարները: Աշխարհում մշտապես գործում են բազմաթիվ ուժեր, որպեսզի մեզ ճշմարտությունից հեռացնեն: Վերլուծե՛ք ժամանակի ընթացքում ձեր մեջ կատարված փոփոխությունները: Դրանք վկայում են ճշմարտության մեջ դանդաղ, կայուն արմատացմա՞ն, թե՞ դրանից դանդաղ, կայուն շեղման մասին: Այլ խոսքերով, ո՞ր ուղղությամբ է ձեր կյանքը շարժվում:

Երկուշաբթի *սեպտեմբերի 24*

Հավատը փորձության առջև (Բ Թեսաղոնիկեցիս 3. 1-5)

Ժամանակակից աշխարհում շատերը կասկածում են սատանայի գոյությանը: Նրանց հասկացողության մեջ նա պարզապես առասպել է, գիտական դարաշրջանից առաջ եղած նախապաշարմունքների վերապրուկ: Ոմանց թվում է, թե բարին և չարը պատճառա-հետևանքային կապի պատահական արդյունք են: Ուրիշները համարում են, որ դրանք որոշակի վայրերի և ժամանակի վերաբերող մշակութային ստեղծված հասկացողություններ են:

Սակայն Աստվածաշունչը հստակորեն ասում է, որ սատանան իրական է: Նրան ձեռնտու է, երբ աշխարհի որոշ մասերում ժխտում են նրա գոյությունը, կամ նույնիսկ ծիծաղում նրա վրա՝ ներկայացնելով պոզերով, կարմիր գույնի պատկերով: Նման մոտեցումը մարդկանց ստիպում է մտածել, թե իրականում սատանա գոյություն չունի, իսկ դա հենց այն է, ինչին նա ձգտում է: Շատերի սիրած պատճառաբանությունն է՝ «սատանան գայթակղեցրեց»:

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 3.1-5-ը: Թեև մեր հավատը մշտապես փորձությունների է ենթարկվում, Պողոսը հույս է արտահայտում: Ինչի՞ վրա է հիմնված այդ հույսը, և ո՞ր պայմանով մենք վստահությամբ կարող ենք դրան դիմել: Տե՛ս նաև Ղուկաս 10.25-28, Երկրորդ Օրինաց 6.24, 8.1:

Պողոսն այս հատվածը սկսում է աղոթքի խնդրանքով (ինչպես Ա Թեսաղոնիկեցիս 5.25-ում) այն մասին, որպեսզի ավետարանն արա-

գորեն տարածվի և մեծարվի նրա ծառայության միջոցով: Պողոսը թեսաղոնիկեցիներին խնդրում է նաև աղոթել, որպեսզի ինքն ազատվի «անօրեն և անզգամ մարդկանցից» (Բ Թեսաղոնիկեցիս 3.2): Այս արտահայտությունը ենթադրում է, որ առաքյալը խոսում է որոշակի մարդկանց մասին, ում նամակի հասցեատերերը ճանաչում էին:

Այնուհետև Պողոսը բառախաղ է օգտագործում (Բ Թեսաղոնիկեցիս 3.2,3): Ոչ բոլոր մարդիկ «հավատ» ունեն (վստահություն կամ նվիրաբերում Աստծուն), սակայն Տերը «հավատարիմ է» (հուսալի է, հավատ և նվիրաբերման ձգտում է ներարկում): Այդ հավատարիմ Տերն իսկապես արժանի է վստահության և կպահպանի մեզ չարից, այսինքն՝ սատանայից: Սատանան մեզանից ուժեղ է, սակայն բարի լուրն այն է, որ Աստված սատանայից ուժեղ է, և մենք կարող ենք Տիրոջ մեջ ապահովություն և ուժ ստանալ:

Պողոսն ավարտում է այս հատվածը (Բ Թեսաղոնիկեցիս 3.4,5)՝ ևս մեկ անգամ արտահայտելով իր հավանությունը թեսաղոնիկեցիների վերաբերյալ և նրանց համար աղոթելով: Նա վստահ է, որ նրանք այնպես վարվում են, ինչպես որ ինքն էր խնդրել, և որ հետագայում նույն կերպ կվարվեն՝ չնայելով սատանայի և նրա կողմից հրահրվող մարդկանց հակազդեցությանը: Իր աղոթքում առաքյալը ցանկություն է արտահայտում (Բ Թեսաղոնիկեցիս 3.5), որպեսզի Տերը նրանց ուշադրությունն ուղղի «Աստծո սիրո» և «Քրիստոսի համբերության» վրա:

Չնայելով Պողոսի տառապանքներին և փորձություններին՝ նրա նամակները միշտ լի են հավատով, հույսով և վստահությամբ: Չնայելով դժվար հանգամանքներին, որոնցում հաճախ հայտնվում ենք, մենք ինչպե՞ս կարող ենք սովորել հավատ, հույս և վստահություն ունենալ:

Երեքշաբթի ***սեպտեմբերի 25***

Սուրբ Գիրքն ու ավանդությունը (Բ Թեսաղոնիկեցիս 3.6-8)

Երբ Հիսուսն ապրում էր երկրի վրա, Նոր կտակարանը դեռևս գոյություն չուներ: Հիսուսի Աստվածաշունչը «Հին կտակարանն» էր: Սակայն ամենասկզբից Հիսուսի հետևորդներն իմաստնաբար էին վարվում, երբ Նրա խոսքերին հնազանդվում էին (Մատթեոս 7.24-27): Հիսուսի խոսքերն ու գործերը եկեղեցու համար հեղինակավոր ճշմարտություն էին նաև հետագա տարիներին (Ա Թեսաղոնիկեցիս 4.15, Գործք

առաքելոց 20.35, Ա Կորնթացիս 11.23-26): Այնուհետև Սուրբ Հոգու ոգեշնչմամբ առաքյալները ճշտորեն մեկնաբանեցին Հիսուսի խոսքերը և Նրա գործերի նշանակությունը (Հովհաննես 15.26,27, 16.13-15): Եվ նախքան քրիստոնյաների առաջին սերունդն ասպարեզից կհեռանար, առաքյալների նամակներն արդեն դիտարկվում էին որպես Հին կտակարանի մարգարեների գրվածքներին հավասարարժեք և կարող էին «Սուրբ Գիրք» անվանվել (Բ Պետրոս 3.2,16, Եփեսացիս 2.20):

Կարդացե՛ք Բ Թեսաղոնիկեցիս 3.6-8,14-ը: Ըստ այս տեքստերի՝ Պողոսն իր ճշմարտության հայեցակարգում ի՞նչ էր ներառում:

Այն ժամանակ, երբ Պողոսը Թեսաղոնիկե ժամանեց, վաղ եկեղեցին Հիսուսի խոսքերը և առաքյալների ուսմունքն ընդունում էր որպես բարձրագույն հեղինակություն: Նորկտակարանյան ժամանակներում «ավանդություն» բառը բացասական իմաստ չուներ: Այն կարող էր մատնանշել եկեղեցու հիշողությունն այն մասին, ինչ որ ասել և արել էր Հիսուսը, ինչպես նաև առաքյալների ուսմունքը բանավոր և գրավոր ձևով: Ավանդությունը նրանց համար գրեթե նույնն էր, ինչ որ մեզ համար Սուրբ Գիրքը: Այն կարող էր հնչել որպես հրաման, և ի պատասխան՝ հնազանդություն էր ակնկալվում:

Թեսաղոնիկեցիների համար ավանդությունն ավելին էր, քան պարզապես Պողոսի նամակները: Այն իր մեջ էր ներառում այն ամենն, ինչ Պողոսն էր ասում նրանց, երբ Թեսաղոնիկեում էր, ինչպես նաև նրա գործողությունները, որոնք նրանք պետք է ընդօրինակեին: Այն փաստը, որ Պողոսը ջանասիրաբար աշխատում էր, որպեսզի իր գոյությունը Թեսաղոնիկեում պահպանի, ոչ միայն ցույց էր տալիս նրանց հանդեպ իր հոգատարությունը (Ա Թեսաղոնիկեցիս 2.9), դա «ավանդություն» էր, որն, ինչպես առաքյալն էր ակնկալում, նրանք իրենց կյանքում կկիրառեին:

Թեսաղոնիկեցիների հետ մնալով՝ Պողոսն անգործ չէր ապրում, ուրիշի կերակուրն անվճար չէր ուտում: Նա «գիշեր, ցերեկ» աշխատում էր, որպեսզի ոչ մեկին նեղություն չպատճառեր (հ.8,9): Եվ Թեսաղոնիկեում յուրաքանչյուրն, ով այդ օրինակին չէր հետևում, անվանված է «անկարգությունով» վարվող մարդ (հ.11): Այսպիսով, Պողոսն անկարգ էր համարում ոչ միայն եկեղեցու համայնքի մարդկանց, ովքեր անգործ կյանք էին վարում, առաքյալն այստեղ ընդլայնում է այդ հասկացությունը՝ դրա մեջ ներառելով յուրաքանչյուրին, ով այդ ուսմունքին կամ առաքյալների օրինակին չի հետևում:

Նշված տեքստերը բացահայտում են թեսաղոնիկեցիների համար Պողոսի արարքների կարևորությունը: Թեև առաքյալը հենց

Տիրոջից էր ընդունել ծշմարտությունը (Գաղատացիս 1.1), նա իր կյանքով և արարքներով նույնքան համոզիչ էր վկայում, որքան և խոսքերով: Արդյոք մեր կյանքում արտացոլվո՞ւմ են մեզ պարգևած ծշմարտությունները:

Չորեքշաբթի *սեպտեմբերի 26*

Աշխատանքը և սնունդը (Բ Թեսաղոնիկեցիս 3.9-12)

Ինչպիսի՞ խնդրի բախվեց Պողոսը թեսաղոնիկեցիների եկեղեցում: Բ Թեսաղոնիկեցիս 3.9-12: _____

_____

Այս համարներում Պողոսը գործադրում էր նրանց ասված և որոշակի իրավիճակում ցույց տրված ավանդույթը: Եկեղեցու անդամների բավականին մեծ խումբ իրեն անհոգ էր պահում (Բ Թեսաղոնիկեցիս 3.6,11): Պողոսը խնամքով շոշափեց այդ խնդիրները նախորդ ուղերձներում (Ա Թեսաղոնիկեցիս 4.11,12, 5.14): Սակայն այստեղ նրա գրելաոճն ավելի է խստանում:

Պողոս առաքյալն ինչպե՞ս կարող էր եկեղեցուց պահանջել գոյությունը պահպանելու միջոցներ, կացարան և սնունդ: Սակայն Թեսաղոնիկեցիներին ուղղված առաջին ուղերձում մենք տեսանք, որ նա օրինակ թողեց նրանց «գիշեր, ցերեկ» աշխատելով, որպեսզի բեռ չլինի նրանց համար (Ա Թեսաղոնիկեցիս 2.9): Դա սիրո օրինակ էր: Սակայն, ըստ Բ Թեսաղոնիկեցիս 3.8-ի՝ նա «գիշեր, ցերեկ» աշխատում էր, որպեսզի նաև օրինակ ցույց տա, ինչպես յուրաքանչյուրը իր ուժերի ներածին չափով պետք է հոգ տանի սեփական կարիքները հոգալու համար:

Եթե Պողոսը միայն օրինակ թողներ, ոմանք կարող էին ասել, որ ավանդույթը պարզ չէ: Սակայն Պողոսը իր դիրքորոշումն արտահայտեց նաև խոսքերով: Թեսաղոնիկեցիների հետ անցկացրած կարճ ժամանակահատվածում նա հաճախ էր կրկնում լայնորեն հայտնի ասույթը. «Եթե մեկը չի կամենում գործել, թող չուտի էլ» (Բ Թեսաղոնիկեցիս 3.10):

Այս հատվածում Պողոսը չի քննադատում կարիքավորների օգնությանն ուղղված ջանքերը, այսինքն մարդկանց, ովքեր չեն կարող իրենց մասին հոգալ: Վերջիվերջո, Ինքը Հիսուսը նրանց հանդեպ կարեկցանքի մեծագույն օրինակը թողեց, ում կյանքի հանգամանքները նրանց անօգնական և կարիքավոր էին դարձրել:

Ընդհակառակը, Պողոսին անհանգստացնում էին եկեղեցու որոշ

մարդիկ, ովքեր կանխամտածված կերպով պարապ կյանքով էին ապրում: Դրանք ուրիշի գործերի մեջ մտնող, պարապ, աներես մարդիկ էին (Բ Թեսաղոնիկեցիս 3.11): Հին աշխարհի որոշ ժողովրդականություն վայելող փիլիսոփաների նման, այդ հավատացյալները թեթև կյանքը գերադասում էին աշխատանքից: Հնարավոր է, որ նրանք ժամանակ էին անցկացնում աստվածաբանական հարցեր քննարկելով կամ շրջապատողների վարքը քննադատելով՝ գոյությունը պաշտպանելու համար միջոցներ հայթհայթելու փոխարեն: Պողոսը նրանց պատվիրում է «մեր Տեր Հիսուս Քրիստոսով» իր օրինակին հետևել և խոսելու իրավունք ձեռք բերել՝ առաջին հերթին հոգալով սեփական կարիքները (3.12):

Զարմանալի է, որ նույնիսկ քրիստոնեական եկեղեցու պատմության ամենասկզբում Պողոսն ստիպված էր այդքան տարբեր խնդիրներ լուծել եկեղեցու անդամների միջև: Դա ինչպե՞ս պետք է մեր պատրանքները ցրի (հատկապես եկեղեցու նոր անդամների) այն բանի վերաբերյալ, որ մեր համայնքները լցված կլինեն կատարյալ մարդկանցով: Սակայն ամենակարևորն այն է, թե ինչպե՞ս մենք կարող ենք համայնքում տարածել դրական ազդեցություն՝ չնայելով սեփական սխալներին և թուլություններին:

Հինգշաբթի ***սեպտեմբերի 27***

Խստապահանջ սեր

Ըստ Մատթեոս 18.15-17-ի՝ եկեղեցին ինչպե՞ս պետք է վերաբերվի մեղանչած մարդուն, ով հեռացվել է անդամությունից:

Եկեղեցական կարգապահությունն ամենաբարդ խնդիրներից է, որին բախվում է տեղական համայնքը: Հաճախ ճանապարհից խոտորվածը եկեղեցու մյուս անդամի եղբայրն է, մայրը, որդին, քեռու աղջիկը կամ լավագույն ընկերը: Եկեղեցու որոշ անդամներ գերադասում են երբեք ոչ ոքի «կարգի» չհրավիրել, մյուսները ցանկացած առիթով պահանջում են խիստ միջոցներ ձեռնարկել: Ինչպե՞ս կարող է եկեղեցին Աստծո կամքն իմանալ այդքան մրցակցող հետաքրքրությունների և նախապատվությունների մեջ:

Մատթեոսի Ավետարանի 18-րդ գլխում հստակ ներկայացված է պարզ գործընթացը: Սկզբում՝ վիրավորող անձի և վիրավորվածի միջև անձնական զրույց: Համատեքստը ենթադրում է, որ նման զրույցի նպատակը պետք է լինի ներումը, եթե դա հնարավոր է (Մատթեոս 18.21-35): Այնուհետև եկեղեցու վիրավորված կամ տուժող անդամը պետք

է իր հետ մեկ կամ երկու հոգի վերցնի՝ խուսափելու շփոթմունքից այն բանի վերաբերյալ, ինչ որ ասվել է այս կամ այն կողմից: Միայն այն բանից հետո, երբ առաջին երկու քայլը բարեխիղճ կերպով արվել են, գործընթացը պետք է եկեղեցու քննարկմանը ներկայացվի: Այնուհետև, եթե խախտողը չի արձագանքում նույնիսկ եկեղեցուն, նա պետք է մնացածների համար լինի «ինչպես հեթանոս և մաքսավոր» (Մատթեոս 18.17), այսինքն՝ եկեղեցուց հեռացվի:

Սակայն ի՞նչ է նշանակում մարդուն վերաբերվել որպես հեթանոսի կամ մաքսավորի: Գոյություն ունի վերաբերմունքի առնվազն երկու տարբերակ: Մի կողմից, կարելի է խուսափել խախտում կատարողից այնպես, ինչպես հրեաներն էին խուսափում հեթանոսներից և մաքսավորներից: Մյուս կողմից, դա կարող է լինել կոչ, խախտողներին վերաբերվել այնպես, ինչպես Ինքը՝ Հիսուսն էր վերաբերվում հեթանոսներին և մաքսավորներին՝ կարեկցանք և ներում դրսևորելով:

Պողոսն ի՞նչ է ասում եկեղեցական կարգուկանոնի մասին: Բ Թեսաղոնիկեցիս 3.13-15:

Իհարկե, չկան երկու միանման մարդիկ, երկու միանման իրավիճակներ: Որոշ դեպքերում ներումը խախտողի սիրտը փափկացնում է և հաշտություն բերում եկեղեցում: Ուրիշ դեպքերում ավելի դաժանացած խախտում կատարողները կարող են արձագանքել միայն որոշակի խստության, որն ի վիճակի է մարդուն կանգնեցնել և ցույց տալ այս կամ այն գործողությունների հետևանքները:

Սակայն եկեղեցական կարգուկանոնն իրավունք չի տալիս որևէ մեկին վիրավորել: Ըստ 15 համարի՝ ճանապարհից շեղված մարդուն պետք է նախկինի պես վերաբերվել՝ որպես ընտանիքի անդամի: Եկեղեցին պետք է գիտակցի, որ խախտում կատարողը մնում է մարդ, «ում համար Քրիստոսը մեռավ» (Հռոմեացիս 14.15, Ա Կորնթացիս 8.11):

Եկեղեցու կարգուկանոնի հետ կապված ինչպիսի՞ փորձառություններ եք դուք ունեցել: Եկեղեցին ինչպե՞ս կարող է պահպանել հավասարակշռությունը մարդու վարքի հետ անհամաձայնության և նրան ընդունելու միջև:

Ուրբաթ *սեպտեմբերի 28*

Հետագա ուսումնասիրության համար

«Սակայն Թեսաղոնիկեի հավատացյալներին վրդովեցնում էին մարդիկ, ովքեր մոլեռանդական հայացքներ և ուսմունք էին

քարոզում: Ոմանք «անկարգ» էին վարվում, ոչ մի բան չէին անում, պարզապես դես ու դեն էին ընկնում: Չնայած նրան, որ եկեղեցին լավ էր կազմակերպված, և այն ղեկավարում էին երեցները և սարկավագները, որոշ կամայական և պոռթկուն մարդիկ չէին ցանկանում հնազանդվել ձեռնադրված ծառայողներին» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 261):

«Պողոսն իր հույսը չէր դնում միայն իր աշխատանքի վրա, որպեսզի Թեսաղոնիկեում իրեն ապահովեր… (Փիլիպպեցիս 4.16): Թեև նա այդ օգնությունն ստանում էր, նա ձգտում էր թեսաղոնիկեցիներին աշխատասիրության օրինակ տալ, որպեսզի ոչ ոք չհամարձակվի նրան շահախնդրության մեջ մեղադրել, և որպեսզի իր կյանքով հանդիմաներ նրանց, ովքեր ֆիզիկական աշխատանքի վերաբերյալ մոլեռանդական հայացքներ ունեին» (նույն տեղը, 348,349):

«Անձնական նվիրատվությամբ կամ եկեղեցական գումարներից տղամարդկանց և կանանց իրենց պարապության մեջ աջակցելու սովորությունը նպաստում է նրանց մեջ մեղավոր սովորությունների զարգացմանը: Մենք գիտակցաբար պետք է խուսափենք նման ճանապարհից: Յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա պետք է սովորի օգտակար աշխատանք կատարել: Յուրաքանչյուրը պետք է որևէ արհեստ սովորի: Դա կարող է լինել վրանների պատրաստում կամ այլ աշխատանք: Բոլորը պետք է սովորեն իրենց մարմնի անդամները օգտագործել որոշակի նպատակով: Աստված պատրաստ է և ցանկանում է կրկնապատկել բոլոր նրանց օգտակարությունը, ովքեր իրենց կվարժեցնեն աշխատասիրության» (ՅՕԱ Աստվածաշնչյան մեկնությունները, հ. 7, 912):

«Սատանան հույս ունի Աստծո ժողովրդի մնացորդին քաշել-տանել համատեղ կործանմանը, որը սպասում է մեր երկրին: Քրիստոսի գալուստի մոտենալուն զուգընթաց՝ նա ավելի ու ավելի վճռական և համառ կդառնա իր ձգտումների և ջանասիրության մեջ Աստծո զավակներին հաղթելու համար: Ի հայտ կգան տղամարդիկ և կանայք, ովքեր կհայտարարեն, որ նոր լույս և նոր հայտնություն ունեն, որոնք իրենցում մտադրված են կործանել հին սահմանամերձ սյուների նկատմամբ հավատը: Նրանց ուսմունքն Աստծո Խոսքի ստուգմանը չի դիմանա, բայց և այնպես հոգիները կխաբվեն: Կեղծ լուրեր կտարածվեն, և ոմանք կխճճվեն դրանց ցանցերի մեջ: Նրանք կհավատան այդ լուրերին, կկրկնեն դրանք, և այդպիսով կձևավորվի շղթա, որը և նրանց կկապի մեծագույն ստախոսի հետ» (Է.Ուայթ, Վկայություններ եկեղեցու համար, հ. 5, 259):

Հարցեր քննարկման համար

1. Մեր եկեղեցին ինչպե՞ս է պահպանում հավասարակշռությունն անցյալում սահմանված ճշմարտության նկատմամբ հավատարմության և նոր լույսին հետևելու միջև, որը մեզ համար բացում է Աստված: Մենք ինչպե՞ս կարող ենք որոշել, որ նոր «լույսն» իսկապես լույս է, այլ ոչ թե խաբեություն:
2. Մենք ինչպե՞ս ենք համագործակցում եկեղեցու անհնազանդ և խնդրահարույց անդամների հետ, ովքեր մշտապես ինչ-որ բանից դժգոհ են: Միևնույն ժամանակ, ինչպե՞ս արձագանքել նրանց, ովքեր իրական խնդիրներով են մտահոգված:
3. Թեսաղոնիկեցիներին ուղղված երկու ուղերձներից կատարեք սեփական եզրակացությունը: Արդյոք այդ լուրն այսօր արդիակա՞ն է մեր եկեղեցու համատեքստում:

Վերջաբան

Պողոս առաքյալի՝ թեսաղոնիկեցիներին ուղղված երկու ուղերձները ցույց տվեցին, թե ինչպես եկեղեցին պետք է ապրի ոչ հասարակ մթնոլորտում: Որքան էլ որ այդ ժամանակը տարբերվի մեր ժամանակից, Պողոսի քարոզած սկզբունքները հավիտենական են և անանց, քանի որ դրանք բացված են հենց Իր՝ Տիրոջ կողմից:

Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2012 թ. III եռամսյակ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Ջոն Պաուլին

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝ Արշալույս Փախչանյան
Վերստուգող՝ Մարթա Սիմոնյան
Գրական խմբագիր՝ Ալվարդ Մաղոյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան

ՇԴ դասերի էլեկտրոնային տարբերակը դուք կարող եք գտնել համացանցում (ինտերնետ), այցելելով www.elpidos.narod.ru կայքը:
Այստեղ Դուք կարող եք գտնել այլ նյութեր ևս: